



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ԱԽԱՐԱՅՐԻ ՈԳԻՆ ԱՆՄԵՌ Է.....	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	4
ՎԱՐԴԳԷՍ ՊԱՐՄՈՒՄԵԱՆ. «ԱՐՈՒԵՍՏԸ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽՕՍԻԼՆ Է»	4
ԿԻՊՐԱՀԱՅ	7
ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐ ՅԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ	7
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	8
ԱԶԳԱՅԻՆ ՉԱՓԱԶԱՆՅ ԼՈՒՐՋ ՀԱՐՑԵՐ.....	8
ՆԵՐԳԱՂԹ... ԱՐՏԱԳԱՂԹ	8
ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ, ՆՐԱ ԱՆՈՒԱՆ ՇՔԱՆՇԱՆԸ ՅԱՆՁՆՈՒԵՑ «ԱՐԱՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆԸ	12
ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՈՏԼՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԶՐՊԷՅՃԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ	16
ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՔԱՂԱՔ	18
ԵՐԵՒԱՆԱԲՆԱԿ ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒ ՍԸ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ	22
ՏԵՍԱԿԷՏ	24
«Գ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ»Ը ՄՇՈՒՇՆԵՐՈՒ	24
ԸՆԴՄԷՋԷՆ ԿԸ ԽԼՐՏԻ ՈՒ ԿԸ ՍՈՂՈՍԿԻ.....	24
ՓՈՂՈՑ ՆԵՏՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԲԵՂԵԱՆԱԿԱՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ.....	27
«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇԱՏ ԼԱՒ Է, ԲԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆ...».....	31
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ.....	33
ՊԷՏՔ Է ՎԱՌ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԱԶԱՆՔԸ՝ ԱՐՑԱԽՆ ՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.....	36
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	38
ՓՈՒՆՋ ՍԸ ՔԵՐԹՈՒՄՇԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	38
ՊԱՅՔԱՐԻ ՅԱՌԱԶԱՄԱՐՏԻԿ ԿԻՆԸ՝ ՄԵԶԱ.....	42
ՄԱՐԶՊԵՏԸ ԹԵՒԱԲԵԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ	46
ԵՐԱԶԻ ԵՒ ԼՈՅՄԻ ՓՆՏՈՏՈՒՔ	49
ԸՆԹԵՐՅՈՂԻ ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆԻ «ՀԵՐԿ ԵՒ ԲԵՐՔ», ՀԱԼԷՊ 2024	51
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	54
ՔԱՌԵԱԿՆԵՐ	57

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱԲԱՐԱՅՐԻ ՈԳԻՆ ԱՆՄԵՌ Է



Պատմութեան մէջ բախտորոշ ու ճակատագրական պահեր կան, երբ ժողովուրդի մը կեցուածքը կը դառնայ խորհրդանիշ եւ ազգային գաղափարախօսութեան հիմք: Կը դառնայ ապագայի ուղենիշ ու պատգամ իրերայաջորդ սերունդներուն:

Աւելի քան 1570 տարի առաջ մղուած Աւարայրը, գլխաւորութեամբ քաջարի սպարապետ Վարդան Մամիկոնեանի, դարձաւ խորհրդանիշ «Վասն հայրենեաց ու հաւատքի» ոտքի ելլելու միասնական վճռականութեան, մինչեւ վերջ պաշտպանելու համար ազգային ինքնութիւն

եւ ինքնիշխանութիւն, հայրենի հող ու խղճի ազատութիւն, մերժելով Տիգրանի հրովարտակը՝ հարաժարիլ քրիստոնէութենէն եւ ընդունիլ գրադաշտականութիւնը, ինչ որ ճամբայ պիտի հարթէր հայութեան ուժացման ու անհետացման:

Աւարայրի ճակատամարտը 451 թուականին մղուեցաւ ընդդէմ պարսկական զօրքին եւ գրադաշտական քուրմերուն: Պարսիկներու հսկայական բանակը զինուած էր ընտիր հեծելազօրքով՝ «Մատեան գունդով» ու մարտական փիղերով: Վարդան Մամիկոնեան, Յովսէփ Ա. Վայոց ձորեցին եւ Ղեւոնդ Երեց կը քաջալերեն թիւով շատ աւելի փոքր հայոց զօրքը՝ արիաբար մարտնչելու թշնամիին դէմ: Քաջ սպարապետ Վարդան Մամիկոնեան կը խրախուսէ հայոց բանակը, գոչելով՝ *«Չերկնչինք հեթանոսներու թիւէն, իսկ եթէ հասած է ժամանակը մեր կեանքը սուրբ մահով աւարտելու այս պատերազմին, մահը ընդունինք ուրախ սրտով, միայն թէ արիութեան ու քաջութեան մէջ վախկոտութիւն չխառնենք»:*

Հարկ կը զգանք ի միջի այլոց նշել որ Վարդան Մամիկոնեանը իր ժամանակի լաւագոյն զօրահրամանատարներէն էր: Անոր զօրավարական տաղանդի մասին համբաւը կը թեւածէր ե՛ւ Հայաստանի, ե՛ւ Հայաստանէն դուրս՝ Սասանեան ու բիզանդական արքունիքներու մէջ, ինչպէս նաեւ հոններու միջավայրին մէջ: Մեր միջնադարեան մատենագիրները՝ Մեսրոպ Վայոցձորեցին ու Վարդան Արեւելցին պահպանել են ռազմի դաշտին մէջ անոր տարած յաղթանակներու թիւը՝ 42 յաղթանակ, ըստ քաղաքագետ ու ռազմական պատմաբան Դոկտ. Արմէն Այվազեանի:

Վարդան Մամիկոնեանի առաջնորդութեամբ, բոլորը հաւաքաբար կ'ուղղուին մարտադաշտ, Տղմուտ գետի ափին: Եկեղեցի, բանակ, նախարարական վերնախաւ, մշակ ու գեղջուկ, զինուոր ու շարքային հայ մարդ, կը դառնան մէկ ամբողջութիւն, մէկ հոգի եւ մէկ մարմին, վասն հաւատոյ ու վասն հայրենեաց քաջաբար կռուելու, քաջ գիտնալով որ վտանգուած էր ազգային մեր ինքնութեան եւ գոյութեան միջնաբերդը:

Վարդանանց նշանաբանն է. *«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է»:*



Անհաւասար մարտին, հերոսաբար կը զոհուի նաեւ Վարդան Մամիկոնեան: Ճակատամարտը կը շարունակուի մինչեւ օրուան վերջը: Հայկական զօրքերը երեկոյեան կը քաշուին Տղմուտի ձախ ափը եւ կը նահանջեն երկրի խորքը՝ պայքարը շարունակելու նպատակով: Երեկոյեան մարտը կը դադրի, եւ հայոց բանակը կը վերադառնայ իր դիրքերը: Հայերը զգալի կորուստներ տուած էին: Հայերու զոհերուն թիւը կը հասնի 1036-ի: Շատ աւելի ծանր կորուստներ կը կրեն նաեւ պարսիկները՝ 3544 հոգի: Բայց ամենակարեւորը՝ թշնամին չէր հասած իր գլխաւոր նպատակին: Հայերը չէին ջախջախուած, պահպանած էին մարտական ոգին եւ լի էին պայքարը շարունակելու վճռականութեամբ:

Այստեղ կ'արժէ յիշատակել յատկապէս Աւարայրի ոգիով զինուած «Փափկասուն Տիկնայք Հայոց Աշխարհի», Մամիկոնեան տիկիներն ու մայրերը, որոնք իբրեւ տիպար հայուհիներ, ոգեշնչեցին Վարդաններն ու Վահանները, անոնց մէջ բոցավատ պահեցին հայրենեաց սէրը, քրիստոնէական ոգին եւ պատրաստ եղան իրենց կեանքը նուիրաբերելու ի պաշտպանութիւն հայ ինքնութիւնը պայմանաւորող սրբազան արժէքներուն: Եղիշէ պատմիչը հինգ հարիւրի չափ անուն առ անուն պանծացուցած է այն փափկասուն տիկիներն ու մայրերը, որոնք երբեք չտկարացան իրենց բարոյական կորովին, առաքիւնութեանց եւ նուիրումին մէջ ի պաշտպանութիւն մեր հաւատքին եւ հայրենեաց:

Աւարայրի ճակատամարտը կը կանխորոշէ հայ ժողովուրդի պայքարի ելքը: Պարսկական արքունիքը կը ստիպուի Մարզպանական Հայաստանէն շուտով ետ կանչել իր զօրքերը, հրաժարիլ հաւատափոխութեան միջոցով հայերը ձուլելու ծրագիրէն և ճանչնալ անոնց ներքին ինքնավարութիւնը:

Եղիշէ պատմիչը կը վկայագրէ. *«Ոչ թէ մէկ կողմը յաղթեց, եւ միւս կողմը պարտուեցաւ, այլ քաջերը քաջերու դէմ դուրս գալով, երկու կողմն ալ պարտութիւն կրեցին»:*

Աւարայրի ճակատամարտը Սասանեան Պարսկաստանի դէմ հայ ժողովուրդի մղած ազգային-ազատագրական պայքարի բարձրակէտն էր: Վարդանանք սերունդներուն կտակեցին՝ ազատ, ինքնուրոյն, ազգային-հոգեւոր բարձրագոյն արժէքներով ապրելու եւ յանուն անոնց անկոտրում պայքարելու ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԿԵՐՊԸ:

Յետագային, բազմաթիւ մարտեր եւ հերոսական էջեր կոթողուեցան հայոց պատմութեան մէջ, որպէս ուղեցոյց ու ներշնչման աղբիւր ունենալով Կարմիր Վարդանն ու անոր արի արանց զինակիցները: Աւարայրի ոգին փայլատակեց Զեյթունէն Սասուն, Հաճընէն Շապին Գարահիսար, Վան-Վասպուրականէն Մուսա լեռ եւ այլուր: Անոր ոգին սաւառնեցաւ Մարդարապտի կենաց մահու կռուին մէջ, Արցախի մէջ, հայրենասիրական ամեն խոյանքի մէջ:

Կոստան Զարեան մեծ մտածողը կ'արձանագրէ յատկանշականօրէն. «Եթէ մենք ուրանանք մեր անցեալը, դաւաճանենք մեզ, եւ հետեւելով իրապաշտ առաքեալների դաւանանքին, ընդունենք քաղաքակրթական շուկայում մեզ վիճակուած փոքրիկ խանութպանի դերը, մենք կը ստորագրենք մեր մահը...Ուստի, հայ լինելը պահանջում է մեծ ճիգ, հոգեկան կենդրոնացում, զոհաբերութեան ոգի, խոր հաւատք եւ առաքելական մոլեռանդութիւն»:

Այդպիսին էին Վարդանանք:



Մենք պիտի ունենանք այդ կարեւորագոյն որակները՝ մեծ ճիգ, հոգեկան կեդրոնացում, զոհաբերութեան ոգի, խոր հաւատք եւ առաքելական մոլեռանդութիւն, դէմ դնելու մեր բարդ ժամանակներու համաշխարհայնացման ազգակործան յորձանքին, նոր Տիգրաններու հայութիւնը կործանելու ցեղասպանական նկրտումներուն: Պիտի ունենանք միասնականութեան ոգի, քաղաքական աննկուն կամք եւ հզօր մարտունակութիւն՝ ՈԶ ըսելու թուրք-ատրպէյճանական ստրկարար ու հայաջինջ ռոնձգութիւններուն եւ մէկ մարդու պէս պաշտպանելու մի բուռ մնացած հայրենեաց սուրբ հողը, ազգային մեր արժէքները, ազգային մեր իդէերն ու իրաւունքները, հաւատքը, ազգային մեր ինքնութեան բաղադրատարրերը ընդ հուր եւ ընդ սուր: Եւ Աւարայրի օրերուն նման, թշնամի ն ու թշնամիները հարկադրաբար հաշուի կը նստին մեզի հետ:

Աշխարհաքաղաքական եւ քաղաքակրթական բարդագոյն մեր ժամանակներուն, հրամայական է վերամկրտուիլ Վարդանանց եւ Աւարայրի տեսլականով ի Հայաստան եւ ի սփիւռս, հաղորդակից ըլլալ անոնց անմեռ պատգամին, որ կը հնչէ դարե դար որպէս Մարդարապատեան օրերու զանգերու դողանց ու ահագանգ:

Հիմա ալ, ինքզինք յարգող եւ իր ինքնութեան ու իրաւունքներուն համար պայքարող ազգն ու երկիրը միայն կրնան ապագայ ունենալ:

«Դարերը կ'անցնին, բայց Վարդանը քաջ,

Բայց Վարդանը սուրբ կ'երթայ միշտ յառաջ»:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶԲՈՅՑ

ՎԱՐԴԳԷՍ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ. «ԱՐՈՒԵՍՏԸ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԽՕՍԻԼՆ Է»

Հարցազրոյցը վարեց
Զարմիկ Պօղիկեան



Քանդակագործ Վարդգէս Պարսումեանի հետ ստորեւ ներկայացուած զրոյցով խօսեցանք մշակոյթի, արուեստի եւ հաւաքական ճիգով զանոնք երիտասարդութեան հետաքրքրութեան շրջաժիրին մէջ պահելու մասին: Արուեստագէտը ունի քանդակագործութեան եզակի նմոյշներ, որոնցմէ քանի մը պատկեր կը կցենք հարցազրոյցին: Դասաւանդած է «Արշիլ Կորքի» եւ «Մարեան» կերպարուեստի ուսումնարաններէն, Համազգայինի Հայագիտական Հիմնարկէն եւ Հալեպի պետական համալսարանի գեղարուեստի համալսարանէն ներս:



-«Գանձասար»- Պարոն՝ Վարդգէս, քանդակագործութեան հանդէպ ձեր հետաքրքրութիւնը ուրկէ՞ սնանած է:

-Վարդգէս Պարսումեան- Հայրս քանդակով զբաղած է: Անիկա իր ամենօրեայ զբաղումը չէ եղած, սակայն տեսած եմ, թէ ինչպէ՛ս մերթ ընդ մերթ քանդակ կը գործէր: Երբ մայրս յաճախ մատիտ կու տար, որ օգտագործեմ դասերուս համար, կը գծէի գրելու փոխարէն: Գծելով նկատեցի, որ հակում ունիմ նկարչութեան ընդհանրապէս: Աւելի ուշ մայրս զիս փողոցէն ներս բերելու համար Զաւէն Պարտազճեանին մօտ դրկեց՝ գծագրութիւնս բարելաւելու: Այդ ընթացքին Զաւէն Պարտազճեանը 2-3 անգամ տեսած ըլլալու եմ միայն: Զաւէնը ազատ կը ձգէր գծողը: Ինծի առանձին սենեակ մը տրամադրեց ու սկսայ շարժապատկերներու հերոսներ գծել: «Տիգրի»-ի գիրքը յանձնեց ինծի, որպէսզի տրվիմ, թէ շարժապատկերի հերոսներ ինչպէ՛ս կը գծեն փուլ առ փուլ: Այդ մէկը ինծի համար յայտնաբերութիւն մը եղաւ: Հետագային՝ 1981-ին, «Սարեան» կերպարուեստի ուսումնարան յաճախեցի: 13 տարեկան էի, երբ սկսայ լրջօրէն գծել: Դասատուս՝ պրն. Սարգիսը, որոշ չափով ուղղեց զիս: Երկրորդական ուսումնաւարտելէ ետք Հայաստան մեկնեցայ մասնագիտական քանդակագործութեան մէջ, ծաւալը, տարածութիւնը ինծի համար արժէք ունէին: Տափակութենէ չէի ախորժիր: Անշուշտ կրթութիւնը քանդակագործ չի դարձնէր ուսանողը, հետեւաբար ինքնաշխատութեամբ, պրպտումներով զարգացուցի հետաքրքրութիւններս ու մասնագիտացման ուղի մտայ: Թէ որքանո՞վ արուեստագէտ եղայ, Աստուած գիտէ...

-«Գ.»- Հալէպի մէջ, որպէս արեւելեան քաղաք, քանդակագործի աշխատանքը դժուար կը համարէ՞ք, նկատի ունենալով որ այս արուեստը արաբական միջավայրերու մէջ շատ ընդունելութիւն չի գտներ:

-Վ.Պ.- Արուեստ կիրարկելը ամէն տեղ դժուար է, որովհետեւ ժողովուրդին ամէնէն չնչին տոկոսն է, որ արուեստով կը զբաղի: Ան որ ալ կը զբաղի, կը հաւատամ, որ Աստուածային մղում մը ունի իր մէջ, միայն իր կամքով չէ որ կ'ուղղուի արուեստի մարգ: Միայն իր կամքով առաջնորդուողը կը ձախողի, որովհետեւ արուեստը ֆանդազիա մը չէ, ուղեղիդ մէջ կը ծնի ու քեզ կը մղէ:

Ներկայ աշխարհի ողջ քաղաքականութիւնը հակամշակութային է: Եթէ լրջօրէն արուեստով պիտի զբաղիս, լուրջ հարցեր պիտի յաղթահարես, որովհետեւ մարդիկ լուրջ արուեստ չեն փնտրէր ընդհանրապէս, այլ՝ սպառողական արտադրանք կ'ուզեն:

-«Գ.»- Մշակոյթը, անոր պահպանումը որքանո՞վ կարելոր էն համայնքի մը ազգային դիմագիծը պահելու համար:

-Վ.Պ.-Մշակոյթը սահմանելը բարդ բան է: Փոքր տարիքէս հօրս հետ կը վիճաբանէի կրօնք ու մշակոյթ հասկացութիւններու սահմանման շուրջ: Տարիներու ընթացքին պեղելով ըմբռնած եմ, որ եթէ մարդ արարածը անտառի մէջ թողուս, շրջապատը կապկելով վայրենի պիտի դառնայ, ուրեմն մարդ պէտք է նկարագիր ունենայ եւ այդ նկարագիրը ընկերութեան մէջ կը ձեւաւորուի: Մարդ իր էութեամբ ստեղծագործ է, սակայն այդ շնորհքը իր մէջ պահուած բան մըն է: Կրնայ ըլլալ արտաքին աշխարհը կապկելով դուրս չելլէ: Մարդկային ընկերութիւնը իր մասնագէտները կ'ունենայ: Մասնագիտացած մարդիկ կ'ըլլան տարբեր բնագաւառներու մէջ: Հայրս կ'ըսէր գիւղատնտեսութիւնն ալ մշակոյթ է: Գիւղատնտեսութեան գործիք պատրաստելն ալ մշակոյթ է: Այն ինչ որ մարդու զգայարանները կը զարգացնէ՝ մշակոյթի մաս կը կազմէ, կը զարգացնէ, բայց հետեւողական ճիգով եւ ծրագրուած աշխատանքով միայն: Եթէ գիւղացի ես եւ գործիք մը շինելու համար ջանք չես թափեր, նախնիներուդ բահը կը գործածես, կը նշանակէ լուրջ խնդիր մը ունիս: Կ'արտադրես, բայց մշակոյթը կը կապկես տակաւին:

Մշակոյթ ստեղծող չես: Կապկելը բնականաբար պիտի շարունակուի, նոյնիսկ անգիտակցաբար: Բայց երանի անոնց, որոնք չեն կապկեր, այլ նորութիւն կը բերեն: Արուեստի մէջ երբ կապկող ես, դժուար թէ ստեղծագործ եւ ինքնուրոյն դառնաս: Ինքնուրոյն



կ'ըլլաս, երբ սեփական միտք ունիս եւ սեփական սրտիդ ձայնը կը լսես, կը սկսիս անձոյ յայտնաբերել: Հետեւաբար անձիդ խնդիրները կը տեսնես ու կը սկսիս այլոց խնդիրներն ալ հասկնալ ու նկատել: Մարդ արարածը եթէ չկրթօրի, չի զարգանար, կը մնայ կենդանական մակարդակի վրայ կամ աւելի վար ալ կ'իջնէ: Մշակոյթի գործերը պահպանելը, տեղ մը հաւաքելը ճիգ կը պահանջէ: Պատմութեան մէջ որոշ շրջաններ եղեր են, երբ որոշ մարդիկ մշակոյթ պահպանելով, զարգացնելով զբաղեր են, իսկ ուրիշներ՝ կապկողներ դարձեր են:

Կապկողը հարց չէ, բայց երբ բան մը կապկող, անոր արժէքն ու իմաստը չես հասկնար: Արժէքը հասկնալու համար պէտք է մշակոյթի մարդ ըլլաս, ոչ թէ արուեստի: Եթէ կապկողական է, փոխանցում է: Ձեռագիր մատեանը կը պատճենահանես, որպէսզի փոխանցուի եւ չկորսուի: Մարդ կայ ձեռագիրն անգամ չ'ընդօրինակեր, գրուի չունի: Մշակոյթը իրական է, գիտական է, հեքիաթ չէ: Մարդոց հաւատացնելն է, թէ աչքը կամ ուղեղը զարգացնելը ինչ բանի կը ծառայէ: Մարդ կայ կը շեշտէ, որ դրամն է կարելորդ: Եթէ դրամը կարելորդ է, ուրեմն մշակոյթին խօսք չմնաց: Ուրեմն ամէն ինչ կը ծախուի: Երկիրն ալ կը ծախուի, հայրդ ալ կը ծախուի: Ամէն ինչ ապրանք է, կը գնուի եւ կը ծախուի: «Ուր հաց հոն կաց» տրամաբանութեամբ: Այսինքն դուն մշակութային խնդիր չունիս, դուն ձրիակեր ես, տգրուկ:

Կ'երթաս հոն, ուր հանգիստ պայմաններ կը ստեղծուին: Եթէ անհատը այդ տեսակի է, ուրեմն մշակոյթի մասին կարծիք յայտնելու, հրահանգներ արձակելու իրաւունք չունի: Մշակոյթին հետ երբ կազմակերպուածօրէն գործ չես ունենար, կը նշանակէ իրաւունք չունիս անոր մասին խօսելու: Այնքան ատեն որ մարդիկ, խումբեր իրարու վրայ վստահութիւն չունին, մշակոյթ չի կրնար ծնիլ, այլ պարզապէս կը շարունակուի: Ատկէ գէշն ալ կրնայ ըլլալ, երբ եղածն ալ չշարունակուի:

Մենք այսպիսի հոսանքի մէջ կ'ապրինք ներկայիս: Մշակոյթը անհատներն են, ինչպէս օրինակ՝ Պարոյր Սեւակը: Անոնք ժողովուրդը դաստիարակող դէմքեր են: Բայց երբ նմաններուն թիւը կը նուազի, կամ պետութիւնը բացարձակապէս չի զօրակցիր գրողներուն, արուեստագետներուն, երկիրը կը պարպեն, կը թալանեն ու թոյլ կու տան, որ իրարանցում ըլլայ ու որոշ մարդիկ իշխանութեան հասնին, գործ աշխատին եւ զիրենք քննադատող չըլլայ: Մշակոյթը, հետեւաբար, զոհողութիւն կը պահանջէ գոյատեւելու ու զարգանալու համար, իսկ մշակոյթի մարդը այս գործին սիրտ եւ կեանք տուողն է:

-«Գ.»- Ձեր կարծիքով նոր սերունդը ինչպէ՞ս կարելի է բերել, մօտեցնել մշակոյթին: Լոկ կառոյցներ ունենալը բաւարար է՝ արուեստը, մշակոյթը պահելու համար:

-Վ.Պ.- Կառոյցները շատ յաճախ պարապ կը մնան: Համազգայինը մտաւորական մարդիկ հիմնած են: Երբ անոնք մահացան, իրենց աշակերտները յաջողեցան իրենց վարպետներէն սորվածը փոխանցել, բայց որակի անկում եղաւ: Երբորդ սերունդը աւելի ինկաւ: Սփիւռքը հիմա պարպուած է ստեղծագործ ապրելակերպէ: Մարդոց գերագոյն խնդիրը ուտել-խմել եւ կենցաղը շարունակելն է: Իսկ եթէ մարդ մշակութային գործէն դրամ չշահի, դժուար է զինք բերել մօտեցնելը: Հետեւաբար պատասխանատու կազմը որքան աշխատասէր է եւ նպատակասլաց, այնքան իր չորս կողմը մարդ կը հաւաքէ, որովհետեւ կը հաւատայ որ այդ է աշխատանքի իսկական ձեւը: Գիտելիք փոխանցելը հմտութիւն կ'ուզէ: Զրոյցները կարելորդ բաներ են: Երբեմն ճիգեր եղած են համախմբելու մարդիկ: Պէտք է մարդոց իրարու մօտեցնել եւ հաւաքել:

Օրինակ, մեր եկեղեցին ոչ միայն մարդու հոգեւոր կրթութեամբ պէտք է զբաղի, այլեւ մարդոց մշակումով: Եթէ եկեղեցին չ'ընէ այդ աշխատանքը ու միայն ծիսակատարութեան վայր դառնայ, չի յաջողիր իր նպատակի իրագործման մէջ: Ամէն մարդ համակարգի մէջ մտնել չի սիրեր: Շատեր համակարգը կը մերժեն, որովհետեւ անոր մէջ մտնելը համեստութիւն եւ ենթարկուիլ կը պահանջէ: Իսկ ինչ է արուեստին դերը: Արուեստը



Ճշմարտութիւնը խօսիլն է: Արուեստը Տոստոյեւսքիին պէս ինքզինքդ մարդոց պատմելն է: Այն աստէն մարդիկ քեզ կը սիրեն, որովհետեւ դուն իրենց խօսիլ չկրցածը համարձակութիւն կ'ունենաս խօսելու, կախարդելու: Ահա թէ ինչն է կարեւոր է մեր սերունդները մօտեցնել արուեստին, մշակոյթին:

-«Գ.»- Պատմութեան մէջ ունեցած ենք շրջաններ, որոնց ընթացքին կորսնցուցած ենք հող, տեղ, հարստութիւն, նիւթական եւ այլն, բայց մշակոյթը պահուած է, որովհետեւ հոգեւոր արժէք է: Այդ արժէքը հետագային նպաստած է կրկին կազմաւորուելու, դառնալու պետութիւն, Սփիւռք:

-Վ.Պ.- Մշակոյթը պահելու համար կրթուած մարդիկ, մտաւորականութիւն պիտի ունենաս: Լեւոն Շանթի, Աղբալեանի նման մարդիկ, որոնք թէ՛ իրենք զիրենք զարգացուցած են , թէ՛ կազմակերպուած աշխատանք տարած են, մարդ պատրաստած, մարդոց գիտելիք փոխանցած: Երբ համոզուած են, որ սորվելով իրենց կեանքը կը բարելաւուի, հաւաքուած են այդ նպատակին շուրջ ու հաւաքական աշխատանքի վերածած են զայն:

-«Գ.»- Պրն. Վարդգէս, եթէ ձեզի որոշ տարածք մը տրուի, ի՞նչ կ'ընէք մշակոյթը երիտասարդութեան առօրեային անբաժան մասը դարձնելու համար:

-Վ.Պ.- Ինչ որ ես գիտեմ՝ քանդակի միջոցաւ: Ես քանդակել կը սորվեցնեմ եւ ինչ որ անոր հետ կապ ունի: Ի՞նչը քանդակին հետ կապ չունի: Գրեթէ ամէն բան կապ ունի: Մազի ձեւը, սանտրուածքը, եղունգի յարդարանքը եւ արդն ու զարդը: Կը բերէի կաւ, կ'արտադրէինք կուժ, սակառ եւ ամէն ինչ որ կերպարուեստի հետ կապ ունի եւ ցուցափեղկի մը մէջ կը ցուցադրէինք մեր գործերը: Հետագային աշխատանքը կ'ընդարձակէինք ու կը մտնէինք արհեստներու մէջ սորվեցնելու որ աթոռ շինելը մեծաւ մասամբ կապ ունի կերպարուեստին հետ: Եթէ դուն լաւ աթոռ շինող պիտի ըլլաս, պէտք է չափի, աչքի եւ հանգստութեան ապահովման օրէնքները իմանաս: Ստեղծագործ պէտք է ըլլաս:

Աղբիւր՝ «Գանձասար-Բացառիկ 2024»

<http://www.kantsasar.com/news/48057-2/>

ԿԻՊՐԱՀԱՅ

ԵՒՐՈՊԱՑԻՆԵՐ ՅԱՆՈՒՆ ԱՐՑԱՆԻ



Ի աջակցութիւն Արցախի՝ «Եւրոպացիները՝ յանուն Արցախի» հարթակի նախաձեռնութեամբ 27 եւ 28 յունուարին եւրոպական տասնչորս երկիրներու ակտի քան յիսուն քաղաքներու մէջ տեղի ունեցան բողոքի տարբեր շարժումներ: Այս ցոյցերուն մասնակցեցան Եւրոպայի հայութիւնը եւ տասնեակ մը եւրոպական կազմակերպութիւններ, որոնք իրենց ազգային կառավարութիւններուն եւ համաեւրոպական դեկավար կառոյցներուն իրենց պահանջն ու յորդորը ներկայացուցին:

Այս ցոյցին մասնակցեցաւ նաեւ Նիկոսիոյ եւ Լիմասոլի հայութիւնը, կազմակերպութեամբ Կիպրոսի թեմի Պատգամաւորական եւ Վարչական ժողովներու, Կրօնական դասին եւ կիպրահայ կազմակերպութիւններու: Նիկոսիոյ մէջ, գլխաւոր խօսք առնողները եղան



Թեմիս Կաթ. Փոխ. Տէր Խորէն արք. Տողրամաճեան, Պատգամաւորական ժողովի ատենապետ Պրն. Վահան Այնէճեան, Սթրովոլոսի քաղաքապետ Անտրէաս Պապախարաւամպուս եւ այլք:

Այդ առիթով Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի չորս խմբակցութիւններ ուղերձ յղեցին այս նախաձեռնութիւններու մասնակիցներուն: Ուղերձին մէջ մասնաւորապէս կը նշուի. «Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի խմբակցութիւնները, արտայայտելով ծանր ու բարդ իրավիճակում յայտնուած արցախահայութեան տրամադրութիւնները, բռնատեղահանուած ժողովրդի անունից երախտագիտութիւն են յայտնում այն հոգատարութեան եւ աջակցելու պատրաստակամութեան համար, որ ցուցաբերում են հարիւրաւոր երոպական կազմակերպութիւններ՝ Արցախին օժանդակելու նպատակի շուրջ օրակարգ ձեւաւորելու մեծածաւալ աշխատանքի միջոցով:... Մեծ եռանդով միանում ենք արդարացիօրէն ցանկազրուած այն յորդորներին ու պահանջներին, որոնք ուղղուել են ձեր նստավայր երկրների կառավարութիւններին ու համաերոպական ղեկավար կառոյցներին:

Խորապէս համոզուած ենք, որ համազգային համախմբումը եւ նրա սահմանների ընդլայնումը, հայրենիքում պահանջուած ու սպասուող աշխատանքի իրականացման հետ մէկտեղ կարող են ստեղծել այն նախադրեալները, որոնք անհրաժեշտ են մեր գլխաւոր խնդրի՝ անվտանգութեան միջազգային երաշխիքներով Արցախի ժողովրդի հաւաքական վերադարձն իրականացնելու համար»:


ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՉՍՓԱԶԱՆՅ ԼՈՒՐՁ ՀԱՐՑԵՐ

ՆԵՐԳԱՂԹ... ԱՐՏԱԳԱՂԹ

ՅՈՎՍԷՓ ՆԱԼՊԱՆՏԵԱՆ

Մեր ազգային լուրջ հարցերու մեծագոյններէն մին արտագաղթն է, եւ կազմակերպուած ներգաղթի բացակայութիւնը:



Ըսած ենք եւ խօսած, որ ազգի մը թիւը ռազմավարութեան հիմնական սիւներէն մին կը նկատուի: Եթէ թիւը նուազ է, ուրեմն տկար ես...քանի որ թիւը միեւնոյն ժամանակ ուժ է, տնտեսական աճ ապահովող ազդակ...: Ազգի մը շարունակական աճը կ'ապահովէ թիւի վերելք, եւ անշուշտ, ազգի հզօրացման գրաւական, եւ նոր վերելքներու հասնելու ապահով ընդհանուր վիճակ:

Սովսէս Խորենացին ըսած է դեռ հինգերորդ դարուն, որ մենք **փոքր ածու ենք**... եւ, դժբախտաբար, մինչեւ այսօր մնացինք փոքր ածու:

Հայաստանը Խորհրդային դառնալէ ետք սկսած է ներգաղթի ծրագիր իրագործել (անշուշտ Սովետական Միութեան գերագոյն խորհուրդի համաձայնութեամբ), առանց եկողներուն տունի, ապրելակերպի, գործի **ճիշդ եւ արդար** պայմաններ ստեղծելու:

Ներքոնշեալ տուեալները կը փոխանցենք, օգտուած ենք «Հայկական Սովետական Հանրագիտարան»ի 6-րդ հատորէն, Երեւան, 1980 (էջ 208-209):

*1921-1936 թթ. Հայաստան կը ներգաղթեն 42.286 մարդ:

*1924-ին Յունաստանէն, Սուրիայէն, Սթամպուլէն եւ Ֆրանսայէն կը ներգաղթեն 4167 մարդ:

*1926-29 թթ. Յունաստանէն, Թուրքիայէն, Ֆրանսայէն կը ներգաղթեն 5863 մարդ:

*1932-33 թթ. կը ներգաղթեն 5007 մարդ:

*1936 թ. Ֆրանսայի տարբեր քաղաքներէն կը ներգաղթեն աւելի քան 1800 մարդ:

*1946 թ.ին Խորհրդային Հայաստան կը ներգաղթեն՝ Իրանէն 20.597 մարդ: Սուրիա-Լիբանան 19.253 մարդ: Յունաստանէն 4974 մարդ: Պուլկարիայէն 4383 մարդ: Ռումանիայէն 1738 մարդ: Այս խումբերէն Երեւան կը հաստատուին մօտ 15.000 մարդ:

*1947 թ.ին Խորհրդային Հայաստան կը ներգաղթեն 35.401 մարդ:

*1948 թ.ին Խորհրդային Հայաստան կը ներգաղթեն աւելի քան տասը հազար մարդ: 1946-1948 թթ. ներգաղթողները, դժբախտաբար, **ախպար** կոչուեցան տեղացիներու կողմէ:



*1962-1973 թթ. Խորհրդային Հայաստան կը ներգաղթեն 26.140 մարդ: Այս շրջանին ներգաղթողները, կրկին դժբախտաբար, **ախմախ** կոչուեցան:

Ուրեմն 1921-էն մինչեւ 1973 թթ. Խորհրդային Հայաստան ներգաղթած են մօտ 155.000 հայութիւն, այլ տուեալներով 171.000:

Բայց Հանրագիտարանի էջ 208-ի վրայ կ'ըսուի մօտ 200 հազար հայութիւն...ինչո՞ւ պէտք է անճիշտ տեղեկութիւն տան:

Կը կարծենք, որ ներգաղթողներու աւելի քան 85 տոկոսը կրկին արտագաղթած են:

* * *

Խորհրդային Հայաստանէն արտագաղթը սկսած է 1960-ականներէն, ԱՆՉԱ-ի միջոցներով: Անչա-ի հիմնադիրն էր ճորճ Մարտիկեան, բառը անգլերէնի (American National Committee to aid homeless Armenians) կրճատումն է: Այս մարմինի միջոցով բազմահազար հայ ընտանիքներ արտագաղթած են դէպի ԱՄՆ, Հայաստանէն եւ այլ երկիրներէ:

Ամենաշատ արտագաղթը տեղի կ'ունենայ 1992- 1993- 1994 տարիներուն: Մօտ 500 հազար հայութիւն, երկրաշարժէն յետոյ, մութի, անգործութեան եւ անորոշութեան շրջան...վախի եւ անապահովութեան, պատերազմի ծանր շրջան:

Մեզ նման փոքր երկրի մը համար շարունակական արտագաղթը **մեծագոյն չարիքն է...** քանի անգամ գրած ենք, խօսած ենք տարբերատեաններէ, դժբախտաբար լսող եւ արթնցող չկայ:

Արդարեւ 1991-ի անկախութեանէն մինչեւ 2020 թուականը հսկայ թիւով հայեր արտագաղթած են, կու տանք թիւերով.

1992 228 հազար մարդ:	1993 141 հ. մ.:
1994 128 հ. մ.:	1995 37 հ. մ.:
1996 20 հ. մ.:	1997 31 հ. մ.:
1998 24.400 մ.:	1999 7.200 մ.:
2000 25.700 մ.:	2001 61 հազարէ աւելի:
2002 երեք հազար:	2003 10 հ. մ.:
2004 երկու հազար վերադարձած:	2005 13 հ. վերադարձած:
2006 քսան հ. վերադարձած:	2007 երեք հ. մ.:
2008 23 հ. մ.:	2009 25 հ. մ.:
2010 29.900 մ.:	2011 44 հ. մ.:
2012 37 հ. մ.:	2013 31 հ. մ.:
2014 41 հ. մ.:	2015 43 հ. մ.:
2016 48 հ. մ.:	2017 40 հազարէ աւելի:



2018 մինչեւ 2023 մօտաւորապէս 80 հազար մարդ: 2020-ին արտագաղթ տեղի չէ ունեցած:

Ընդհանուր գումար մէկ միլիոն 161 հազար մարդ արտագաղթած: Վերադարձած են 35.000 միայն:

Ուրեմն մինչեւ 2023 թուականի Օգոստոս արտագաղթածներու վերջնական թիւն է 1 միլիոն 126 հազար մարդ, գուցէ աւելի:

Հսկայ թիւ մըն է մեր ընդհանուր թիւի համաձայն: **Դժբախտաբար բարձր մակարդակի կառավարական, իրապաշտ եւ համակողմանի հաշուարկներու վրայ հիմնուած ընդհանուր նոր ծրագրեր չկան (պետական հիմնական քաղաքականութիւն),** որպէսզի նուազագոյն ամէն տարի Հայաստան ներգաղթեն յիսուն հազար հայ:

Նաեւ ըսենք, որ վերջին վեց տարիներուն Հայաստանը բնական աճ չունի...այսինքն հողի վրայ ապրող հազարաւոր ընտանիքներ չեն աճիր: Այդ է պատճառը, որ ՀՀ ներկայ եւ գալիք իշխանութիւնները չափազանց լուրջի պէտք է առնեն հայրենադարձութեան յոյժ կարեւոր **ազգային մեծագոյն** խնդիրը:

Հայաստանը իր թիւով կը գրաւէ աշխարհի վրայ 138-րդ տեղը...: Այսօր ՀՀ մէջ կ'ապրին մօտ 2 միլիոն 720 հազար հայ (Արցախէն տեղահանուածներու հետ միասին): Անկեղծօրէն կը կարծենք որ աւելի նուազ է թիւը:

Ռաֆֆին իր 1875-ի յօդուածին մէջ հետեւեալը գրած է.

«Չենք յիշում, թէ որքա՞ն է վնասում գաղթականութիւնը մեր ազգի աճելութեանը, իսկ աւելի զգալի կորուստ է այն, որ հայ ազգաբնակչութիւնը հեռանում է իւր բնիկ կենտրոնից, որի վրայ պէտք է հաստատուած լինէր նրա կեանքը եւ ապագան: Որ նա իւր հայրենական հողից ստանար իւր սնունդը եւ ո՛չ՝ մեծ քաղաքներում համալրութիւն անէր:

Ահա՛ գլխաւոր խնդիրը, որո՞ վրայ պէտք է ուշադրութիւն դարձնէր ազգային ժողովը»: (Րաֆֆի «Երկերու ժողովածու» Թուրքիա, հ. 10, Երեւան, 1991 թ., էջ 225-226):

Կարծես այսօրուայ համար ըսուած խօսքեր են...:

Եթէ այսպէս շարունակուի, ուրեմն 2045-ին Հայաստանը կը հաշուէ մօտ երկու միլիոն, իսկ Թուրքիա եւ Ազրպէյճան միասին մօտ 135 միլիոն: Այսինքն մեր երկու հարեւանները մեզի կուլ պիտի տան: **Մթափութեան կոչ կ'ուղղենք ԲՈՒՈՐ ԿՈՂՄԵՐՈՒՆ:** Հազար անգամ ափսոս, մեր կատարած նախկին սխալները կը շարունակուին...ըսած ենք եւ կը կրկնենք... **մեզի ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԻՒՆ Է ՀԱՐԿԱԻՈՐ:**



ՀՐԱՆՂ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻ ՁԵՌՆԱՐԿԻՆ, ՆՐԱ ԱՆՈՒԱՆ ՇՔԱՆՇԱՆԸ ՅԱՆՁՆՈՒԵՑ «ԱՐԱՍ» ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏԱՆԸ

ՆԱՆԷ ԱԻՍԳԵԱՆ



Հրանդ Տինքի նահատակութեան առիթով, Պոլսահայ միութեան կողմից հայազգի գործչի յիշատակի առիթով կազմակերպուող ձեռնարկն ասանդոյթ է դարձել: Յունուարի 21ին, Միութեան Լոս Անջելեսի կենտրոնում հաւաքուել էին կրթական, հոգեւոր, իրաւական, մշակութային ոլորտի գործիչներ, մտաւորականներ՝ յիշելու Հրանդ Տինքի գործունէութեան առանցքային դրուագները, անդրադառնալու նրա

գաղափարներին ու դրանց արդիականութեանը: Ձեռնարկի բացման խօսքում, Պոլսահայ միութեան մշակութային յանձնախմբի ատենապետ դոկտոր Յովհաննէս Գ. Աւետիքեանն ամփոփեց Հրանդ Տինքի առաքելութիւնն ու ընդգծեց նրա գործի նշանակութիւնը:

Այնուհետեւ, Արեւմտեան Ամերիկայի Հայոց թեմից Ղեւոնդ քինյ. Քիրազեանն ու Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան թեմից Գեորգ քինյ. Աբեանը աղօթեցին եւ հոգեհանգստեան կարգ մատուցեցին: «17 տարի առաջ, հայ հասարակութիւնն ի դէմս Հրանդ Տինքի կորցրեց իր լուսաւոր զաւակին: Բոլորը մեծ խոնարհութեամբ եւ հպարտութեամբ են յիշում մեծ հային, որովհետեւ մարդն իր կեանքը տուեց յանուն գաղափարի՝ միայնակ դէմ յանդիման կանգնելով պետութեան, կայսրութեան առաջ եւ բարձրաձայնելով հայ ժողովրդի արդարացի խօսքն ու պահանջը: Արդիւնքում՝ նա իր կեանքով հատուցեց, ինչը մեծ հերոսութիւն է», իր խօսքում նշեց Գեորգ քինյ. Աբեանը՝ ընդգծելով, որ տխրութեան հետ մէկտեղ նաեւ հպարտութեան զգացումով եղել են ու կան նման հայեր՝ ինչպէս Հայաստանում, այնպէս եւ Սփիւռքում:

Ձեռնարկի հանդիսավար Ռոզալին Մատոյեանն իր խօսքում նշեց, որ 2007ի Յունուարի 19ին Տինքի սպանութեան դժոխային օրից յետոյ՝ «ապրում ենք գիտակցութեամբ, որ հայ ազգը, մասնաւորապէս պոլսահայ համայնքը, յաւէտ կորցրել է արժեքաւոր եւ վստահելի թիկունք»: Նա ներկայացրեց օրուայ բանախօսներից իրաւաբան Կարօ Ղազարեանին՝ նրան կոչելով պոլսահայ համայնքի պատուաւոր անդամ, քանզի ընկերոջ՝ Պոլսահայ միութեան նախկին ատենապետ, վաղամեռիկ Էդուին Մինասեանի յորդորով մշտապէս պոլսահայ համայնքի կողքին է:



Կարօ Ղազարեանը կիսուեց Հրանդ Տինքի մասին իր տպաւորութիւններով՝ նշելով, որ նա երախտապարտ մարդ էր, ով ապրում էր մի երկրում, որտեղ իր նախնիները սպաննուել էին մէկ դար առաջ՝ սակայն նրանց սերունդները շարունակել են բնակուել ու զարգանալ չնայած դժուարութիւններին, պահանջել արդարութիւն, եւ

նրանցից մէկն էլ Տինքն էր:

«Այնուամենայնիւ, թուրքական հայատեաց ուժերը որոշեցին, որ պէտք է ցոյց տան Հրանդ Տինքին, որ իր գաղափարներով ու գործունէութեամբ «նա չափն անցել է»: Որոշեցին, որ վերջ են տալու Հրանդի կեանքին, եւ իրականացրեցին: Իսկ ի՞նչ էր նշանակում «չափն անցնել»: Դա այն էր, որ Տինքն իր հիմնած «Ակօս» թերթում բարձրաձայնում էր հայ համայնքի իրաւունքների մասին եւ հանդէս գալիս դրանցից բխող պահանջներով, արտայայտում էր իր տեսակետը պատմութեան մասին, եւ այս ամէնն, իհարկէ, հակասում էր թուրքական պաշտօնական, պետական հայեցակարգին», նշեց Կարօ Ղազարեանը: Տինքն, ըստ բանախօսի, «անցաւ բոլոր սահմանները», երբ հրապարակեց «Սաբիհա Հաթունի Գաղտնիքը» խորագրով՝ Աթաթուրքի որդեգրած Սաբիհա Գէօրջենի մասին իր յօդուածը, որ ներկայացնում էր աղջկայ հայ ազգականների փաստացի վկայութիւններ առ այն, որ Աթաթուրքը նրան վերցրել էր հայկական որբանոցից՝ Խաթուն Սեպիլճեան ծննդեան անունով: Թուրքիայի առաջին կին ռազմական օդաչուն, ում անունով անուանակոչուած է նաեւ Թուրքիայի միջազգային օդանաւակայանը, ազգային խորհրդանիշ է համարում, եւ յօդուածից յետոյ, Թուրքիայում նրա շուրջ սկիզբ առած համերկրային բանավէճը, այդ պետութեան կողմից համարուեց վիրաւորանք ազգային ամբողջականութեանը:

«Տինքի յօդուածը համարուեց թուրքական ինքնութեան նկատմամբ յարձակում, եւ հայազգի գործիչը դարձաւ թիրախ: Մինչդէռ, Հրանդն ասում էր. «Այո, մենք՝ հայերս, այս հողերի վրայ աչք ունենք՝ բայց մի կարծէք, որ պիտի գանք եւ այս հողերը շալկենք տանենք: Մենք պիտի գանք եւ այս հողերի տակ մտնենք: Եւ նա մարգարէացաւ», նշեց Ղազարեանը՝ ասելով, որ թէեւ Տինքը ֆիզիկապէս մեր հետ չէ, սակայն նրա կեանքն օրինակ է նրանց համար, ովքեր ցանկանում են շարունակել մեր ազգային պայքարը, որ այսօր բազմաթիւ ուղղութիւններով է: Մարտահրաւերների թում նա նշեց 120,000 ունեզրկուած եւ տեղահանուած արցախահայութեանն աջակցութեան խնդիրը, Միւնիքին սպառնացող վտանգը, Երուսաղէմի հայկական թաղամասի հարցը, Բաքուի բանտերում Ալիեւի բռնապետական վարչախմբի կողմից պատանդառուած մեր գերիների ճակատագիրը: «Որպէս ազգ, այսօրուայ մեր մարտահրաւերը մեր հողերի վրայ աչք պահելն է, մեր հողերը



վերադառնալու ցանկութիւնը, այս հողերի վրայ շարունակելու ապրելը եւ այս հողերում թաղուելը: Իսկ այդ հողերում թաղուելու համար նախ պէտք է ապրել այդ հողերում: Այսպիսով, ինքներդ ձեզ տուէք այն հիմնական հարցը, որն ինքն իրեն տուել եւ պատասխանել է Հրանդ Տինքն իր կեանքի ընթացքում եւ իր գործերով ու գոհողութիւններով եւ վերջապէս իր նահատակութեամբ՝ «որտե՞ղ եմ ուզում թաղուել», հռետորական հարցով իր խօսքն աւարտեց Ղազարեանը:

Իսկ որտե՞ղ էր Հրանդ Տինքը ստացել ազգայինի այն մեծ չափաբաժինը, որ եղաւ նրա առաքելութեան համար անհրաժեշտ աղբիւրը: Այս մասին հետաքրքիր տեղեկութիւններ ներկայացրեց Ամերիկայի Հայ աւետարանչական միութեան վարչութեան գործադիր տնօրէն, հասարակական գործիչ Զաւէն Խանճեանը՝ պատմելով մի դրուագ Տինքի պատանեկութիւնից. «Հրանդը թուրքական դպրոց էր յաճախում, որտեղ նա պէտք է ենթարկուէր աշակերտական ուխտին, եւ ասէր. «Ես թուրք եմ, եւ հպարտ եմ իմ թրքութեամբ»: Տինքը մերժում է սա ասել, եւ պատժում է դրա համար, սակայն պարզաբանում. «Ես թուրք քաղաքացի եմ, բայց հայ եմ, թուրք չեմ»: Այս տարիքում նման բան ասելն ինքնին խօսուն վկայութիւնն էր իր ազգասիրութեան, հայրենասիրութեան, ազգի հանդէպ հաւատարմութեան»: Զաւէն Խանճեանն այնուհետեւ ներկայացրեց, թէ որտեղ է Տինքն իր ազգային, հոգեւոր դաստիարակութիւնը ստացել: «50ական թուականների վերջին, մէկ ուրիշ Հրանդ, ում մեր պատմաբաններից Խաչիկ Մուրատեանը կոչում է Հրանդից առաջ Հրանդը՝ Հրանդ Կիւզլեան անունով մէկ այլ հերոս, սկանատես լինելով իր հայրենակիցների նկատմամբ իրականացուած ոճիրներին, ուղիներ է փնտռում ինչ-որ կերպով աջակցելու վերապրած հայրենակիցներին: 1962 թուականին, նա որոշում է հաւաքել եւ կրթել հայ որբ երեխաներին, ովքեր կտրուելով արմատներից՝ ձուլման սպառնալիքի առաջ էին: Աւելի քան 1500 մանուկ ու պատանի են յաճախում նրա հիմնած՝ «Քեմփ Արմէն» կոչուող ամառային ճամբարը՝ ազգային եւ հոգեւոր կրթութիւն ստանալով այնտեղ: Այդ պատանիներից մէկն էլ Հրանդ Տինքն էր», պատմեց Զաւէն Խանճեանը:

Թուրքական իշխանութիւնների որոշմամբ, սակայն ճամբարը մի քանի տարի անց փակուում է: Հայ համայնքի յամառ ջանքերի շնորհիւ, տարածքը մի քանի տարի առաջ վերադարձուեց հայ համայնքին՝ ի դէմս Աւետարանչական եկեղեցու: Զաւէն Խանճեանը յայտարարեց, որ ներկայում աշխատանքներ են իրականացնում՝ վերականգնելու բացառիկ այս կառոյցը, որ բնոյթով միակն է Թուրքիայում, եւ կը ծառայի որպէս մշակութային, հոգեւոր կենտրոն հայ մանուկների ու պատանիների համար: Բանախօսը յորդորեց համայնքին միանալու իրենց առաքելութեանն ու ֆինանսական աջակցութիւն տրամադրելու՝ հնարաւորութիւն ստեղծելու նոր Հրանդ Տինքերի ծնունդի:



Ձեռնարկի յաջորդ բանախօսը Նորայր Տատուրեանն էր՝ կրթական, հասարակական գործիչ, Բլէր աւագ դպրոցի հայկական ակադեմիայի տնօրէնն ու ուսուցիչը, ով միաժամանակ Տինքի հիմնած «Ակօս» թերթի սիւնակագիր է, եւ եղել է Հրանդ Տինքի համահիմնադրած «Արաս» հրատարակչատան աշխատակիցը: Տատուրեանը հանդէս եկաւ «Հայ տպագիր գրքի ողիսականը» խորագրով բանախօսութեամբ՝ սկսելով 1512 թուականին Վենետիկում տպագրուած հայալեզու առաջին՝ «Ուրբաթագրք»ի պատմութիւնից մինչեւ Եւրոպական տարբեր քաղաքներում, Շուշիում, Վանում ու Երեւանում տպագրուած գրքերից ու հրատարակչատների գործունէութիւնից: Տպագրութեան եւ թարգմանութեան հայկական աւանդոյթները շարունակելու տեսլականով էլ 1993 թուականին Պոլսում հիմնուում է «Արաս» հրատարակչատունը՝ դառնալով Սփիւռքում գործող բնոյթով բացառիկ կենտրոն:

Պոլսահայ միութիւնն իր ամենամեայ՝ «Հրանդ Տինքի հոգու ազատութեան եւ արդարութեան շքանշան»ն այս տարի յանձնեց «Արաս» հրատարակչատանն ու տեսակապով միացաւ համահիմնադիր Էդուարդ Թովմասեանին: Երախտագիտութիւն յայտնելով պարգևի համար, Թովմասեանը ներկայացրեց «Արաս»ի հիմնադրման պատմութիւնն ու գործունէութիւնը: ««Արաս» հրատարակչատունը ստեղծուեց չորս դպրեվանքցիների կողմից՝ հայոց պատմութիւնը, զիրն ու գրականութիւնը, մշակոյթը թարգմանաբար թուրք ժողովրդին իրական գոյներով ներկայացնելու եւ այդպիսով իրար ճանաչելու, երկխօսութիւնը հնարաւոր դարձնելու նպատակով», նշեց Թովմասեանը: Գործունէութեան երեսուն տարիների ընթացքում, հրատարակչատունը իրականացրել է հայերէնից թուրքերէն մեծաքանակ թարգմանութիւններ, հրատարակել շուրջ 300 գիրք՝ հայ գրականութեան, պատմութեան մասին, ինչպէս նաեւ՝ օտար հեղինակների, ովքեր ներկայացրել են հայ մշակոյթը:

Պոլսահայ միութիւնը շքանշանը յանձնեց Նորայր Տատուրեանին՝ որպէս կառոյցի առաջին աշխատակցի, ով խոստացաւ այն փոխանցել: Ձեռնարկի գեղարուեստական յայտագրում հանդէս եկաւ դուդուկահար Ալբերտ Վարդանեանը:

Պոլսահայ միութեան ամենամեայ այս ձեռնարկը՝ անդամների ջանքերով, նաեւ իւրատեսակ առիթ է դարձել ծանօթանալու Թուրքիայի հայ համայնքի պատմութեանն ու կերտման գործում ներդրում ունեցած անհատներին:

ԱՍՊԱՐԷԶ



ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՈՏԼՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԶՐՊԵՅՃԱՆ ՄԱՀՄԱՆԱԳԻԾԻՆ ՎՐԱՅ

Յարութիւն Իսկահատեան- Պէյրութ



Մեր անցեալ յօդուածին մէջ յիշած էինք թէ Կովկասեան շրջանին մէջ ազդեցիկ պետութիւններու դերերը կը շրջուին եւ երեսուն տարուան իրավիճակը փոփոխութեան կ'ենթարկուի: Ասոր առնչուող երեւոյթներէն մէկը վերջերս Դեկտեմբեր 2023-ի սկիզբը Հայաստան Ազրպէյճանի եւ իր միջեւ խաղաղութեան բանակցութիւնները մերժեց որ կայանան Մոսկուայի մէջ, միւս կողմէ ողջունելով անոնց Նիւ Եորքի մէջ հաւանական կայացումը:

Ի՞նչ է բնոյթը, պատճառը եւ տարողութիւնը այս սահմանային անհամաձայնութեան: Արդարեւ 12 Մայիս 2021-էն սկսեալ Ազրպէյճան առանց պատճառի կը յարձակի Հայաստանի սահմաններուն վրայ եւ քանի մը քիլոմէթր ներս կը խուժէ, մասնաւորապէս Միւնիքի եւ Գեղարքունիքի մէջ: Այս դէպքը բազմիցս կը կրկնուի եւ մինչեւ օրս Ազրպէյճան գրաւած է Հայաստանի Հանրապետութեան տարածքէն մօտաւորապէս 215 քառ. քմ.: Ազրպէյճան այդ գրաւած հողերը կը պահէ խախտելով միջազգայնօրէն ընդունուած Հայաստանի սահմաններուն իրավիճակը, հակառակ Եւրոպական Խորհրդարանի, Միացեալ Նահանգներու եւ Ֆրանսայի, ինչպէս նաեւ Մինսկի խումբի կոչերուն:

Արցախի Բ. պատերազմի աւարտէն ետք, Ազրպէյճան բազմիցս Հայաստանի սահմանները բռնաբարեց՝ զինեալ բախումներ հրահրելով ու կոպիտ ձեռով խախտելով 2020 Նոյեմբերի զինադադարը, որ պարզապէս ասպատակութիւն է ամբողջ աշխարհի աչքերուն առջեւ: Քաղաքական վերլուծաբաններ կը հաստատեն թէ սովորական դարձած է, որ ամէն անգամ երբ Ազրպէյճան դժգոհ մնայ տեղի ունեցող բանակցութիւններէն սահմանային ասպատակութիւն կը հրահրէ ու խախտելով զինադադարի համաձայնութիւնը, առանց պատճառի կրակ կը բանայ եւ տարածքներ կը գրաւէ: 2021-ին սահմանային բախումները վերելք արձանագրեցին եւ կարճ ժամանակով բռնկեցան Նախիջեւան-Հայաստան եւ Քարավճառ-Գեղարքունիք սահմանները:

2021-ի Օգոստոսին ազրպէյճանական ոյժերը շրջափակեցին Միւնիքը փակելով հիւսիս-հարաւ մայրուղին ու կասեցնելով միջազգային երթելակութիւնը Իրանի հետ: Սակայն Հայաստան մայրուղին փոխարինող այլ ճանապարհներ բացաւ ու երթելակութիւնը եւ առետուրը ապահովեց Իրանի հետ: Հայաստան Հաւաքական Ապահովութեան Դաշինքի Կազմակերպութեան եւ Ռուսիոյ Դաշնութեան երկու անգամ դիմեց, սակայն դրական պատասխան չստացաւ անոնցմէ, հակառակ անոր որ վերոյիշեալներն ալ դատապարտեցին Ազրպէյճանը զինադադարը խախտելու յանցանքով: Ռուսական խաղաղապահ ոյժերու հրամանատարութիւնը չէզոք յայտարարութիւններ սփռեց, կոչ ուղղելով երկու կողմերուն դադրեցնելու կրակը:

Ազրպէյճանական սահմանային ոտնձգութիւնները դատապարտուեցան նաեւ Եւրոպական Միութեան կողմէ, որ դէպքերուն վայրը պատուիրակութիւն մը դրկեց: Ազրպէյճան եւ Ռուսիա այդ պատուիրակութեան գործունէութիւնը դատապարտեցին, սակայն Եւրոպական Միութիւնը երկրորդ պատուիրակութիւն մըն ալ դրկեց:

(Համացանցային կայքէջ <https://en.wikipedia.org/.../Armenia%E2%80%93Azerbaijan...>)-%20of%)



Հոս անհրաժեշտ է հաստատել թէ Ազրպէյճանի լկտի կեցուածքը միջազգային օրէնքներու դէմ ու միջազգայնօրէն ընդունուած սահմաններու բռնաբառումը եւ գետնի վրայ սանձարձակ վայրագութիւնը քանի մը դրդապատճառներ ունին: Առաջինը՝ իսրայէլեան քաղաքական դրդումներն ու քաջալերանքն են Ազրպէյճանը յառաջ նետելու ներկայիս Հայաստանի դիմաց եւ հետագային՝ Իրանի: Երբ այս օրերուն ականատես կ'ըլլանք Կազայի մէջ կատարուող պաղեստինցիներու ցեղասպանութեան, յստակօրէն կը տեսնենք թէ Իսրայէլ ինչպէս միջազգային օրէնքներով արգիլուած զէնքեր կը գործածէ, բնակարաններ, հիւանդանոցներ, մզկիթներ ու եկեղեցիներ կը քանդէ սանձարձակօրէն: Ազրպէյճանի գործած վայրագութիւնները ճիշդ Իսրայէլի կատարածին ընդօրինակութիւններն են՝ լկտիութիւն, սանձարձակութիւն եւ վայրագութիւն, ամբողջ աշխարհի աչքերուն դիմաց: Չարիք գործելու իւրայատուկ իսրայէլեան նմանօրինակ ոճ որդեգրուած է Ազրպէյճանի եւ Թուրքիոյ կողմէ: Երկրորդ՝ Ռուսական Դաշնութեան քաջալերանքը հիմնուած փոխադարձ շահերու նախային, կազային եւ ռազմական ոլորտներուն մէջ: Երրորդ պատճառը կու գայ Եւրոպայէն ու Ամերիկայէն, որոնք հրապարակաւ կը դատապարտեն կատարուող ազրպէյճանական ռոնձգութիւնները, սակայն թաքուն կերպով Իսրայէլի ծրագիրներուն նեցուկ կը կանգնին բաւականաչափ կերպով: Այս ուղղութեամբ, օրինակ մը տալու համար, երբ Իսրայէլ Կազայի մէջ պաղեստինցի բնակիչներուն շէնքերը վայրագօրէն կը ռմբակոծէր ու կը քանդէր, սպաննելով հազարաւոր անմեղներ, Միացեալ Նահանգները բացայայտօրէն ցաւ կը յայտնէ անմեղ քաղաքացիներու կորուստին համար: Սակայն, տակաւին քանի մը օրեր առաջ, ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի քուէարկութեան, նոյն այս Միացեալ Նահանգները, միեւնոյն բացայայտութեամբ կը մերժէ դրական քուէարկել Կազայի մէջ զինադադարի առաջարկին: Հոս բարոյականութեան կարիքը կը զգացուի, սակայն անոնք ասոր մասին ալ պերճախօս ճառախօսութիւններ կը սփռեն ամէն օր, փորձելով ձախող կերպով ծածկել իրենց անսահման անբարոյականութիւնը: Ամբարտաւան ու պոռոտախօս իսրայէլացի պատասխանատուներու քաղաքական եւ զինուորական նեցուկն ու չարամտութիւնը իւրացուցած, ինչպէս նաեւ Ռուսական Դաշնութեան ինքզինք բազմիցս ընտրել տուած նախագահ Վլատիմիր Փութինի դաշնակիցի բարեկամութիւնը վայելող Ազրպէյճանի բռնատէրը՝ Իլիամ Ալիեւ շատ անգամներ հանդէս եկած է Հայաստանի դէմ սպառնալիքներով, որոնցմէ՝ «Հայաստան պետք է ընդունի մեր պայմանները եթէ կ'ուզէ ապրիլ 29000 քառ. քմ. տարածքի վրայ», «Հայերը պետք չէ մոռնան, որ իրենց գիւղերը տեսանելի են մեր կողմէն» եւ այլն: Ան աւելի առաջ անցնելով «Երեւանը» մերն է» բարբառեց եւ Հայաստանը յանդգնեցաւ կոչել արեւմտեան Ազրպէյճան: Հայաստանի սահմաններու դէմ ազրպէյճանական յարձակումները սհուղողի վիճակ մը ստեղծած են այդ սահմանին մօտերը գտնուող գիւղերու հայ բնակիչներուն համար, որոնք այդ ստիպողական պայմաններուն մէջ գոյութեան պայքար կը տանին նենգ թշնամի Ազրպէյճանի դէմ: Սահմանային հայկական գիւղերու բնակիչները թիրախաւորուած են ազերիներու կողմէ: Խանգարուած է բնականոն կեանքը դպրոցներու, դարմանատուներու, ջուրի մատակարարումը, եկեղեցիներու եւ մատուոններու կրօնական արարողութիւնները: Բազմաթիւ հայկական գիւղեր պարպուած են ու բնակիչները աւելի ներքին վայրեր ապաստանած:

Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ սահմանային գծումի հարցը երեւան եկած է Արցախի Բ. պատերազմի Հայաստանի պարտութենէն ետք, երբ Ազրպէյճան գրաւեց Արցախի Հանրապետութեան տարածքը: Ոչ միայն վատ հոգիի հոգեբանութիւն, այլ նաեւ Ազրպէյճանի դաշնակից, բռնատէր ու ապօրինի պետութիւններու՝ ինչպէս Թուրքիոյ եւ Իսրայէլի թաքուն թելադրութիւնները կը քողագերծուին Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն վրայ ազրպէյճանական յարձակումներու ընթացքին: Ազերի զինուորները Հայաստանի տարածքէն գրաւուած հատուածներուն մէջ ամրութիւններ կը կառուցեն ու



երկրաչափական գործեր կը կատարեն: Գրաւուած հողերուն տարածքը ինչպէս ըսուեցաւ 215 քառ. քմ. է: Միւնիքի սահմանին մօտերը գրաւուած հայկական հողերուն վրայ ազերի զինուորներուն կառուցած ամրութիւնները կը հսկեն Երեւան-Իրան մայրուղին: Այդ կառոյցները կը գտնուին Գեղարքունիքի, Կապանի եւ աւելի հարաւ՝ Ներքին Խանստ շրջաններուն մէջ: Այս կառոյցները հաստատուած են ռազմագիտական բարձունքներու վրայ, որոնք յստակ առաւելութիւն ունին դիմացը գտնուող հայկական դիրքերէն: Կարգ մը գրաւուած հողերու վրայ հաստատուած ազերիական կառոյցները եւ դիրքերը կը պաշարեն հայկական զիւղերը եւ կը հսկեն անոնց տարածքներուն: Հայկական զիւղերու բնակիչներուն կ'ազդէ այն տպաւորութիւնը որ ազերի զինուորները կը պատրաստուին Միւնիքը անջատել Հայաստանի մայր տարածքէն եւ իրականացնել իրենց երազած ապօրինի անցքը Պաքուէն մինչեւ Նախիջեւան: Միւնիքը հարաւային Հայաստանի այն կարեւոր հողամասն է որ Երեւանը Իրանի հետ կը կապէ: 30 տարուան թրքական շրջափակումին Միւնիքէն անցնող մայրուղին է որ ապահոված է ոչ միայն Հայաստանի ուտեստեղէնի մէծ մասը, այլ նաեւ քարիւղի եւ կազի մասամբ մատակարարումը, ամբողջացնելու համար ռուսականին պակասը: Հակառակ Ռուսական Դաշնութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ կնքուած դաշինքին, ըստ որուն Ռուսիա զինուորապէս պէտք է օգնէ Հայաստանի՝ յարձակումի կամ գրաւման պարագաներուն, սակայն այս ուղղութեամբ Ռուսաստան ցարդ բացասական դիրք ունի եւ քաղաքական գետնի վրայ կը նեցակցի Ազրպէյճանի՝ ռոտակոխ ընելով իր իսկ ստորագրած համաձայնագիրերը Հայաստանի հետ: Միւս կողմէ Ազրպէյճանի կատարած Հայաստանի սահմաններուն ասպատակութիւնները թէեւ կը դատապարտուին Արեւմուտքի կողմէ, սակայն արեւմտեան երկիրներէն ոչ մէկը ցարդ գործնական քայլ չէ առած Հայաստանը պաշտպանելու համար:

Հայաստանի Հանրապետութեան եւ Ազրպէյճանի միջեւ սահմանագծումը սկսելու համար բազմաթիւ ժողովներ գումարուած են ցարդ, սակայն անոնցմէ ոչ մէկը շօշափելի արդիւնքի յանգած է, պարզապէս այս հարցին նկատմամբ Ազրպէյճանի յիտոտալի կեցուածքին պատճառով: Արդարեւ Ազրպէյճան ոյժ առած իր Ռուսական Դաշնութեան դաշնակիցէն, Իսրայէլի հայթայթած զենքերէն ու քաղաքական նեցուկէն, կը յամառի այս հարցը աննկատ թողուլ ու ձգձգել, ընթացքին շարունակելով իր ռոտակոխութիւնները Հայաստանի դէմ: Ներկայիս Եւրոպական Միութեան կողմէ թոյլ միջամտութիւններ տեղի կ'ունենան այս հարցը լուծելու համար: Եւրոպան վճռական ոչ մէկ քայլ առած է Ազրպէյճանի նկատմամբ:

Այժմ Հայաստանի դիրքը յստակ է՝ հեռանալ Ռուսաստանի Դաշնութեան միայն խօսքային դաշնակիցի վիճակէն եւ մօտենալ Արեւմուտքի, մանաւանդ Եւրոպական Միութեան եւ Միացեալ Նահանգներու: Ժամանակը ցոյց կու տայ թէ որքան անկեղծ ու հաւատարիմ պիտի գտնուի Արեւմուտքը Հայաստանի նկատմամբ:

ՊԱՅՔԱՐ 357

ԱԿԱԴԵՄԱԿԱՆ ՔԱՂԱՔ

ԱԻՕ ՊՕՂՈՍԵԱՆ



Ըստ կարգ մը պատմաբաններու՝ եւրոպական ցամաքամասին յառաջդիմութեան հիմնական պատճառներէն գլխաւորը Գերմանիոյ մէջ տասնվեցերորդ դարուն Մարթին Լուտերի մեկնարկած բողոքական բարեփոխումներն էին, որոնց արդիւնքը եղաւ լուտերականութիւնը կամ պարզապէս Բողոքական եկեղեցւոյ ծնունդը: Այդ



բարեփոխումները նպաստած էին մարդոց մէջ քննական մտածողութեան զարգացման եւ Աստուածաշունչը անձնապէս մեկնաբանելու կարելիութեան՝ իրենց իսկ լեզուներով, անշուշտ առանց նսեմացնելու քաղաքական զարգացումներուն, տնտեսական փոփոխութիւններուն եւ գիտութեան յառաջընթացին (որուն միջոցաւ Աստուածաշունչը հասանելի դարձաւ գերմանացիներուն իրենց իսկն լեզուով, փոխանակ կաթոլիկ եկեղեցւոյ օգտագործած լատիներէնին, որ բոլորին հասանելի չէր) դերերը:

Քննական մտածողութեան արդիւնք էր՝ մերժումը բնական երեւոյթներուն գերբնականութեան վերագրման եւ փնտոտութիւնը գիտական բացատրութիւններու, որոնց արդիւնքը եղաւ գիտութեան զարգացումը: Գիտութեան զարգացումը իր կարգին ճամբայ բացաւ ճարտարարուեստական յեղափոխութեան եւ մրցակցութեան, որուն արդիւնքը անխուսափելիօրէն պիտի ըլլար արհեստագիտութեան մասնագիտացումը եւ հմուտ աշխատուծի պահանջը, որոնց համար անհրաժեշտ էր կրթութեան ընդհանրացումը:

Բացուեցան դպրոցներ, ապա կարելոր մայրաքաղաքներու մէջ համալսարաններ, ակադեմիական կաճառներ, տարրալուծարաններ եւ հետազօտական հաստատութիւններ:

Արեւմտեան Եւրոպայէն ոչ շատ հեռու՝ Օսմանեան կայսրութեան տարածքին, կրթութիւնը անհամեմատօրէն աւելի թոյլ զարգացում ապրեցաւ, իսկ ռուսական կայսրութեան տարածքին բաւական ուշացումով: Հայութեան բնօրրանները գտնուելով Օսմանեան եւ ռուսական կայսրութիւններու տարածքին մէջ՝ հեռու եւրոպական ոստաններուն կրթական օճախներէն, բնականաբար զրկուած էր զարգացման եւրոպական մակարդակին հետ քայլ պահելու առիթէն:

Հայկական բարձրավանդակը խաւարի մէջ էր: Պէտք էր սպասել մինչեւ քսաներորդ դարու Խորհրդային վարչակարգին հաստատման, որպէսզի հայրենի ժողովուրդը առիթը ունենար տարրական եւ բարձրագոյն կրթութիւն ստանալու, որ այնուամենայնիւ, երբեք չհասաւ արեւմտեան երկիրներու կրթական մակարդակին:

Խորհրդային կարգերու փլուզումէն ետք, Հայաստանի անկախացումով, ինչպէս բոլոր բնագաւառներուն պարագային, երկրին եւ Մոսկուայի հետ նաեւ կրթական հիմնական կապը պիտի կտրուէր: Տնտեսական համակարգին փլուզման եւ զայն փոխարինող վայրի ազատականացման պիտի յաջորդէր ոչ միայն կրթական մակարդակի անկումը, այլ՝ կրթութեան արժեզրկումը: Երկրի ընտրանին՝ գիտաշխատողները, դասախօսները եւ կրթուած խաւը պիտի հեռանար երկրէն: Երկու տասնամեակներ պէտք եղան, որպէսզի նորահաս սերունդին մօտ կրթութեան պահանջը հետզհետէ աճէր, սակայն նոյն ժամանակ ի



յայտ պիտի գայ, որ արհեստական բանականութեան աննախընթաց զարգացումով, համաշխարհային կրթական համակարգը, համապատասխան քայլ պահելու համար՝ պարտադրանքը ունի մշտական յառաջդիմութեան, որուն համար անհրաժեշտ են թէ՛ մտաւորական պատրաստուածութիւն, թէ՛ ենթակառուցումներ, որոնց պարագային Հայաստանի կրթական համակարգը համապատասխան ենթահող եւ յարմարութիւն չունի:

Կրթական համակարգին մէջ, բարեփոխումներ իրականացնելու նպատակով, այլ որոշումներու կողքին կառավարութիւնը անցեալ տարուան ընթացքին որոշեց մայրաքաղաքի արուարձանային տարածքի մը վրայ հողաշերտ մը յատկացնելու, որուն վրայ մինչեւ 2030 պիտի կառուցուի ակադեմիական քաղաք (Academic city) մը, որ, ըստ նախատեսութեան, ճշտուած պիտի ըլլայ 44,000 ուսանողներ ընդունելու յարմարութիւններով:

Այսպիսի ակադեմիական քաղաքի մը կառուցման որոշումը բնականաբար շատ յանդուգն նախաձեռնութիւն է, նկատի ունենալով երկրին նիւթական հնարաւորութիւնները եւ ծրագիրին մեծածախս ըլլալը: Այդ պատճառով, անոր նկատմամբ տարբեր շրջանակներու կողմէ կան թեր ու դէմ կարծիքներ, որոնց իրաւացիութիւնը կարելի պիտի ըլլայ ճշդէլ միայն անոր իրագործումէն ետք: Սակայն, ուսումնասիրելով կարգ մը այդպիսի ակադեմիական քաղաքներ՝ ակներեւ կը դառնայ անոնց առաւելութիւնները՝ սովորական համալսարաններու հետ համեմատած:

Այդ ակադեմիական քաղաքներէն մէկը Ամերիկայի Մեսչուսեց նահանգի Պոսթըն քաղաքն է, ուր կը գտնուին չորս համալսարաններ, որոնցմէ են նաեւ աշխարհի ամենէն հռչակաւորները՝ «Էմ.Այ.Թի.»ն (MIT), Հարվըրտը (Harvard) եւ Քոլումբիան (Columbia): Միւսը՝ երկրորդը՝ Շուէտի Լունտ քաղաքն է, ուր կը գտնուի համանուն համալսարանը, որ նոյնպէս աշխարհի առաջնակարգներէն է:

Վերելը յիշուած երկու քաղաքներուն բնակչութեան կարելոր մասը կը բաղկանայ ուսանողներէ: Առաջինին պարագային 600,000 բնակչութեան մօտաւորապէս կէսը, իսկ երկրորդին պարագային, որ ունի 100,000 բնակչութիւն, մօտաւորապէս 47,000ը ուսանողներ են, իսկ 9000ը՝ դասախօսներ եւ ուսուցիչներ: Քաղաքը ունի մօտաւորապէս 20 գրադարաններ: Երկու քաղաքներուն համալսարաններուն պարագայի, անոնք փակ ցանկապատերով մեկուսացուած չեն քաղաքներէն, այլ՝ անոնց շէնքերը մաս կը կազմեն քաղաքին, շրջապատուած՝ հանրային կանաչ տարածքներով եւ այգիներով, այդպիսով հանրութեան եւ ուսանողութեան միջեւ հոգեկան կապ ստեղծելով: Քաղաքներուն մէջ այդքան բարձր համեմատութեամբ ուսանողութեան ներկայութիւնը կրթութեան եւ



գիտութեան նկատմամբ վարակիչ մթնոլորտ մը կը ստեղծէ, որ կը խթանէ վկայուելէ ետք գործարարական ընկերութիւններուն եւ startup-երու հիմնումը: Աւելին, Լուստի համալսարանին պարագային, ուսումը շուէտցիներուն համար բոլորովին անվճար է, իսկ կեցութեան եւ ապրուստի ծախսերը հոգալու համար պետութիւնը վարկեր կը տրամադրէ ուսանողներուն չնչին տոկոսով, երկար տարիներ ետք փոխհատուցելու դրութեամբ:

Հայաստանի մէջ այդպիսի ակադեմական քաղաքի մը հիմնումը՝ ինչպէս Պոսթընի եւ Լուստի պարագային, պիտի ունենայ իր դրական ազդեցութիւնը առաջին հերթին ուսանողութեան վրայ: Գտնուիլ վայրի մը մէջ, ուր մթնոլորտը եւ շրջապատը տեսաբար կրթութեան եւ գիտութեան հետ առընչութիւն ունի իր գրադարաններով, ընթերցասրահներով, տարբեր մասնագիտութիւններու յատկացուած շէնքերով, տարրալուծարաններով, դասախօսութիւններու յատկացուած սրահներով, շրջանաւարտութեան մասնաւոր հարթակներով, ուսանողներով լեցուն սրճարաններով, շրջապատուած ըլլալ առաւելաբար սերնդակիցներով եւ նպատակակիցներով՝ կը խթանէ նպատակաւոր դրամաշնորհութիւն եւ մրցակցութիւն, որոնք օգտակար են թէ՛ իրենց՝ ուսանողներուն մասնագիտական ապագային համար, թէ՛ հասարակութեան եւ թէ՛ ազգին յառաջդիմութեան, եւ, հետեւաբար, պետութեան հզօրացման:

Ակադեմական քաղաքի մը հիմնումը դրական ազդեցութիւն կ'ունենայ երկրին մէջ ստեղծելով նոր աշխատատեղեր եւ առիթներ, սատարելով տնտեսութեան բարգաւաճման:

Քաղաքի կեդրոնէն համալսարաններուն տեղափոխումը նոր կառուցուելիք դատարկ եւ ծայրամասային շրջան մը պիտի բեռնաթափէ քաղաքի կեդրոնին ծանրաբեռնուածութիւնը եւ բնակչութեան պարգեւէ աւելի հանդարտ եւ հանգիստ առօրեայ մը եւ նուազ աղմկոտ ու աւելի մաքուր մթնոլորտ մը:

Վերջապէս, պէտք չէ մտահան ընել այն իրողութիւնը, որ Հայաստան, ըլլալով շրջապատուած եւ զուրկ ծովերու վրայ ելքերէ՝ դատապարտուած է տարածաշրջանի ժողովուրդները գերազանցելու գիտութեան եւ կրթութեան ոլորտներուն մէջ, որովհետեւ 21րդ դարը եւ ապագան բացառապէս մտաւոր կարողութեամբ յառաջադիմ հաւաքականութիւններու ժամանակաշրջան է:

31/1/2024

ԵՐԵՒԱՆԱԲՆԱԿ ՀԱԼԷՊԱՀԱՅՈՒ ՄԸ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Յակոբ Միքայէլեան



Արդէն տասը տարի կ'ընէ որ ես Երեւան կը բնակիմ: Չեմ համարձակիր «հաստատուած եմ» ըսել, որովհետեւ Հալէպ տուն տեղ ձգած, ապաստանած եմ այստեղ, առանց գիտնալու թէ կրնամ վերջնականապէս հաստատուիլ, այսինքն ֆիզիքական կապս կտրել Հալէպի հետ

ու դառնալ լիիրաւ երեւանցի, քանի որ այդպիսի բան մը ընելու համար պէտք է կարենայի սեփական բնակարան մը ունենալ, հասութաբեր գործ մը ինքնաբաւ ըլլալու չափ, անշուշտ առանց զգացական կապս կտրելու ծննդավայրիս հետ, ուր անցուցած եմ կեանքիս եօթանասուն տարիները:

Այս տասը տարիները բաւարար չեղան մերուելու հայաստանցիներուն մէջ, դառնալու անտոնցմէ մէկը, իր բոլոր ստորոգելիներով՝ տեղական խօսակցական լեզուով, սովորոյթներով, կենցաղային տարատեսակ մանրամասնութիւններով, հակառակ միեւնոյն ազգային պատմութիւնը ունենալնուս, միեւնոյն մշակոյթը, դաւանանքն ու ձգտումները ունենալնուս:

Տասը տարին բաւարար չէ փոխուելու եւ տեղացի դառնալու համար, ոչ միայն տասը, նոյնիսկ տասնամեակներ պէտք են, որ մարդ տեղացի դառնայ, բան մը որ ինծի չէ տրուած, բայց մանուկներուն եւ պատանիներուն յարիւր է, երբ անոնք մատղաշ տարիքէն կը հանեն հինը իրենց վրայէն ու կը հագնին նորը, ինքնաբերաբար, առանց յատուկ ճիգի:

Հայաստանցին ընդհանրապէս, եւ քաղաքներու մէջ ապրողները մասնաւորապէս, ինքնամփոփ են, իրենք-իրենց մէջ քաշուած, դիւրին հաղորդակցող չեն: Հալէպցի կիներուն նման իրարու այցելել, դուռ-դրացիով նստիլ, խօսիլ, խնդալ, նաեւ բամբասել չունին, նախ որ մեծամասնութիւնը կ'աշխատի եւ ժամանակ չունի այդպիսի հաւաքոյթներու, իսկ երկրորդ՝ շատ ալ հետաքրքրուած չեն ուրիշով, իրենք իրենց մէջ, իրենց հարցերով հազիւ կը զբաղին: Որեւէ հարցով դրացիին դուռը թակողին «հրամէ» չեն ըսեր, դրան առջեւ կը խօսին եւ վերջ: Ես այս իմ երրորդ բնակարանիս մէջ արդէն 7 տարիէ ի վեր կ'ապրիմ, շէնքիս մէջ 30 դրացի ունիմ, տակաւին ոչ մէկուն տունը ոտք դրած եմ, ոչ մէկը ինծի «դրացի՛, հրամէ» ըսած է, թէւ շատ փափաքած եմ: Կարծես չեն ուզեր որ տեսնես թէ ինչէ՛ր ունին իրենց տան մէջ, ինչպէ՛ս կ'ապրին... կարծեմ խորհրդային շրջանի ազդեցութիւնն է, որ կը շարունակուի:

Արեւմտահայերէնը երկու մաս ունի՝ գրական եւ խօսակցական: Արեւելահայերէնը երեք մաս ունի, գրական, մաքուր խօսակցական եւ անհասկնալի «ժառկոն» փողոցային լեզու մը, որմէ բան չես հասկնար, ոչ միայն օգտագործուող բառապաշարէն, այլեւ հնչիւնէն ու տարբեր առոգանութենէն: Բոլոր երեքին ալ պարագային օտարամուտ բառերը կ'աղաւաղեն լեզուն, թրքերէնէ եւ արաբերէնէ ներմուծուած բառերը իրենց համար «բարբառ» են, որոնցմէ չեն փորձեր ձեռքազատիլ. ամենացայտունն ու խորշելին «շալվարն» է տաբատի փոխարէն, «սիլան» է ապտակի փոխարէն, կամ «փոշմանիլն» է գոջալու փոխարէն: Մեր անդադար գրաւոր թէ բերանացի մատնանշումներն ու ՀՀ լեզուի կոմիտէի հրատարակած հայերէն բառացանկերը ոչինչ կը փոխեն:

Եթէ ըսես որ այդինչ բառը հայերէն չէ, կը զարմանան ու կը պնդեն որ բարբառ է, հայերէն է: Իսկ ուղղագրութեան հարցը, անիմաստ է այլեւս այդ մասին խօսիլ, քանի ջուր ծեծելու նման պիտի ըլլայ, իրենք իրենց չ-ուղղագրութիւնը չեն փոխեր: Այստեղ անհրաժեշտ կը նկատեմ խօսիլ այն նորակազմ բառերուն մասին, որոնք արդէն մտած են երկրի բառապաշարին մէջ եւ կ'օգտագործուին եւ որոնք մեր մօտ չունին իրենց հայերէն համագործ: Օրինակ



դաշնամուրի, կամ ինքնաշարժի Pedal-ին «ոտնակ» կ'ըսեն, frain-ին «արգելակ», պենզինճի-ին «լցակայան կամ պենզալցակայան», մեքենիստին «ընթացագործ», աքսեսուարին-«մեքենայի մասեր», որեւէ բան թափանցիկ նայլընի կազմի մէջ առնելը-«Թաղանթապատում», չիթի- «լցակար» եւ այլն, որոնք կրնանք նաեւ Սփիւռքի մէջ ալ օգտագործել: Անտեղի կը նկատեմ «Մայքրօուէլվ»-ին հայացումը որպէս «մայքրօալիքային վառարան», կամ «Եուրօվիժընը» թարգմանել որպէս «Եւրօտեսիլ»:

Մշակոյթ ըսուածը առատօրէն կը դրսեւորուի որպէս օփերա ու պալէ, որպէս սիմֆոնիք նուագախումբ ու երգչախումբ, որպէս թանգարանային ու նկարչական ցուցահանդէս, որպէս թատրոն ու բազմատեսակ բեմական արուեստ: Մակարդակը բաւական լաւ է, հանդիսասարահները ընդհանրապէս լեցուն, ինչ որ անմակարդակ է, ան ալ հեռատեսիլի յայտագիրներն են, ուր գովազդներն ու հարցազրոյցները մեծ բաժինը խլած են: Հանրայինը քիչ մը աւելի տանելի է, մինչ միւսներուն մօտ շահի սիրոյն ամէն աժան բանի ետեւէն վազելնին ակնյայտ է:

Շուկան շատ ճոխ է, սակայն գիները բաւական դժուարամատչելի են, այս տարի դուրսէն եկող այցելուներուն նկատողութեամբ,- արդէն եւրօպայէն ետ չի մնար սղութեամբ,- կ'ըսեն: Չխօսինք տուներու վարձքերուն մասին, որոնցմէ կը տառապին գլխաւորաբար վարձով ապրող սուրիահայերը: Տանտէրերուն ու ընդհանրապէս հայաստանցիին համար դրամը առաջնային է, դրամասէր են, հայաստանցին խտրութիւն չի դներ միջոցներու մէջ դրամ շահելու համար:

Քաղաքականութիւնը իր «յաճախորդները» ունի, անով կը զբաղին որոշ մարդիկ ու կազմակերպութիւններ, մնացեալը իրենց օրապահիկին ետեւէն են:

Ցոյցերն ու հաւաքները առաջ բազմամարդ էին, հիմա շատ նուազ, մասնակիցներուն փոքր տոկոսը իսկական բողոքող, մնացեալը՝ անգործ մարդիկ ու հետաքրքրութենէ մղուածներ: Քաղաքին մաքրութիւնը բաւական լաւ է, որուն համար շնորհակալ ըլլալու է քաղաքապետարանին, միակ սօգեղ երեւոյթը երիտասարդներուն փողոցը թքնելն է, որ իսկապէս գէշ տպաւորութիւն կը գործէ յատկապէս օտարներուն դիմաց:

Տղայ-աղջիկ իրար փաթթուած, սիրային տեսարանները բացայայտ են այստեղ, ամչնալ չկայ, բան մը, որ թապու էր մեր մօտ, քանի որ միջավայրը պահպանողական էր եւ ընտանեկան սրբութիւնն ու շրջահայեացութիւնը չէին արտօներ նման բացօթեայ վարմունք: Մկիզները բոլորս ալ կը ցնցուէինք այդ տեսարաններէն, յետոյ կամաց-կամաց վարժուեցանք:

Հալէպահայերէն շատեր, յատկապէս գործարարներ ու շուկայի վրայ վաճառատուն, կամ ճաշարան ունեցողներ արդէն իւրացուցած են արեւելահայերէնը, յատկապէս դպրոցականները, սակայն մեծերը կառչած կը մնան արեւմտահայերէնին: Խանութներուն մէջ օգտագործուող օտար անուններուն ճիշդ հայերէնը կը փորձենք ըսել եւ ակնկալել որ կը յաջողինք, սակայն հազիւ քանի մը անուն, մնացածը իրենց գիտցածը չեն փոխեր: Բամիտորին լոլիկ ըսել սորվեցան, բաթրիճանին սմբուկ ըսելն ալ, բայց գետնախնձորին «կարտօֆիլ»-ը չփոխեցին, ոչ ալ ազատքեղին՝ «մադտանոս»-ը, կամ ստեպդինին՝ «գազար»-ը:

Հալէպահայերը ԳԱՆՁ մը ունին, որուն իսկական արժէքին կ'անդրադառնան երեւանաբնակ հալէպահայերը շատ աւելի, սիրով, կարօտով ու յուզումով, քան Հալէպ ապրողները: Հաւանաբար շատեր կռահեցին, իսկ չանդրադարձողներուն ըսեմ, այդ մեծ գանձը մեր հայկական ԱԿՈՒՄԲՆԵՐՆ են: Չեմ չափազանցեր, այդ ակումբները ինչ հսկայ օգուտներ տուած են սերունդներուն, եղած են մեր իսկական երկրորդ տունը, ուր պահպանած ենք մեր հայու նկարագիրը, լեզուն, պատմութիւնը, բարքերն ու ասանդոյթները բազմատեսակ մարզական, սկաուտական, մշակութային եւ այլ ձեռնարկներու միջոցով: Հոն իրարու հանդիպած ու ընկերութիւններ ստեղծուած են, նաեւ հոն տղայ ու աղջիկ իրարու



հանդիպած, համակրանքը սիրոյ առաջնորդած ու սերը զիրենք միացուցած եւ նոր հայ ընտանիքի մը հիմը դրած են: Քիչ բան չէ, հայապահպանման միջնաբերդերը եղած են մեր ակումբները: Երեւանի մէջ զրկուած ենք այդ բարիքէն, անոր համար այնքան դժուարութիւն կը գտնենք հաւաքուելու եւ ձեռնարկ մը յաջողցնելու: Ափսոս ս:

Կը սիրեմ երեւանցիներուն յարգալից վերաբերմունքը մասնաւորապէս տարեց մարդոց նկատմամբ: Ամէն հանրակառք բարձրանալուս, ինչքան ալ խճողուած ըլլայ, անպայման մէկն ու մէկը ոտքի կ'ելլէ ու տեղը ինծի կը տրամադրէ: Կը սիրեմ նաեւ իրենց կոչականները տարեցներուն, որոնցմէ մին ալ ես եմ, շոյուած կը զգամ, երբ «Հոբբա՛ր, պապի՛, կամ հայրի կ» ըսելով կը դիմեն ինծի:

Երեւանի ամենատղեղ երեւոյթը մուրացկաններն են, որոնցմէ շատեր արդէն գործի վերածած են եւ տարիներէ ի վեր նոյն վայրին մէջ կը մնան ու անցնող-դարձողին ձեռք կը բանան: Ըտողներ կան, որ անոնցմէ շատեր «գործատէր»-ի մը հաշույն կ'աշխատին: Քանիցս գրած եմ այս մասին, բայց բան չի փոխուիր:

Իբր թէ թշնամի ենք ու մեր եւ Թուրքիոյ միջեւ սահմանը բաց չէ, ոչ ալ արտօնուած ներածում-արտածում ունինք, սակայն Հայաստանի շուկաները կը յորդին թրքական բազմատեսակ ապրանքներով: Կը գրենք, կը խօսինք, նոյնիսկ պետական որոշում առնուած էր թրքական ապրանքներու ներածումը արգիլող, սակայն «պիզնէսմաններն» ու անոնց հովանաւորները ողջ ըլլան...

Հայաստանի մէջ հարուստը՝ շա՛տ հարուստ է, աղքատն ալ՝ շա՛տ աղքատ: Մէկ կը նայիս քաղաքին մէջ վիտագող ամենաարդիական, ամենաշքեղ ու սուղ մեքենաներուն, կամ հարսանեկան խրախճանքներուն մսխուած անհաշիւ տոլարներուն, մէկ ալ կը նայիս աղբամանները գրգռողներուն ու կը զարմանաս, քիչ մըն ալ կը զայրանաս:

Դեռ շատ բաներ կան, որոնց մասին կարելի է անդրադառնալ, բայց այսքանն ալ որոշ պատկեր մը կը ներկայացնէ ու նիւթ կը հայթայթէ դիտարկումներուս:

Հայաստանը իր ճերմակով ու սետով մե՛րն է, փոխել, փոխանակել չըլլար. աշխատինք պահել զայն մեր աչքին լոյսին պէս:

Աղբիւր՝ «Գանձասար-Բացառիկ 2024»

<http://www.kantsasar.com/news/48181-2/>

ՏԵՍԱԿԷՏ

«Գ. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ»Ը ՄՇՈՒՇՆԵՐՈՒ

ԸՆԴՄԷՋԷՆ ԿՐ ԽԼՐՏԻ ՈՒ ԿՐ ՍՈՂՈՍԿԻ

Պարոյր Յ. Աղպաշեան



Աշխարհը գազանացած է, թե՛ մարդկութիւնը:

Ինքզինք պարտադրող հարցում, որովհետեւ՝ թե՛ աշխարհը, թե՛ ալ մարդկութիւնը ոչ միայն գազանացած են, այլեւ՝ այլանդակօրէն խելագարուած:

Բոլոր կողմերուն ախորժակները այնքան խոր ու լայն են, որ կը սպասեն թէ ինչպէ՛ս կրնան հուպ տալ ու լկլկել դիմացիները, ամենէն վայրագ, ահագնագոյն ու բիրտ



միջոցներով:

Առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմները չկշտացուցին վիշապները, իսկ «Պաղ պատերազմ»ը պարզապէս շինծու եւ արուեստական «զինադադար» մըն էր, նոր որոգայթներով ու նորագոյն դարձարձիկութիւններով, զիրար յօշոտելու, ապակայունացնելու շրջապատը բազմատեսակ խաղքութիւններով, աշխարհը պառակտելու ու մարդկութիւնը ստրկացնելու գնով:

Խնդիրը այն է, որ ոչ միայն մեծապետական ու կայսերական երկիրները կը դիմէին ճնշողական եւ արկածախնդրական միջոցներու՝ քանդողական եւ այլամերժական քաղաքականութեամբ, այլեւ՝ իրենց ետին քարշ տալով նաեւ երբեմն խեղճուկրակ, ճղճիմ ու գունաւոր գաճաճ պետութիւններ, իսկ անոնք հաւատալով որ այդ «մեծ»երը կրնան դառնալ իրենց «փրկիչ»ները, վերածուեցան «պոչիկ»ներու չանդրադառնալով, որ նման անհեթեթութիւններով իրենց համար միայն աղէտներ կրնան ստեղծել:

Եւ այսպէս, «խաղաղութիւն»ը դարձաւ... առասպել, վերածուեցաւ... ցնորքի, չմնաց ոչ բարեկամութիւն եւ անկեղծութիւն, դաշնակցութիւն ու մտերմութիւն, ընկերութիւն ու հաւատարմութիւն, այլ՝ գերիշխեց միայն ու միայն.

- Ատելութիւն՝ իր սարսափելի սրութեամբ
- Թշնամութիւն՝ իր ահաւոր մագլցումներով
- Բռնութիւն՝ իր գազանային զարգացումներով
- Նենգամտութիւն՝ իր ստորին հետեւանքներով
- Բնաջնջութիւն՝ իր աղիտալի դրոշմներով

Չուր տեղը կարգ մը կողմեր միամտութիւնը ունեցան կարծելու կամ հաւատալու, որ աշխարհը կրնայ ընթանալ դէպի կայունութիւն, իսկ մարդկութիւնը՝ խելամտութիւն:

Մինչ սատանայական չարիքները ու թաթերը, օր-ցերեկով, սփռուեան գրեթէ ամէն ուղղութեամբ, զաւթողական ռազմաքաղաքականութիւն պարտադրելով՝ հոն ուր կրնային, այլապէս ալ դիմելով ամէն տեսակի չարագործութեանց, չարամտութեանց ու չարախօսութեանց, միայն հասնելու համար իրենց դժոխային նպատակներուն:

Այս է պատճառը, որ ամենուր կը տիրէ վերիվայրութեան վտանգաւոր տեղաշարժեր, ճակատումներու մնայուն գործընթացներ, բռնկումներու անդադար երեւոյթներ, որոնք բոլորն ալ կը գուժեն ու կը յուշեն. ԱԻԵՐՆԵԲ ու ՄԱՀԵԲ:

Իրաւունք ունին շատեր մտածելու, թէ այլեւս անիմաստ է աշխարհը հականեխելու որեւէ կարելիութեամբ ու միջոցառումով, քանի՛ չկան իսկակա՛ն ուղղամիտներ ու բարեպաշտներ, անաչառներ ու փրկարարներ, որոնք կրնան (կամ ուժ ունին) պայքարելու այն կործանարարութեանց դէմ, որոնք համակուած են ջարդարարութեան, փճացութեան, ընչաքաղցութեան, արծաթասիրութեան գործարքներով:

Բոլոր այն լոզունգներն ու ճիգերը, որոնցմով փորձ կը կատարուի «լաւատեսական» ըլլալ կամ բարի ու կառուցողական դրոյթներով հանդէս գալ, միայն փուճ ու կեղծ, սին եւ անճիշդ շաղակրատութիւններ են, առանց ամուր հիմքի ու լուրջ տեսիլքի, որովհետեւ ատոնց մեծ մասը քաղաքական ու քարոզչական անլուրջ ու թեթեւսովիկ վերաբերմունքներ են:

Արեւմտահայութիւնը ոչ միայն տեսաւ, այլ՝ ապրեցաւ այն դաժանութիւններն ու վայրագութիւնները, որոնք կիրարկուեցան իր դէմ, հողով թէ բնակչութեամբ փորձելով անճիտել իր գոյութիւնն ու էութիւնը, իսկ կարծրամիտ, անողոք եւ անգութ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ աշխարհը միայն դիտեց ու «վայելեց» նախճիրային ցեղասպանութիւնը, որ իր առջեւ պարզուեցաւ, իսկ «պոռնիկ» Եւրոպան կոկորդիլոսի արցունքներ իսկ չթափեց, պարզապէս անոր համար, որ Օսմանեան բռնագրօսիկ (չ)պետութիւնը իրեն համար շատ աւելի կարեւոր եւ անփոխարինելի էր:

Փաստօրէ՛ն, նոյն արիւնարբոններն են, որ այսօր կը տքնին շարունակել իրենց բռնաբարութիւններն ու պղծաբանութիւնները, ոտնակոխ ընելով այլոց իրաւունքները,



սրբութիւնները, նուիրականութիւնները ու սեփականութիւնները, միշտ յանուն (՞) իրենց շահերուն ու հաշիւներուն, բայց, բարբառելով ու բարբաջելով խաղաղութեան կարգախօսներու անունով:

Այլեւս ի՞նչ իմաստ ու դեր ունին այն միջազգային կառոյցները (ՄԱԿ, Եւրոպական Միութիւն, Խորհուրդ, խորհրդարան կամ մարդու պաշտպանութեան հիմնարկութիւն), երբ ձեռնունայնութեամբ, անգորութեամբ եւ ապիկարութեամբ վարակուած ու սրսկուած են, առանց կարենալու «մատ» շարժել, երբ իրենց այժմին առջեւ անիրաւութիւններ եւ անարդարութիւններ կուտակուած են, իսկ իրենք կը մնան «պատկեր»ներու դերակատարութեան մէջ:

Եթէ միջազգային խաղաղապահ եւ իրաւապահ հեղինակութիւնները պիտի չկարենան զապել նախայարձակ ու բռնատիրական երկիրները, ալ ինչո՞ւ համար է անոնց ներկայութիւնը եւ ո՞ր կ'արժեւորուին անոնց դերակատարութիւնները:

ՆԱԹՕն՝ այդ ԳԻՇՄՏԻՉ համաեւրոպական կէդրոնախումբը, իր անսահման եւ անզապելի իրաւասութիւններով, ինչո՞ւ կը պահուի, որո՞ւն պաշտպանելու, որո՞ւն հալածելու եւ որո՞ւն ծառայելու, այնքան ատեն որ՝ «շան գլուխը» իր մօտ պահուած է եւ, զարմանալ թէ ոչ, ան անարգել կը գործէ, կը լկտիանայ ու կը լրբանայ, ոչ միայն իր ընդհանրացումով, այլեւ՝ նուաճելով ու գրպանելով այնպիսի աշխարհաքաղաքական գօտիներ, որոնք ԻՐՇ չեն, բայց, ինք եւ իր պարագլուխները լուռ ու մունջ, բրտօրէն եւ անսկզբունքօրէն կը յամենան իրենց ոլորապտոյտին մէջ:

Վերջին հաշուով, եթէ արդարախոհ հիմունքներով պիտի առաջնորդուին աշխարհն ու մարդկութիւնը, լա՛ւ, ուրեմն, ինչպէ՞ս պիտի բնորշուի կամ սահմանուի, որ ՆԱԹՕ մը, իր «կաթօ»ի ախորժակով մինչեւ ո՞ր կրնայ երթալ եւ ո՞ր հանգրուանիլ:

ՆԱԹՕի մաս կազմող խամաճիկ երկիրներու մեծամասնութիւնը, արդէօք ո՞ր կը փնտռէ իր հեղինակութիւնը եւ ո՞ր կը գտնէ իր մեծութիւնը, երբ չունի ո՛չ խօսք, ո՛չ իրաւունք, նոյնիսկ արժանապատուութիւն ազատօրէն հանդէս գալու, այնքան ատեն որ՝ իր դերը միայն «Yes man»ն է:

Եթէ Թուրքիոյ նման զաւթող պետութիւն մը իր գիրկին մէջ առած է, կը գգուէ ու կը շոյէ զայն, կը հովանաւորէ ու կը զօրակցի անոր, ալ պէտք է երեսակայել, թէ այս վայնասուն կազմակերպութիւնը ինչպիսի՛ հունի մէջ կը գտնուի ու տակաւին ո՞ր կրնայ թառիլ ու «թոցնել» պետութիւններ ու ժողովուրդներ, եթէ չհնազանդին իր «օրէնքներուն ու ցուցմունքներուն», այլապէս կրնան ենթարկուիլ խիստ պատիժներու կամ դատապարտուիլ ամենէն ծանր ամբաստանութիւններու:

Մօտալուտ անցեալին, ամբողջ Արեւելեան Եւրոպան, ընդ հովանեաւ Խորհրդային Միութեան, տարանջատուեցաւ, անշուշտ, այդ քայքայումին պատճառը, եթէ մէկ կողմէն՝ արտաքին ուժերն էին, միւս կողմէն՝ ներքին ցեցերն էին, որոնք, այսպէս թէ այնպէս, բոլորն ալ զարկ տուին զայն անգոգնելու ու փետրաթափելու գործին:

Այդուհանդերձ, Ռուսաստանը մնաց իր ցարականութեան թէ՛ շրջագիծին, թէ՛ ուղեգիծին, թէ՛ պարունակին մէջ, հոգ չէ թէ նուազ ուժականութեամբ ու նպատակասլացութեամբ, բայց, մնալով հզօրութեան եւ անառիկութեան սահմաններուն մէջ:

Հո՞ւ է, որ «յայտարարուած» Գ. համաշխարհային պատերազմը սկսաւ թեւաճել քիչ մը ամեն տեղ, քանի որ Ամերիկան կը կարծէր միայնակ գլխաւորել աշխարհի ղեկավարութիւնը ու ՆԱԹՕական տորմիդները, երբ ձեռնարկեց մէկէ աւելի շրջաններու մէջ նոր ակօսներ, ու իրամատնէր փնտռելու ու գրգռելու արկածախնդրութեան, մանաւանդ այն մարզերէն ներս, ուր Ռուսիոյ դաշնութիւնը ներկայութիւն էր (հարաւային Կովկաս) եւ կամ Միջին Արեւելքը իրեն համար «խաղաղ» վայր մըն էր, ուր կային իրեն համար մե՛ծն ֆաշիստական ցանց մը եւ կարգ մը արաբական յեղեղուկ երկիրներ, որոնք կրնային իր «ՎԱՌԱԾ»



քաղաքականութեան հետ հաշտ առընչութիւններ ունենալ, կամայական թէ շահաբերական առումներով:

Ներկայ դրութեամբ եւ յատկապէս պաղեստինեան Կազայի պատերազմի բռնկումով, յայտնի է, որ երրորդ անգիր, բայց գործնական պատերազմը սկիզբ առած է, առանց սակայն մնալու այդ սահմաններէն ներս, այլ՝ հետզհետէ, լռելեայն թէ ոչ, տեսանելի թէ ոչ, տարածուելով այլ շրջաններ, որոնք անգամ մը եւս կը հաստատեն, որ այդ պատերազմը ազդանշան մըն է... շարունակականութեան մը, տարածքային նոր բաժանումներով, սահմանային նոր գծումներով, ինչ որ ենթադրել ու հաստատել կու տայ, թէ «փակ քարտէս»ները արդէն սկսած են գծուիլ ու կամաց-կամաց կծիկները բացուիլ:

Անհանդուրժելի միամտութիւն պիտի ըլլար, պահ մը երեւակայելու, որ մեր հայրենիքը այդ փխրուն ծիրերէն դուրս կը գտնուի, երբ 2020 թուականին արդէն պարզուեցաւ, որ ան ինչպիսի դառն ճակատագիրի ենթարկուեցաւ, որուն պատճառներէն էին ե՛ւ հայկական կողմը ե՛ւ շրջանային ուժերը, ատոնք ըլլան Ատրպէյճանը, Թուրքիան, Իսրայէլը, Ռուսիան եւ առ հասարակ նոյն անբարոյ Արեւմուտքը, որոնք Ուքրանիոյ պատերազմը, ամէն մէկը իր «ակնոց»ով դիտեց ու դատեց, ստեղծելով անկանխատեսելի եւ անփառունակ խառնիճադանձ մը:

Դժբախտաբար, հայկական կողմը (իմա՝ հայրենիքը) չափէն աւելի եւ աններելիօրէն կարճատես գտնուեցաւ (ու տակաւ կը գտնուի), չանդրադառնալու ու չխորաչափելու, թէ ո՞ր հորիզոնականներու վրայ պէտք է ուղղուի կամ շարժուի, որպէսզի «ցունամի»ական այս փոթորկոյ ալիքներէն դուրս գայ կամ չդառնայ անոր հերթական «գոհ»երէն մէկը, երբ իր դիմաց պիտի շարունակէ գտնել.

- Կեղծապատիր Արեւմուտքը
- Կողմնակալ Ամերիկան
- Հրէշածին ՆԱԹՕն
- Լարախաղաց Թուրքիան
- Արուեստական Ատրպէյճանը
- Խափանարար Իսրայէլը

Այս ընդգծումները եւ արձանագրութիւնները, որոնք բոլորն ալ հիմնուած են մեկնաբանութիւններու ու քննարկումներու շրջագիծերէն ներս, դիտորդները ու հետեւորդները կ'առաջնորդեն այնպիսի եզրակացութիւններու, որոնք իրենց ընդհանրութեան մէջ, կրնան ուռուցիկ նկատուիլ, բայց, իրականութիւն ըլլալէ չեն դադրիր, սպասելով մօտակայ զարգացումներուն...:

Մեր Դիտարկումով ու Դատումով

(Պէյրութ)

ՓՈՂՈՑ ՆԵՏՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ, ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԲԵՂԵԱՆԱԿԱՆ ՈՒՂԱԳՐՈՒԹԻՒՆ...

Գրեց՝ Լեւոն Շառոյեան

Մայրամուտը իր դեղնաւուն վերջին շողերը հաւաքել սկսեր էր: Քառորդ ժամէն երկինքը մթնցած պիտի ըլլար արդէն ու խանութները քիչ-քիչ վար պիտի իջեցնէին իրենց երկաթեայ վարագոյրները...: Օրուան «աշխատանքային» ժամերը վերջ պիտի գտնէին այսպէս, ու պիտի սկսէին միւս՝ «հանգիստի» երեկոյեան ժամերը:

Տուն կ'ուղղուէի ե՛ս ալ: Իմ բնակարանէն երեք թաղ անդին էի:

Կիսամութին մէջ, ծառի մը տակ, փողոց նետուած կաշեկազմ գիրքերու տրցակներ



նշմարեցի: Բնագործէն զուխս հակեցի դէպի այդ տրցակները՝ գո՛նէ ստուգելու համար թէ արաբերէ՛ն հատորներ էին անոնք, թէ՛ հայերէն...: Թաղամասը կիսով հայաբնակ ըլլալուն՝ ներելի էր կասկածիլ, թէ փողոց շարտուած այդ գիրքերը կրնային նաեւ հայերէն ըլլալ...:

Չէի սխալած: Բոլոր գիրքերն ալ հայերէն էին: Թիւով՝ թերեւս քսանհինգի չափ: Ջախջախիչ մեծամասնութեամբ՝ հայաստանեան տպագրութիւն: Խորհրդային շրջանի

դասական գրականութեան ժողովածուներ. քանի մը հատոր Դերենիկ Դեմիրճեան, Շիրվանզադէ, Գարեգին Բէս, Պոռշեանէն, Մուրացանէն եւ Խանզադեանէն վէպեր, Գարեգին Մելունցի «Թեհրան» վիպաշարքի զոյգ հատորները եւ հաստափոր «Սովետահայ գրականութեան պատմութիւն» մը: Ու այս բոլորին վրայ՝ երկու Չարենց. մին՝ Հայաստան տպուած ընտրանի մը, միւսը՝ Հալէպ տպուած «Գիրք ճանապարհի»-ի օրինակ մը:

-- Օ՛, «Գիրք ճանապարհի»-ն փողոց նետուելիք զի ըք է,-- մտածեցի անմիջապէս:

Ո՞ր անխիղճն էր, որ իր գրադարանը հաշուեյարդարի ենթարկեր էր այսպիսի տգեղ արարքով մը: Խղճի խայթ չէ՛ր ունեցած այդ անձանօթ պարոնը կամ տիկինը՝ երբ երեւելի հայ գրագէտներու գործերը գրադարանի մը դարաններէն վար առնելով՝ շալկեր-իջեցուցեր էր փողոց ու անփութօրէն նետել էր մայթի մը վրայ...: Դպրոցական կամ համալսարանական զաւակներ չկայի՞ն այդ տան մէջ: Կամ՝ հայերէն տպագիր խօսքը այդքա՞ն վանողական սկսեր էր դառնալ հայ տուններէ ներս...:

Գիտէի, թէ վաղը, կանուխ առաւօտուն, գիրքերու այս անբախտ տրցակները հոս պիտի չըլլային: Թաղին աղբահաւաքը զանոնք վերցուցած պիտի ըլլար գոհունակութեամբ: Պիտի տաներ ու յանձնէր թուղթի վերարտադրութեան գործարանին, փոխարէնը գանձելով կոկիկ զումար մը:

Իսկ ես՝ ի՛նչ պէտք էր ընէի այդ պահուն, այդ ժամուն: Երանի՛ կարենայի փրկել այդ թողօնը ամբողջութեամբ: Սիրտս կը մղկտար: Բայց...

Ուզեցի գո՛նէ հատոր մը վերցնել տրցակներուն մէջէն՝ թերեւս խղճահարութեան չմատնուելու մտօք...: Նախընտրութիւնս գնաց Չարենցի զոյգ հատորներուն:

Առի զանոնք թելիս տակ ու տուն ուղղուեցայ:

*

Հետաքրքրական էին երկու հատորներն ալ, մէկը միւսէն տարբեր՝ թէ՛ բովանդակութեամբ, թէ՛ ծաւալով, թէ՛ չափով ու ծանրութեամբ, թէ՛ ուղղագրութեամբ (մին՝ աբեղեանական, միւսը՝ դասական) եւ թէ՛... կարդացուած կամ չկարդացուած ըլլալու բախտով:

Արդարեւ, Հալէպ տպուած օրինակին էջերը դեռ կոյս էին. ո՛չ մէկ մատ հպած էր անոնց, քանի որ տպագիր քառածալ էջերը դեռ չէին անջատուած մէկգմէկէ...: Իմ առաջին գործն եղաւ սրաբերան շեղփով մը 250 էջերը բաժնել իրարմէ ու շո՛ւնչ տալ անոնց: Գիրքին տպագրութեան թուականն ալ յստակ չէր: Միայն նշուած էր, որ ատիկա «Արեւելք» տպարանի արտադրանքն էր: Պիտի ենթադրեմ, որ 50-ական թուականներու հրատարակութիւն մըն էր այս:

Միւսը՝ հայաստանեան «Ընտիր երկեր»-ը, մեծածաւալ հատոր մըն էր ու կը կարծեմ թէ բանաստեղծին եղերական մահէն տարիներ ետք, «յետ արդարացումի», իրմէ տպուած



առաջին գիրքերէն մէկն ըլլալու էր: Լաթակազմ կողքը թեթեւօրէն մաշած էր, ինչ որ ենթադրել կու տար, թէ գիրքը... կոյս չէր, կարդացուեր էր: Թուական՝ 1955: Էջաթիւ՝ 484: Խմբագիր՝ Սողոմոն Տարօնցի: Օրուան Հայպետհրատը այս հատորէն տպեր է ճիշդ ու ճիշդ 25.000 օրինակ...: Կրնա՞ք երեւակայել: Ո՞ր է հիմա ընթերցասէր այդ խաւը:

*
Հալեպէն արտագաղթը կը շարունակուի մեծ թափով: Գաղութը արագօրէն կը նօսարանայ: Գաղթող ընտանիքները դէպի Գանատաները կամ Եւրոպաները կը փոխադրեն իրենց ամէ՛ն ինչը, բացի... գիրքերէն: Այդ գիրքերն ալ ո՛չ կը ծախուին, ո՛չ ալ իբրեւ նուէր կ'ընդունուին բարեկամներու կողմէ: Անբաղձալի՛ գիրքեր: Երբեմն անոնք, բարեբախտաբար, կը նուիրուին ակումբներու կամ դպրոցներու գրադարաններուն, այն յոյսով որ՝ թերեւս այնտեղ գտնեն գուրգուրոտ ձեռք մը կամ հետաքրքիր աչք մը: Բայց ո՞ր է ընթերցասէր խաւը: Աւելի ճիշդ՝ ընթերցասէր խաւ մնա՞ց...:

*
Որպէս մէկը, որ հետեւողականօրէն շփման մէջ է մեր հանրային ու դպրոցական գրադարաններուն հետ, կրնամ վկայել, որ մեր ընթերցող փոքրաթիւ խաւն անգամ կը խորշի հայաստանեան գրականութենէն: Ասոր պատճառը լեզուն (արեւելահայերէնը) չէ: Մերոնք արեւելահայերէնը կը հասկնան, կը կարդան ու կը սիրեն կատարելապէս: Սփիւռքեան մեր դպրոցական դասագիրքերուն մէջ գրեթէ հաւասար չափով տեղ տրուած է արեւմտահայ ու արեւելահայ հեղինակներու: Դուրեանի ու Թեքէեանի կողքին մենք կը սորվինք Ռ. Պատկանեանն ու Թումանեանը: Գրիգոր Զօհրապի, Արփիարեանի ու Վարուժանի կողքին՝ մեր աշակերտները սիրով կ'ընթերցեն Սունդուկեան, ՐաՖֆի ու Տէրեան: Բայց Հայաստանէն հասած գիրքերու ուղղագրութիւնն է որ կը խրտչեցնէ մեզ: Եւ՝ արդարօրէն:

Սփիւռքի հայկական ամէնօրեայ վարժարաններուն մէջ մեր աշակերտները, մեծաւ մասամբ, խոցելի են թէ՛ իրենց կադացող, ոչ-հեզասահ ընթերցանութեամբ (խօսքը հայերէնի մասին է), եւ թէ՛ մանաւանդ իրենց խայտառակ ուղղագրութեամբ: Հայերէնաւանդ ուսուցչուհիները որքան ալ ճիգ վատնեն բարելաւելու հայ աշակերտին ուղղագրութիւնը, այդ ճիգը գրեթէ չ'արդիւնատրուիր ու չի յանգիր գոհացուցիչ փուլի: Երկրորդական կարգերու մեր 16-17 տարեկան պարման-պարմանուհիներուն 80 առ հարիւրին ուղղագրութիւնը վիատեցուցիչ է ու սարսափելի...:

Ուղղագրական այս խեղճութիւնը բառնալու ՄԷԿ միջոց կայ. ԿԱՐԴԱ՛Լ: ՇԱՐՈՒՆԱԿ ԿԱՐԴԱԼ: Իսկ մեր աշակերտութիւնը, իմա՛ նոր սերունդը, չ'ուզեր կարդալ, չ'ախորժիր կարդալէ: Ու եթէ գտնուին քանի մը աշակերտներ, որոնք փորձուին հայատառ գիրքի մը ձեռք զարնել, հայրենաւանդ ուսուցչուհին պիտի զգուշացնէ. «Չըլլա՛յ որ հայաստանեան գիրք կարդաս. աստոր ուղղագրութիւնը տարբեր է: Սորվածդ ալ կը մոռնա՛ս ու շփոթի կը մատնուիս»...:

Ճիշդ այս պատճառով ալ՝ հայաստանեան գրականութիւնը գրեթէ ընթերցող չունի մեր շրջանակներուն մէջ: Մինչդեռ, այդ գրականութիւնը, խորհրդայինն ու յետխորհրդայինը, որքա՛ն ճաշակաւոր ու բարձրարժէք գործեր ունի իր ցուցակներուն մէջ:

Ի՛նչ ըսել: Ուղղագրութեան պատնէշը ի՛ սկապէս ալ կը խափանէ շատ-շատերու ընթերցումի ցանկութիւնը: Եւ հոս՝ դա՛րձեալ կը ստիպուիք ամփոսալ մեր ժողովուրդի երկու թելերուն ուղղագրական տարբերութեան վրայ:

Գիտենք, որ Խորհ. Հայաստանի առաջին տարիներուն ինչ-ինչ դրդապատճառներով ուղղագրական «ռեճորմ» մը պարտադրուեցաւ հայրենի մեր ժողովուրդին ու գիր-գրականութեան: Մեսրոպեան դասական ուղղագրութիւնը փոխարինուեցաւ արեւելեանականով: Նոր ուղղագրութիւնը իբրեւ թէ «կը դիրացնէր» հայերէնը, գրաճանաչութիւնը կը ժողովրդականացնէր: Բայց անիկա տակնուվրայ կ'ընէր հայերէնի



բառերուն արմատները, ամէն դուռ կը գոցեր բառերու ստուգաբանութեան առջեւ: Երկփեղկում կը ստեղծէր հայրենաբնակ հայուն ու արտասահմանի իր արինակիցին միջեւ: 1991-ի անկախութենէն ետք, սակայն, գո՛նէ կը սպասուէր որ հայրենի պետութիւն ու առնչակից պետական հիմնարկներ (Մշակոյթի եւ Սփիւռքի նախարարութիւններ, Ակադեմիա, համալսարան, Գրողներու Միութիւն եւ այլն) օրակարգի բերէին ուղղագրութեան փշոտ հարցը ու սփիւռքի մտաւորականութեան հետ խորհրդակցաբար՝ վերացնէին ուղղագրական երկձեւութիւնը, դէպի դասականութիւն վերադարձի յստակ մտասուեռումով: Անցնող սա 30 տարիներու ընթացքին ո՛չ մէկ լուրջ քայլ առնուեցաւ այդ ուղղութեամբ: Ընդհակառակն: Եթէ նոյնիսկ քանի մը խորհրդածողովներու մէջ սփիւռքէն ոմանք տրամաբանական առաջարկներ բերին հայրենի լեզուաբաններու կամ ակադեմականներու սեղանին, ատոնք մերժուեցան քամահրանքով...: Հայաստան յամառօրէն կառչած մնաց արեղեանական ուղղագրաձեւին ու մերժեց դասականին մերձենալու փոքրիկ քայլերն իսկ: Ու թերեւս իբրեւ լուռ հակադարձութիւն՝ այսօր Հայաստան իր սխալ ուղղագրութիւնը կը ջանայ արտածել մինչեւ Ամերիկա...:

Անմիաբանութիւնը մեր ծուծին մէջ է՝ բոլո՛ր մարզերուն մէջ, ներառեալ՝ ուղղագրականը: Եթէ իրապէս կը հաւատայինք չարենցեան պատգամին («Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»), անցնող սա 30 տարիներուն շատո՛նց լուծած պէտք էր ըլլայինք ուղղագրական թնճուկը:

Տեսէ՛ք. թուրքը որքան խելացի կերպով, հետեւողականօրէն ու ծրագրեալ հեռանկարներով յառաջ կ'ընթանայ դէպի իր մեծ նպատակները: Ան որքա՛ն անակնկալօրէն տէր դարձաւ Արցախին՝ երեք օրուան մէջ հայաթափելով ամբողջ Ղարաբաղը ու անոր հայ նախագահին իսկ ձեռքով «լուծարել» տալով արինով կերտուած հանրապետութիւն մը: Հայերս մնացինք շշմած ու հանդիսատես: Ասիկա թուրքին ռազմական ու քաղաքական փառաւոր յաղթանակն էր: Մեր պարագային՝ անփառունակ ու յաւերժօրէն ամօթալի նուաստացուցի չ պարտութիւն մը:

Թուրք աշխարհը, հիմա, տենդագին լծուած է նոր աշխատանքի մը, որ կը միտի այբուբենական միաձեւութիւն ստեղծել թրքացեղ հանրապետութիւններու միջեւ: Այս կարելոր նախաձեռնութեան պարագլուխը Անգարա՛ն է դարձեալ: Վերջերս, Ղազախստանի մայրաքաղաք Ասթանայի մէջ գումարուած թրքացեղ երկիրներու 10-րդ համաժողովին 3(Նոյեմբեր 2023), Թուրքիոյ նախագահը օրակարգի դրաւ մասնակից եօթը պետութիւններուն մէջ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՅԲՈՒԲԵՆ մը որդեգրելու ծրագիրը, որ կը միտի հրաժարիլ կիրեղեան (ռուսական) ու արաբական տառերէն եւ վերջնականապէս ընդունիլ լատինական այբուբենը, Թուրքիոյ նմանողութեամբ:

Ահա՛ կարելոր ու բախտորոշ քայլ մը եւս՝ փանթուրանիզմի ճանապարհին վրայ: Արցախեան ՊԱՏՆԷՇԻՆ քանդումէն ետք (խիստ պատմական ծանրակշիռ քանդում մը, որ իրականացաւ ռուսական օրհնութեամբ...), այս քայլով՝ Թուրքիա մշակութային ու գրաւոր հաղորդակցութեան զօրեղ կամուրջներ պիտի հաստատէ Միջին Ասիոյ իր հոգեկից եղբայրներուն՝ Ղազախստանի, Բուլղարիստանի, Կրգիզիստանի եւ Թիւրքմէնիստանի հետ: Ազրպէյճանի հետ համարկումը արդէն կատարեալ է բոլո՛ր մարզերու մէջ: Ահա այսպէս, վեց երկիրներ, իրենց գիրքը առնելով նաեւ «Հիւսիսային Կիպրոսի Թուրք Հանրապետութիւն»-ը՝ իբրեւ եօթերորդ կրտսեր եղբայր, կազմած պիտի ըլլան Պուկլարիոյ սահմաններէն մինչեւ Չինաստանի պարիսպը երկարող Թուրք Աշխարհը: Արդէն, Ասթանայի սա վերջին գագաթաժողովին մայր լոզունգն էր «Թուրք դարաշրջան»...

Թուրքը կը ծրագրէ ու կ'աշխատի հեւ ի հեւ՝ ապահովութեան տակ առնելու համար իր ցեղին ապագան ու բարօրութիւնը:

Իսկ ի՞նչ կ'ընենք մենք: Այո՛, մենք ալ քնացած ենք ուղտի ականջին մէջ...
Հալէպ



"ՊԱՅՔԱՐ" շաբաթաթերթ, 28 Յունուար 2024

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇԱՏ ԼԱԻ Է, ԲԱՅՑ ՀԱՅԱՍՏԱՆՑԻՆ...»

Լիւսի Տօքսփէճեան, Երեւան, 31 յունուար 2024



Շատ յաճախ սփիւռքահայերու բերնէն լսած եմ այս արտայայտութիւնը. «Հայաստանը որպէս երկիր շատ լաւ է, բայց հայաստանցին...»: Բազմակէտերը ոչ թէ գործածուած անական(ներ)ը չմէջբերելու համար են, այլ որովհետեւ տարբեր անձեր տարբեր բնորոշում(ներ) տալով շարունակած են այդ նախադասութիւնը:

Միշտ մտածած եմ, որ սփիւռքահայը գուցէ նախապաշարուած է հայրենաբնակ իր ազգակիցին նկատմամբ, որովհետեւ, ինչո՞ւ թաքցնենք, մանաւանդ տարիներ առաջ, երբ համեմատաբար շատ քիչ էր հայաստանցի-սփիւռքահայ շփումը, այս երկու ազգակից հայերը երբեմն իրարու կը հակադրուէին՝ իրարմէ տարբեր ըլլալու իրականութեամբ: Նպատակս նոյն՝ հայ ազգի գաւակներու միջեւ գոյութիւն ունեցող նկարագրային ու բնաւորութեան գիծերու տարբերութիւնները ընդգծել, կամ առաւել եւս՝ լուսարձակի տակ առնելով խտրականութիւն ընել չէ երբեւէ, քաւ լիցի: Բայց այս արտայայտութիւնը աւելիով վրդովեցուցիչ գտայ, երբ վերջերս նոյնը լսեցի Հայաստանի մէջ բնակող այլազգի աշխատատրե՛ մը, որ գովասանքով կը խօսէր Հայաստան երկրին մասին, բայց կը դժգոհէր ժողովուրդին կոշտ կամ անազնիւ ըլլալու փաստէն:

Դժբախտաբար, կարելի չէ չնկատել վերոնշեալ օտարազգիին մատնանշած իրողութիւնը: Ի հարկէ պիտի չուզէի, որ այսպիսի կարծրատիպ ստեղծուէր օտարներու մէջ, ոչ ալ ընդհանրապէս հայերու մէջ՝ իրարու մասին, բայց իրօ՞ք հայրենաբնակ հայն ունի նկարագրի գիծ մը, վարուելակերպ մը, որ յաճախ կոշտ կամ անազնիւ ըլլալու բացասական տպաւորութիւնը կը ստեղծէ դիմացինին մէջ, մինչեւ իսկ, որոշ ծայրայեղ պարագաներու, այդ պատճառով անտանելի համարելով Հայաստանի մէջ ապրիլը շարունակելը:

Ամենապարզ օրինակը. եթէ անձ մը սպասարկման ոլորտի աշխատող չէ, ուր պարտադիր է չափազանց քաղաքավար ըլլալը եւ «շնորհակալութիւն», «խնդրեմ», «ներողութիւն» եւ համանման բառեր յաճախ օգտագործելը, առօրեայ հաղորդակցութեանց մէջ այս բառերը բացակայ են շատերու լեզուամտածողութենէն:

Մէջբերեմ հետեւեալ երեք դրուագները:

Արձակուրդը Շարմ րը-Շէյխի մէջ անցուցած անձ մը, իր ճամբորդութեան մասին պատմելով, գովասանքով կը խօսէր պանդոկի եգիպտացի պաշտօնէային մասին, որ ամէն բան ըսելէ ետք շնորհակալութիւն կը յայտնէր: Մտիկ ընողին արձագանգն էր ուշագրարը: Ան զարմացած ըսաւ. «Մենք դէնց բանի սովոր չենք»:



Թաքսիի վարորդին ճամբու ուղղութիւններ ցոյց տուող քոյրս իւրաքանչիւր ցուցումէ առաջ «որ խնդրեմ» բառակապակցութիւնը կը գործածէր, փոխարինելով սփիւռքահայերու «հաճիս/հաճեցէք» բառերը: Մէկ ուղեւորութեան ընթացքին նշեալ արտայայտութեան երրորդ գործածումէն ետք, վարորդը ըսաւ. «Դուք հաստատ Սփիւռքից էք, մենք էսպէս չենք խնդրում»:

Գործի բերումով հեռաձայնով այլ մարդոց հետ հաղորդակցած ժամանակ, մանաւանդ երբ խնդրանք մը ունիմ, բնականաբար, առ ի քաղաքավարութիւն, «որ խնդրեմ» կամ «շնորհակալ եմ» արտայայտութիւնները կ'օգտագործեմ: Գործընկերներս քանի՛-քանի՛ անգամ զարմանք յայտնած են խօսելաձեւիս համար, պատճառաբանելով որ շատերու հետ աւելի խիստ եւ ոչ-խնդրողական ոճով պէտք է խօսիլ՝ գործը յառաջ տանելու համար, մանաւանդ որ, ըստ իրենց, խօսակիցս ստիպուած է իր աշխատանքային պարտականութիւնը կատարելու:

Այնպէս չէ որ տեղացիները անքաղաքավար են կամ քաղաքակրթութենէ զուրկ: Ո՛չ: Ըսել ուզածս այդ չէ: Բայց իրենք գուցէ ունին հաղորդակցութիւններու եւ շփումներու այլ ընկալում, որ խոտոր կը համեմատի ընկալմանը այն մարդոց, որոնք աւելի ջերմ ու սիրալիւր են իրենց հաղորդակցական ձեւերուն մէջ:

Պահպանելով այն վարկածը, որ կեանքի մէջ բացարձակութիւններ չկան, միաժամանակ պէտք է արձանագրել, որ բոլոր ազգերուն մէջ ալ կարելի է գտնել տարբեր պահուածքի մարդիկ: Նաեւ նկատի առնելով, որ ոչ ընկերաբան եմ ու ոչ ալ հոգեբան այս խնդիրը մասնագիտական ակնոցով դիտած ըլլալու համար, բայց որպէս այս խնդիրին հետ ամենօրեայ առնչութիւն ունեցող անձ, ապա կը հաւատամ, որ այս երեւոյթն ունի իր խորքային դրդապատճառներն ու հիմքերը:

Հայաստանի քարքարոտ ու ժայռոտ բնատեսարանը կարծես արտացոլուած ըլլայ հայրենաբնակ ժողովուրդի խառնուածքին մէջ: Թերեւս նոյն այդ սկզբունքով կարելի է հիմնաւորել Մերձաւոր Արեւելքի եւ ընդհանրապէս միջերկրածովեան երկիրներու ժողովուրդներուն ջերմ ու մեղրածոր արտայայտութիւնները, երբեմն չափազանցուած «անուշ լեզու»: Մերձաւորարեւելեան երկիրներու ժողովուրդներուն ընկերային խառնուածքը լրիւ այլ է, եւ երկար տարիներ հոն ապրած ըլլալով ու անոնց հետ առնչուած ըլլալով, հակառակը շատերուս խորք ու կոշտ կրնայ թուիլ:

Ենթադրութիւնս նաեւ այն է, թէ հայրենաբնակ վերջին քանի մը սերունդները որքան ալ ազատութիւն «վայելած» ըլլան խորհրդային կարգերու ժամանակաշրջանին, որոշ չափով բռնաճնշուած եղած են կամ անոնց մէջ խառնուած են կարգ մը «խմորիչներ», որոնք բարելաւելու համար գուցէ եւս 33 տարի է պէտք:

Ժողովուրդներուն մէջ կայ ձեւակերպուած մտածելակերպ, որ կը դրսեւորուի ամէն ինչի, ընդ որոնց ընկերային յարաբերութիւններուն մէջ: Ինքնապաշտպանողական, առաւել եւս՝



յարձակողական, ամենագետ ըլլալու յաւակնութեամբ, քիչ մը կոշտութեամբ ու կոպտութեամբ համեմուած պահուածքը, ըստ ինձի, հետեւանք է այդ մտածելակերպին, որ հայրենաբնակներուն մէջ աւելիով ամրապնդուած է անկախութեան տարիներուն: Շատ հաւանական է նաեւ, որ 1990-ականներու դժուարութիւններն ու զրկանքները ժողովուրդին մէջ խամրեցուցած են ջերմութիւնը եւ անազնութեան ու կոշտութեան ծիլեր աճեցուցած:

Այո՛, ես ալ նոյն՝ հայկական ծիներ կրող մարդ եմ, բայց ակնյայտ է սփիւռքահայերն ու հայրենաբնակները տարբերակող այդ նուրբ թելը: Մական յանուն արդարութեան պէտք է նշեմ, որ այդ առումով յստակ բարելաւում նկատելի է առաջուան հետ բաղդատած: Ուրեմն, կարելի է յոյս դնել ժամանակի ընթացքին եւ այլոց հետ շփուելու շնորհիւ յառաջացող դրական փոփոխութեան վրայ:

Այո՛, այս ուղղութեամբ դեռ ճանապարհ կայ անցնելիք, բայց պէտք չէ նախապաշարուիլ եւ հայրենաբնակ ազգակիցներէ ոմանց տհաճ վարուելակերպը պատճառաբանել առհասարակ հայրենաբնակներու հետ շփումը անյոյս համարելու համար, որովհետեւ, ինչպէս այլ, նաեւ ընկերային գետնի մէջ մեր ներդրումը կրնանք ունենալ՝ զիրար ջերմացնելով, զիրար աւելի հանդուրժող ու աւելի ազնիւ դարձնելով: Մա՛ փոխադարձ ու կախարդական ազդեցութիւն ունեցող հանգամանք է, որ կը ստեղծէ աւելի բարեհամբոյր հասարակութիւն, հետեւաբար՝ աւելի քաղաքավար ու աւելի ազնիւ յարաբերող ժողովուրդ, ինչը նպաստող գործօն է մեր հայրենական պետութեան բարգաւաճման համար:

Աղբիւր՝ ԳԵՂԱՐԴ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

0

ԱԻՑ ՊՕՂՈՍԵԱՆ



Միջին Արեւելքի մէջ իսրայէլապաղեստինեան պատերազմը տակաւին կը շարունակուի նոյն սաստկութեամբ, Կազայի հատուածի պաղեստինցիներուն ողբերգութիւնը դադար չունի, քաղաքներ եւ բնակավայրեր բառին իսկական առումով կը քանդուին՝ փուլ գալով անոնց բնակիչներուն

վրայ: Աւելին, կայ վախ, որ պատերազմի հրդեհը տարածուի Կազայէն անդին, կլանելով Լիբանանը, ուր սահմանային ամէնօրեայ բախումները իսրայէլեան բանակին եւ «Հրզպալլա»ի մարտիկներուն միջեւ հետզհետէ կը սաստկանան:

Այս տարածաշրջանին մէջ հակամարտութիւններու եւ պատերազմներու պատմութիւնը, առնուազն Օսմանեան կայսրութեան փլուզումէն ետք, շարունակական է տարբեր երանգներով: Անոնք երբեմն արաբական պետութիւններուն եւ Իսրայէլի միջեւ են, երբեմն նոյն արաբներուն միջեւ՝ քաղաքացիական պատերազմներու տեսքով, ինչպէս կը տեսնենք



Լիպիոյ, Իրաքի, Եմենի, Սուրիոյ եւ Լիբանանի պարագային, զանց առնելով աւելի հեռուն: Սակայն, արաբական աշխարհին մաս կազմող Ալճերիոյ մէջ անցեալ դարուն տեղի ունեցած քաղաքացիական պատերազմը, որուն զոհ գացած էին հարիւր հազարաւորներ եւ Սուտանի քաղաքացիական պատերազմը, որոնք այս յօդուածին արծարծած նիւթին հետ ուղղակի առնչութիւն չունին:

Միջին Արեւելքը այնպէս, ինչպէս որ գիտենք այսօր, կը բաղկանայ Օսմանեան կայսրութեան անկումէն ետք, Ֆրանսայի եւ Անգլիոյ կողմէ որոշուած եւ կամայականօրէն Սալթս-Փիթոյի համաձայնութեամբ ստեղծուած արհեստական երկիրներէ, որոնք իրարմէ բաժնող աշխարհագրական բնական սահմաններէ ընդհանրապէս զուրկ են: Քարտէսը ուսումնասիրելով՝ պիտի տեսնենք, որ Թուրքիոյ հարաւային սահմանի՝ Տաւրոսեան լեռնաշղթայէն հարաւ, անմիջապէս կը սկսի տարածք մը, որ կ'ընդգրկէ արդի Սուրիոյ, Յորդանանի, Իրաքի, Լիբանանի եւ Իսրայէլի տարածքները՝ հասնելով մինչեւ Սէուտական Արաբիոյ անապատը: Այդ ընդարձակ տարածքին աշխարհագրականօրէն արեւելեան բնական սահմանը Իրանի եւ Իրաքի միջեւ երկարող Զակրոսեան լեռնաշղթան է, արեւմտեանը՝ Ալեքսանտրէթի ծոցէն հարաւ երկարող Միջերկրական ծովուն զուգահեռ՝ ծովափը եզերող լեռնաշղթան է, որ կը միանայ Լիբանանի ծովափի երկայնքին բարձրացող լեռներուն, հասնելով մինչեւ պաղեստինեան Արեւմտեան Ափի բլուրները: Իսկ հարաւը՝ Սուրիոյ հարթավայրը, Իրաքեան Քիւրտիստանը եւ պատմական Միջագետքը, Յորդանանի անապատը եւ Պաղեստինի բլուրները, բոլորով կազմելով աշխարհագրական մէկ ամբողջութիւն, որուն բնակիչներն են՝ սիւննի արաբները՝ իրենց զանազան ցեղախումբերով, որոնք անպայմանօրէն իրար հետ հաշտ չեն, Շիի իսլամները, որոնք պատմականօրէն հակադրուած են սիւննի իսլամներուն, տիրզիները,՝ որոնց կրօնքը իսլամի եւ քրիստոնէութեան խառնուրդ է եւ կ'ապրին Սուրիոյ հարաւը եւ Լեռնալիբանանի մէջ, ալեւինները, որոնք Սուրիոյ ծովեզերեայ լեռնաշղթայի բնակիչներն են, քիւրտերը որոնք տարածուած են Իրաքի եւ Սուրիոյ հիւսիսային շրջաններուն մէջ, հրեաները, որոնք 1948ին հիմնեցին իրենց պետութիւնը, թիւրքմենները, չերքէզները, ասորիները, եզիտիները եւ վերջապէս Հայոց Յեղասպանութենէն վերապրած եւ Կիլիկիայէն տեղահանուած հայերը, որոնք, մեծամասնութեամբ հաստատուած էին Հալէպի, Դամասկոսի, Իրաքի եւ Լիբանանի մէջ:

Այս արհեստական երկիրները իրենց անկախութեան հռչակումներէն անմիջապէս ետք եւ մինչեւ այսօր, երբեք խաղաղ չեն եղած: Այդ երկիրներուն մէջ միշտ պետական հարուածները յաջորդած են իրարու, մանաւանդ Սուրիոյ մէջ, ուր Հաֆէզ Ասատ 1971ին պետական հարուածի մը միջոցաւ հասաւ իշխանութեան եւ երկիրը կառավարեց մինչեւ 2000՝ իր մահը: Ան Սուրիոյ փոքրամասնութիւն կազմող Ալեւի համայնքէն էր եւ երեսուն



տարի կառավարեց երկիրը ոստիկանական համակարգով: Իր իշխանութեան օրերուն հակառակ արաբ-խորայելական պատերազմին, տնտեսութիւնը բարգաւաճեցաւ: Իր մահէն ետք, իր զաւակը՝ Պաշար Ասատ յաջորդեց իբր նախագահ, սակայն 2010 ին, «արաբական զարուն» կոչուած շարժման պատճառով, երկրին մէջ սկսաւ քաղաքացիական պատերազմ մը, որ քանդեց զայն, եւ միլիոններով մարդիկ ապաստանեցան դրացի երկիրներ կամ արտագաղթեցին: Նոյնը պատահեցաւ դրացի Իրաքի մէջ, ուր Սատտամի օրերուն հարիւր հազարաւոր անձեր հաշուեյարդարի ենթարկուեցան, իսկ միլիոնաւոր ուրիշներ սպաննուեցան Իրանի հետ պատերազմին, ապա Ամերիկեան բանակի պատժիչ միջամտութեան պատճառով: Սատտամի մահապատիժէն ետք, թէեւ իշխանութիւնը անցաւ Շիի մեծամասնութեան, սակայն երկիրը անվերջանալի ներքին հակամարտութիւններու թատերաբեմ մնաց:

Ինչպէս Պարսիկ փիլիսոփայ Ապու Համիտ ալ Ղազալի ըսած է, թէկուզ չափազանցուած ձեւով, թէ, մէկ տարուան անիշխանութիւնը աւելի շատ աւեր կը գործէ, քան հարիւր տարուան գաղութատիրութիւնը, Միջին Արեւելքը կ'անցնի պատերազմներու, քաղաքացիական անհնազանդութիւններու, անիշխանականութեան մէջէն, որուն պատճառով հարիւր հազարաւոր հաշուող հայկական գաղութները նօսրացան եւ արտագաղթեցին շրջանէն աշխարհի բոլոր կողմերը, եւ փոքր մաս մըն ալ արդէն անկախացած, սակայն նոյնպէս՝ Արցախի ճգնաժամը ապրած Հայաստան:

Պատերազմները կրնան պատուհասել որեւէ երկիր, սակայն առաւել հաւանականութիւնը ունին տեղի ունենալու այն երկիրներուն մէջ, որոնք տակաւին կազմաւորուած չեն, արհեստականօրէն ստեղծուած են, կամ ժողովրդավար համակարգերով չեն կառավարուիր, ինչպէս է պարագան միջինարեւելեան երկիրներուն:

Ծանր եւ ցաւոտ է ընդունիլը, սակայն, նաեւ իրապաշտօրէն պէտք է համակերպիլ այն գաղափարին հետ, որ հայութիւնը այլեւս ապագայ չունի միջինարեւելեան երկիրներուն մէջ: Ընդհակառակը, անոնց պարպումը աւելի օգտակար է: Նոյնիսկ կարիքը չկայ այս թեզը հիմնաւորելու:

Միջին Արեւելքէն եւ դժբախտաբար նոյնինքն Հայաստանէն, հայութեան արտագաղթին պատճառով, այսօր արտաշխարհի մէջ կ'ապրի հայութեան երեք չորրորդը, որ գրեթէ եզակի երեւոյթ է եւ անբնական: Այս ստուար զանգուածը նոյն ժամանակ մեծ ներուժ է, եթէ կարելի ըլլար զայն համախմբել համահայկական օրակարգի մը շուրջ: Ճիշդ է որ անհատ հայեր եւ նոյնիսկ կազմակերպութիւններ մեծապէս օգնած են Հայաստանի բոլոր ոլորտներուն զարգացման եւ հսկայական ներդրում ունին, սակայն այդ մէկը առաւել կ'ամրապնդէ այն



գաղափարը, որ Հայաստանը կարելի է աներեւակայելի բարձր մակարդակի հասցնել եւ վերածել իսկապէս հզօր երկրի մը, եթէ՝ ինչպէս կ'ըսէ ազգային գործիչ Վիգէն Յովսէփեան, ունենայինք «համահայկական օրակարգ»ի տեսլականը, առանց քաղաքական օգուտներու հետամուտ ըլլալու:

Մեր միասնական քաղաքականութիւնը պէտք է ըլլայ, այդ տեսլականը՝

Համահայկական Օրակարգը:

26/1/2024

ՊԷՏՔ Է ՎԱՌ ՊԱՀԵՆՔ ՄԵՐ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԵՐԱԶԱՆՔԸ՝ ԱՐՑԱԽՆ ՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Յարութ Սասունեան

«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի հրատարակիչ

www.TheCaliforniaCourier.com

Բանավեճ կ'ընթանայ Արցախը պայքարելով վերադարձնել ուզողներու եւ անոնց միջեւ, որոնք Արցախը յաւերժ կորսուած կը համարեն եւ ուրեմն պէտք է մոռնալ այդ մասին: Այս վերջին ամօթալի դիրքորոշումը առաջ կը քաշէ գործող վարչակարգը, որ պատասխանատուն է Արցախի կորուստին, իսկ այժմ ամէն բան կ'ընէ անոր յիշատակը թաղելու համար:



Կը փափաքէի ընթերցողներու հետ կիսել Արեւմտեան Հայաստանի վերադարձին առնչուած տասնամեակներու իմ տեսակէտը եւ Արցախի համար անհրաժեշտ գործողութիւններու հետ կապուած նոյն հարցի համընկնումներուն մասին:

Հայոց Յեղասպանութեան եւ Արեւմտեան Հայաստանի մասին ամբողջ աշխարհի մէջ իմ տուած իւրաքանչիւր դասախօսութենէ ետք, ներկաներէն ոմանք անմիջապէս կը հարցնեն՝ ի՞նչ իմաստ ունի հետամուտ ըլլալ նման անյոյս գործի մը, յատկապէս որ մեր պատմական հողերը գրաւուած են թրքական հզօր բանակի կողմէ:

Եւ թրքական հզօր բանակի կողմէ:

Իմ պատասխանն է՝ ամէնէն վատ բանը, որ հայերը հիմա կրնան ընել՝ Արեւմտեան Հայաստանի մասին մոռնալն է, ինչ որ, դժբախտաբար, մեր հայկական տարածքները ընդմիջտ կորսնցնելու ամէնէն դիրին ճամբան է:

Այժմ, կարելի ամէն բան ընելէ զատ, հայերը պէտք է յաջորդ սերունդին փոխանցեն Արցախի եւ Արեւմտեան Հայաստանի վերաբերեալ մեր պահանջները՝ երազանքը վառ պահելու նպատակով: Եթէ մենք այդ չընենք, մեր ապագայ սերունդները, ոչինչ իմանալով մեր պատմական հողերուն մասին, գաղափար չեն ունենար, որ առոնք մեզի կը պատկանին:



Հետեւաբար, եթէ նոյնիսկ օր մը փոխուի աշխարհառազմավարական իրավիճակը եւ կարելիութիւն ընձեռնուի վերադարձնելու մեր կորսնցուցած հողերը, մեր ապագայ սերունդները որեւէ հետաքրքրութիւն չեն ցուցաբերեր ասոնց նկատմամբ:

Յիշեցէ՛ք, որ աւելի քան 2000 տարի հրեայ ժողովուրդը կորսնցուցած էր իր հայրենիքը եւ ցրուած աշխարհով մէկ: Հրեաներու յաջորդող սերունդները իրենց հայրենիքին մասին գիտելիքները կը փոխանցէին իրենց զաւակներուն: Աւելի քան 2000 տարի ծնողները Երուսաղէմի եւ Իսրայէլի մասին յիշողութիւնը կը փոխանցէին իրենց զաւակներուն, իսկ անոնք ալ իրենց հերթին՝ իրենց զաւակներուն եւ այդպէս սերունդէ սերունդ: Անոնք չմոռցան իրենց արմատներն ու պատմութիւնը՝ վտարանդի ապրելով Ռուսիա, Եւրոպա եւ այլ երկիրներ: Անոնք բազմիցս ըսած են իրենց զաւակներուն ու թոռներուն՝ «Յաջորդ տարի Երուսաղէմի մէջ...»: Երկու հազար տարի անց, երբ կարելիութիւն ստեղծուեցաւ վերադարձնելու իրենց հողերը, անոնք օգտուեցան ասկէ եւ իրականացուցին իրենց վաղեմի երազանքը: Նման իրավիճակի մէջ են նաեւ պաղեստինցիները, որոնք բռնի տեղահանուած են եւ կը շարունակեն տեղահանուիլ իրենց հողերէն: Անոնք նոյնպէս կը պայքարին իրենց երազանքը վառ պահելու համար եւ կը հռչակեն իրենց նախնիներուն տունները վերադառնալու իրաւունքը:

Եթէ հրեայ ժողովուրդը կրնայ 2000 տարի պահել հայրենիք վերադառնալու իր երազանքը, ինչո՞ւ հայ ժողովուրդը չի կրնար վառ պահել իր երազանքը՝ օր մը վերադառնալու Արցախի եւ Արեւմտեան Հայաստան: Հայերը պէտք է իրենց զաւակներուն ու թոռներուն ըսեն՝ «Յաջորդ տարի Շուշիի մէջ» եւ «Յաջորդ տարի Վանի մէջ»:

Հարցը այն է, թէ ինչպէ՛ս կրնան հայերը օր մը վերադառնալ իրենց հողերը, եթէ Արցախն ու Արեւմտեան Հայաստանը գրաւուած են հզօր թշնամիներու կողմէ: Մենք պէտք չէ մոռնանք, որ ոչինչ յաւերժ է: Աշխարհի մէջ չկայ երկիր մը, որ պատմութեան սկիզբէն ի վեր ունեցած է նոյն սահմանները: Տարիներու ընթացքին, որոշ երկիրներ ընդլայնած են իրենց սահմանները, իսկ ուրիշներ՝ կորսնցուցած իրենց տարածքները: Որոշ երկիրներ դարձած են մեծ կայսրութիւններ, իսկ միւսները անհետացած են աշխարհի երեսէն: Բայց մէկ բան պարզ է. ոչ ոք կրնայ պնդել, որ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ այսօրուան սահմանները յաւերժ կը մնան նոյնը: Ընդամենը 100 տարի առաջ հսկայական եւ հզօր Օսմանեան կայսրութիւնը վերածուեցաւ շատ աւելի փոքր տարածքով Թուրքիոյ Հանրապետութեան: Թէեւ հնարաւոր չէ կանխատեսել, թէ ճիշդ է՞րբ կը փոխուին Ատրպէյճանի եւ Թուրքիոյ սահմանները, աստոնք, անշուշտ, նոյնը պիտի չմնան: Ինչպէ՛ս տեղի կ'ունենան այդ փոփոխութիւնները: Կան քանի մը սենարիոններ, ինչպիսիք են՝ տարածաշրջանային պատերազմները, նոյնիսկ համաշխարհային պատերազմը, քաղաքացիական պատերազմը եւ միջուկային կամ այլ տեսակի աղէտները: Այսպիսի իրադարձութիւններ տեղի ունեցած են անցեալին, եւ անշուշտ որ տեղի կ'ունենան ապագային:

Երբ տեղոյն վրայ հողային փոփոխութիւններ տեղի ունենան, արդեօք հայ ժողովուրդի ապագայ սերունդները կ'իմանան եւ կը յիշեն, որ Արցախն ու Արեւմտեան Հայաստանը իրենց պատմական հայրենիքի մէկ մասն են, թէ՛ անտեղեակ կ'ըլլան, որովհետեւ երբեք չեն լսած Շուշիի եւ Վանի մասին: Եթէ անոնք գրկուին այդ գիտելիքներէն, երբ ապագային կարելիութիւններ ստեղծուին, նոյնիսկ եթէ անհաւանական բարեացակամ ատրպէյճանցի կամ թուրք ղեկավար մը վերադարձնէ այդ հողերը մեր թոռներուն, անոնք չեն հետաքրքրուիլ ասոնցմով, քանի որ երբեք չեն իմացած ասոնց մասին:



Եզրափակելով, խորհուրդ կու տամ միշտ վառ պահել երագանքը: Մինչ թշնամիներու գործողութիւններու պատճառով մենք զրկուած ենք մեր հողերէն, մեզմէ կախուած է յիշողութիւնը չկորսնցելու եւ երագելու՝ օր մը մեր հայրենի հողերը վերադառնալու մասին: Եկէ՛ք մեր պահանջները փոխանցենք գալիք սերունդներուն: Թշնամին խլած է մեր հողերը, բայց ան չէ խլած եւ չի կրնար խլել մեր յիշողութիւնը: Մոռնալով մեր պատմական հողերուն մասին՝ մենք ենք, որ օգնած կ'ըլլանք մեր թշնամիներուն՝ վերջին քարը դնելու մեր դատի գերեզմանին...

Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան

Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈՒՆՋ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՊՐՈՒՄ

Ամէն առաւօտ, վաղ լուսաբացին,
Ինձ այցի կու գան թրթիռներ յոյզի,
Արեւալոյսին հետ կ'ողողեն հոգիս
Շողով ու շաղով, բերկրանքով լոյսի:

Յետոյ բիր բառեր ինձ այցի կու գան
Մեր Մեսրոպաշունչ գանձէն Մեծասբանչ,
Բարդ-բարդ կուտակուած կեանք կ'առնեն յանկարծ,
Կու գան ինքնակամ գրիչիս տակ խոնարհ:

Մերթ հոսքը անոնց հեզասահ է շատ,
Առուակի մը պէս կարկաչ է գուլալ,
Որ զիս կ'առնէ իր հոսանքըն ի վար,
Խոհի եւ յոյզի ընթացքով վարար...

Մերթ կը խցանուի ցաւի մորմոքով,



Բառս կ'ընդվզի, չի դառնար ան տող,
Կը տանջուիմ ես տենդով պլեկոծ,
Ցաւս զիս կ'այրէ ներքին կրակով:

Երանի՛ բառս հոսի գրիչիս տակ,
Անբերրի ծառ մը չդառնա՛մ յանկարծ,
Երկունքս օրհնուի ծնունդով բարի,
Զերթ լոյսի հասիկ մարդկանց բաշխուի:

6/2/2018

.....

ՅՈՒՆՈՒԱՐԵԱՆ ՑՈՒՐՏԻՆ

Յունուարեան ցուրտին, սառնամանիքին,
Եկեր եմ աշխարհ՝ խուլ գիւղի մը մէջ,
Մաքուր, անարատ բնութեան ծոցին,
Փոքրիկ ու անշուք, ջերմ օձախի մէջ...

Քամին է սուլեր վայրի ու դաժան,
Բայց խարոյկն մեր տան ճարճատեր է կրակ,
Այդ ջերմութիւնն է զիս միշտ պարուրեր,
Բոցեղէն կրակն է սիրտս վարարեր...

Պատահակա՞ն է որ սիրտս խնդուն
Զմռան այս ամսոյն բեհեզ կը հագնի,
Արհամարհելով եղանակը ցուրտ
Կը վերածընի օրերուն պէս հին...

Նոյն մանկան խինդով պարուրէ հոգիս,
Զուարթ խայտանքով մը կը վարարի,
Գուցէ կը յիշէ տարիներն անցած,
Երբ աչքերն բացաւ կեանքին զմայլահար...

Եւ դեռ նոյն կրակն է որ կը ճարճատի
Իր սրտին մէջ տաք ու իր օձախին,
Հոգ չէ թէ ցուրտ է...բայց միշտ արեւն է
Որ կը շողոշողայ ու լոյս, սէ՛ր բաշխէ:
1/2/2024

.....

ՄԵՐ ԼԵՌԱՆ ՊԷՍ

Արցունքիս մէջ, թախիծիս մէջ,
Դուն կը յառնես երազ լուսէ,
Երկի՛ր իմ հին, Արարչաստեղծ,
Որուն մէն մի բեկոր-հիւլէն
Թաթախուած է արիւնով սուրբ
Մեր բիւր քաջաց բորբ, դիւցազուն...



Դուն կը յառնես զերթ մեր Լեռը,
Կը բարձրանաս տեսիլքի պէս,
Անպերու մէջ լոյս գագաթդ
Անձեռակերտ գմբէթ մըն է,
Որ կը խրի երկնքին մէջ,
Միրտէն բխած աղօթքի պէս...

Դուն կը յառնես՝ մթան մէջ ԼՈՅՍ,
Գիշերէն ետք զերթ արշալոյս,
Կը վառես նոր արեգակներ,
Նոր յոյս, հաւատք կը ներշնչես
Մեր սիրտերուն յուսակորոյս,
Հոգիներուն հաւատաբեկ...

Եւ չեմ գիտեր՝ այլ երկիրներ
Ունի՞ն արդէօք վեհատեսիլ
Նման գագաթ, բարձունք լուսէ,
Որուն պիտի անվերջ ձգտինք,
Ճակատագիր՝ մեր մէջ դաջուած,
Դիթանք անհաս եւ անբաժան:
21/1/2021

.....
ՏԱՄ

Քնքշանքս տամ ծաղիկներուն,
Նոր բոյր ու թոյր սփռեն խնդուն,
Նոր ժպիտով արեւալոյս
Խինդ ու բերկրանք բաշխեն ցնծուն...

Գգուանքս տամ թռչուններուն,
Ժիր դայլայլէն թող գուարթուն,
Օրհներգութեան պէս տարածուի
Միրերգն անոնց զերթ մեղեդի...

Շոյանքս տամ յոգնած մարդուն,
Տոգորուի ան նոր եռանդով,
Կենսարբենայ ան խայտանքով,
Նոր աւիշով մը կենսայորդ...

Գորովս տամ մանուկներուն,
Թող ճռուողէն մշտախնդուն,



Թռչուններուն պէս սիրասուն՝
Զգան բերկրանքը ապրելու...

Աղօթք յղեմ ես Բարձրեալին,
Անեզրական Իր մեծ սիրով՝
Նոր յոյս ու լոյս բաշխէ մարդուն,
Իմաստնութիւն սիրագորով,
Խաղաղութիւն ամենեցուն:

.....

ԻՆԿԱՍԾ ՔԱԶԱՅ ՈԳԻՆ

Ինկած քաջերը մեզի ցոյց տուին
Որ հայրենիքն է գերագոյն արժէք,
Ճշմարիտին պէս եւ Արարիչին՝
Անսակարկելին, կեանքէն ալ անդին...

Անոնց ՈԳԻՆ է որ պիտ' ճառագէ
Մահէն ալ անդին՝ որպէս վառ արեւ,
Ուղեցոյց դառնայ մեր նոր ուղիին,
Ներշնչման աղբիւր նորոգ սիրանքի...

ՈԳԻՆ պիտ' դառնայ զօրութիւն անմեռ
Նոր երազանքի լուսայեղ, վսեմ,
Նոր յաղթանակի կերտման բանալի,
Զոր պիտ' փայփայենք որպէս գանձ անգին...

Բայց թէ հեռանանք այդ Գերագոյնէն,
Դառնանք խնկարկու կեղծ աստուածներուն,
Կը կործանենք մենք երկիրը լուսէ,
Դառնանք խամաճիկ օտարին նկուն...

Հայրենեաց երկնէն ՈԳԻՆ այդ շողայ
Բոլոր աչքերուն ու սիրտերուն վառ,
Որոնք տեսանել ու զգալ գիտեն,
Ամպերէն անդին՝ ԼՈՅՍԸ խնկարկել:
28/1/2021

.....

ԾԻՐԱՆԻ ՀՈՐԻԶՈՆՆԻՆ

Կ'ուզեմ ըմպել անյագօրէն
Վերջին շողերն մայրամուտիդ,
Ոսկի՝ արեւ, որ կը սուզուիս
Հորիզոնին մէջ ծիրանի:

Կարծես ուրիշ հմայք մ'ունին



Բռնկումներն վերջալոյսիդ,
Հրաժեշտի երգ ու մեղեդի
Զիս կը յուզեն թախիծով հին:

Կը հեռանաս դուն շո՛ղ առ շո՛ղ,
Բայց կը ներկես դուն բո՛ց առ բո՛ց
Երկինք, երկիր, իմ սիրտը վառ
Որ միշտ քեզի կարօտ մնամ:

Վերջալոյսիս սեմին կանգնած
Մեկնումս ըլլա՛ր քեզի նման,
Բռնկումներս ես փռէի
Շռայլաբար ու ամենքին...

Մարդիկ սիրտով լուռ լիացած
Դեռ փնտռէին գոլը սրտիս,
Զոր տո՛ղ առ տո՛ղ ես բաշխեցի
Ու դեռ տալու կարօ՛տ մնացի..
10/1/2018

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՊԱՅՔԱՐԻ ՅԱՌԱՋԱՄԱՐՏԻԿ ԿԻՆԸ՝ ՄԵԶԱ

Դոկտ. Մինաս Գոճայեան, Լոս Անճելըս, 15 Յունուար 2024



Վերջերս երկար եւ տքնաջան աշխատանքներէ ետք լոյս տեսաւ սփիւռքահայ կին գրողներու աստղերէն Սիրան Մեզայի «Նամականի»ի Ա. հատորը՝ բանասեր-պատմաբան **Գեորգ Եազրճեանի** աշխատասիրութեամբ: Գիրքը արագ մը թերթատելէ ետք կրնամ անվարան զայն կոչել «տարուան հրատարակութիւնը»:

Սիրան Մեզա կը սերի պոլսահայ յայտնի ընտանիքներէն Զարիֆեաններէն, որոնք մեր ազգին տուած են նուիրեալ կուսակցական գործիչ, վաղամեռիկ եղբայրը՝ Վահագնը, բանաստեղծ, նոյնպէս վաղամեռիկ Մատթեոս Զարիֆեանը, Պէյրութի մէջ 1953-1975-ին լոյս տեսած «Այգ» հայերէն օրաթերթի տնօրէն եւ հրատարակիչ Լիւսի Զարիֆեան-Թոսպաթը եւ գրող, հրապարակագիր, լրագրող ու հայ կանանց իրաւունքներու պաշտպան Սիրան Զարիֆեան-Քիւփելեանը, որ աւելի ծանօթ է իր օրհորդական անուան սկզբնատառերու անուններուն միացումով կազմուած Մեզա գրչանունով (ՄԷ + Զա = Մեզա): Ան Միջին Արեւելքի ամենէն փայլուն ու մտաւորական կիներէն մէկն է եղած, հաւանաբար գլխաւորը: Մեծ է եղած իր ծառայութիւնը յատկապէս «Երիտասարդ Հայուհի» պարբերականի միջոցով (1932-1934, 1947-1968): Թերթը Լիբանանի առաջին կնոջական պարբերական հրատարակութիւնն է եւ առաջիններէն մէկը ամբողջ արաբական



աշխարհին մէջ: Սեզային կ'երթայ նաեւ պատիւը ըլլալու Լիբանանի առաջին կին մասնագէտ լրագրողուհին:

Հարկ է նշել որ Սեզայի միակ որդին՝ Վահագն Քիւփելեանն ու հարսը՝ նկարիչ-քանդակագործ Անին ամենայն փութաջանութեամբ տասնամեակներով պահած ու նախնական դասաւորութեամբ խնամած էին Սեզայի հարուստ արխիւը, ապա զայն Լիբանանէն փոխադրած էին իրենց հետ Լոս Անճելըս: Այստեղ կրկին անգամ դասաւորման ենթարկուելով բանասէրներ Տէր եւ Տիկ. Մինաս եւ Նազիկ Գոճայեաններու կողմէ, 2021-2022 թուականներուն ամբողջ արխիւը, ներառեալ անտիպ գործերը յանձնուեցան Երեւանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանին (ԳԱԹ), որու տնօրէնները՝ Կարօ Վարդանեանը, ապա Վահագն Սարգսեանը ամէն կերպ օժանդակեցին նիւթերու մշակման ու դասաւորման: Այս մասին, հրատարակութեան մեկենասներ Վահագն եւ Անի Քիւփելեանները «Նամականի»ի մուտքին մէջ կը գրեն. «Մեր որդիական պարտքը կատարեցինք մեր մօր անտիպ գործերը յանձնելով «ԳԱԹ»ին, ապա հրատարակելով իր ամբողջական երկերը...»:

Միրան Զարիֆեան կը հաւատար թէ առաքելութիւն մը ունէր հայրենամերձ գաղութներուն մէջ, հետեւաբար՝ ԱՄՆ-ի հոչակուած Քոլումպիա համալսարանի գրականութեան եւ լրագրութեան բաժանմունքը աւարտելէ ետք, իր «ամերիկեան փայլուն երագանքը» թողած, երիտասարդ Սեզա վերադարձաւ Միջին Արեւելք եւ հաստատուեցաւ Լիբանան, ուր կ'ապրէին իր երեք քոյրերը՝ իրենց ընտանիքներով: Հրապարակագիր Սեզա գործուն կերպով նուիրուեցաւ ընդհանրապէս կանանց, բայց յատկապէս հայ իգական սեռի մտաւոր դաստիարակութեան եւ հասարակական կեանքի դերի բարձրացման: Այս առումով ան արժանի կերպով կը դասուի Սրբուհի Տիւսապ, Զապէլ Ասատուր, Արշակունի Թեոդիկ, Զապէլ Եսայեան, Հայկանոյշ Մառք, Արփի Միսաքեան վեցեակի շարքին, դառնալով եօթներորդ աստղը այս համաստեղութեան: Սեզայի մօտ յատկապէս կը շեշտուի մարտունակութիւն մը, որ սիրտ ու համարձակութիւն ներշնչեց նոր սերունդի իգական սեռին: Մեր յիշողութեան մէջ տակաւին թարմ են այն պահերը, երբ մեր երկրորդական դպրոցներու բարձր կարգերու եւ համալսարաններու աշակերտուհիները եւ ուսանողուհիները իրարու կը փոխանցէին «Երիտասարդ Հայուհի» ամսագիրը, որու խմբագրականներն ու իգական սեռին իրաւունքները պաշտպանող Սեզայի եւ այլոց հրապարակախօսական գրութիւնները կը դառնային քննարկման առարկայ: Նկատի ունենալով իգական սեռն ու հայ հասարակութիւնը, Միրանի նշանախօսքն էր «Ծառայել կ'ուզենք»: Կարելի է երեւակայել մէկը, որ պահանջէ ... ծառայել: Այդպիսի անսովոր կին էր ահա Սեզան:

Կարելի է անվարան ըսել թէ Սեզա կրթեց հայ կանանց սերունդ մը, որուն կոչումը միայն զաւակներ դաստիարակել, ամուսնոյն սպասարկել եւ խոհանոցին տիրակալը դառնալը չէր, այլ խօսքով անոր ծառայութեան «տիրոջը» տան չորս պատերուն մէջ չէր, այլ գործուն կերպով մասնակցիլ ազգային-հասարակական կեանքին, ինքնագարգացման եւ հոգեբանական ազատագրման:

Պէտք է յիշեմ որ երբ Սեզա առողջական եւ այլ պատճառներով պիտի դադրեցնէր «Երիտասարդ Հայուհի»ն, իր սկզբունքին հաւատարիմ մնալով, տրամաբանական գործարքով մը պարբերականին արտօնագիրը փոխանցեց «Երիտասարդ Հայ.»

շաբաթաթերթի հիմնադիր Յովսէփ Մելքոնեանին, որ Հայր Անդրանիկ վարդապետ Կոստեանի, Ժիրայր Դանիէլեանի, Պետրոս Թերզեանի եւ այլոց հետ պարբերականը լոյս ընծայեց մինչեւ Լիբանանի քաղաքացիական պատերազմի նախօրեակը՝ Յունուար 1975: «Երիտասարդ Հայ.»ի դերն ալ մեծ եղաւ հայ լրագրութեան պատմութեան մէջ որպէս անկախ, անկուսակցական, հետախուզական լրագրութեան (investigative journalism) պարբերական (ի դէպ, անուան «Հայ.» բաղադրիչը «Հայուհի»ի յապաւումն է):

Սեզայի «Նամականի»ին Ա. հատորը անսպառ աղբիւր մըն է 1930-1960-ական թուականներու կեանքը ուսումնասիրող ուսանողին, պատմաբանին եւ գրականագետին համար: «Նամականի»ն կ'ընդգրկէ բանաստեղծ, թարգմանիչ, խմբագիր, երկարամեայ կրթական մշակ եւ հասարակական գործիչներ, հայ մամուլի յայտնի դէմքերէն Վահէ-Վահեանի (Մարգիս Ապտալեան, «Անի» ամսագիր, Պէյրուք) եւ Անդրանիկ Ծառուկեանի («Նայիրի» ամսագիր եւ նոյնանուն շաբաթաթերթ, Հալէպ-Պէյրուք) փոխանակած նամակները Սեզայի հետ: Նամակներուն մէջ դժուար չէ կարդալ երիտասարդ հոգիներու ունեցած մարդկային, սիրային եւ գրականութեան հանդէպ զգացումներն ու մեկնաբանութիւնները:



Նամակը, որպէս արտայայտման գրաւոր ձեւ մը, հնարաւորութիւն կու տայ նամակագրին ըլլալ անկեղծ, յաճախ անկաշկանդ ու տրուիլ զգացումներու զեղումներուն: Այս պատճառով ալ, նշուած եռեակին նամակները կը յատկանշուին գրական արժանիքներով: Յաճախ կը նկատուին նաեւ քնարական յատկանիշներ: Այս առումով Սեզայի «Նամականի»ն կարելի է նկատել դասական օրինակ մը: Քնարական զեղումներ, խոստովանութիւններ ու ներքին խռովքներու նկարագրութիւններ «Նամականի»ն վերածած են իւրատեսակ վէպի մը, որու գլխաւոր հերոսներն են Վահէ-Վահեանը, Անդրանիկ Ծառուկեանը եւ Սեզան:

Մարգիս Ապտալեան 11 Օգոստոս 1933-ին կը գրէ Երուսաղէմէն. «Սիրելի՛ Սիրան, Երուսաղէմ... Ոստան սուրբերու, քաղաք պարսպապատ ու նաեւ զմբէթազարդ: Անտառ աշտարակներու: Օրօրոց ու զերեզման որդոց մարդոց, այլ մանաւանդ՝ այգի արբեցութեան ու տուն խրախճանքի...: Կը շրջիմ փողոցները, շունգերուս մէջ կարօտն յաւետ իմ Սուլամիթիս բացակայ բոյրերուն...: Մտածումս կը հետապնդէ զայն (Սուլամիթին) նորէն, իմ անառակ, յանձապարտ մտածումս: Կը տեսնեմ զինք իր գերագոյն իւենդութեանը մէջ...» (էջ 171):

Յաջորդ նամակին սկիզբը մէջ կը կարդանք. «Սիրա՛ն, շաբաթ մըն է գրած եմ քեզի, ու տակաւին քու բառերուդ զինին չհասաւ ինձի: Կը սպասեմ թուղթիդ» (էջ 172):

Ինչպէս պիտի նկատէ ընթերցողը, անձնական եւ մտերմական նամակները կը զգենուն գրական-զեղարուեստական տարագ: Կան պատկերաւոր մտածողութիւն (քու բառերուդ զինին...), յաջող համեմատութիւններ եւ պատկերաւոր լեզու:



Միրան Ծառուկեանին կը դիմէ ա՛լ աւելի մտերմիկ բառերով՝ «Միրելի Անդրանիկ», «Թանկագին տղաս», «Ճանիկս» եւ այլն:

Նամակագիրները իրենց 20-30-ական տարիքներուն մէջ են: Միրան, տակաւին պարմանուհի տարիքին, ժամանակէն շուտ հասունցած եւ կրթուած էր Պոլսոյ հոչակաւոր Ռոպերթ գոլէճի միջավայրին մէջ, մինչ Սարգիս Ապտալեանն ու Անդրանիկ Ծառուկեանը երախայական հաճոյքներէն զրկուած, «մանկութիւն չունեցած» սերունդէն էին, որոնք Միջերկրականի Փիւնիկեան ափերուն կը հանդիպին Քոլումպիա համալսարանէն շրջանաւարտուհի, ազատամիտ ու զանազան բարոյքներէ ազատագրուած Միրան Զարիֆեանին...:

1930-ականներուն՝ ամենէն դժուարը Միրանին վիճակն է՝ որո՞ն տալ իր սիրտին նախապատուութիւնը. հանդարտաբարոյ, ժամանտիկ, երազկոտ, բանաստեղծ Սարգիսի՞ն, թէ՛ կրակոտ, «յարձակողական», անմիջական եւ իրերը իրենց անուններով կոչող Անդրանիկին... Եւ ինչպէս յաճախ կը պատահի նման պարագաներու, պայքարէն յաղթող դուրս եկաւ երրորդը՝ «Երիտասարդ Հայուհի»ի հրատարակութեան մէջ Սեզայի աջ բազուկը՝ բժիշկ Ներսէս Քիւփելեանը: Խռովքները անբաժան են յիշեալ չորս անձերէն, այն աստիճան, որ Պէրոյթի Համագգայինի Հայ ճեմարանէն ուսման վերջին տարին արտաքսուած եւ Սեզայէն մերժուած Ծառուկեան կը դիմէ անձնասպանութեան, բարեբախտաբար՝ անյաջող ելքով...

Այսօրուան ընթերցողը ի՞նք պիտի դատէ այս երիտասարդ հոգիները՝ առանց նախապաշարումներու եւ «բարոյական բարձր» սկզբունքներու տուրք տալու, որովհետեւ գործ ունի՞նք այնպիսի հոգիներու հետ, որոնց մէջ կայ ապրելու, սիրելու, «արեւն ըմպելու» արդար ցանկութիւն եւ կիրք: Իսկ մի՞ թէ մեղք է սիրելը...

«Նամականի»ին վրայ Գեորգ Եազըճեանի դրած ճիգը, բանասիրական պրպտումները եւ իւրաքանչիւր երկրորդական թուացող մանրամասնութիւն մեկնաբանելը վիթխարի աշխատանքի մը արդիւնք է: Արդարեւ մենք անձնապէս հետեւելով իր յոյժ արհեստավարժ մօտեցման, տեսանք թէ ինչպէս ան ծանօթագրած է իւրաքանչիւր «անհասկնալի եւ մութ» թուացող մանրամասնութիւն: Արդիւնքը. նամակներու հատուածը հարստացած է երեք նամակագիրներուն կենսագրութեամբ, 1550 ծանօթագրութիւններով, անձնանուններու եւ տեղանուններու ցանկերով: Նախատեսուած է շուրջ 60 անձերու հետ Սեզայի նամակագրութեան մնացեալ մասը այս տարի լոյս ընծայել եւս երեք հատորներով՝ նոյն Եազըճեանի աշխատասիրութեամբ եւ Քիւփելեան ամուլին մեկենասութեամբ:

Մենք մեզի արտօնութիւն կու տանք սոյն հրատարակութիւնը յանձնել ՀՀ Գիտութիւններու Ազգային Կաճառի Գրականութեան հիմնարկի ուշադրութեան, որպէսզի հեղինակը արժանանայ յատուկ գնահատանքի:



() Միրան Սեզա, «ՆԱՄԱԿԱՆԻ» Ա. հատոր, կազմեց եւ ծանօթագրեց Գեորգ Եազրճեան, «Հայաստան» հրատարակչութիւն, Երևան, 2023, 718 էջ + 8 էջ լուսանկարներու ներդիր, հաստ կազմ Kevhart*

ՄԱՐԶՊԵՏԸ ԹԵՒԱԲԵԿ ՀՐԵՇՏԱԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՋ

Ազատուիի Գալայճեան-Միմոնեան, Ռիատ, Սէուտական Արաբիա, 19 Դեկտեմբեր 2023

ԳԵՂԱՐԴ

Բաւական ատենէ ի վեր ձեռքիս մէջն է Մարգպետ Մարկոսեանի «Քաղաքներու կախարդանքը» մատենաշարին երրորդ հատորը՝ «Թեւաբեկ հրեշտակներու քաղաքին մէջ»։ Կ'ուզեմ տպաւորութիւններս փոխանցել եւ ոչ թէ անկարելի թուող վերլուծում մը կատարել սոյն հրաշալի գործին։

Հիմա որ իր երկու հատորները կարդացած եմ, կրնամ ըսել որ ան կը պատկանի մեր ազգի այն ընտրեալներու շարքին, որոնք իրենց պատրաստութեամբ, մտային եւ հոգեկան բարձր արժանիքներով եւ, մանաւանդ, մանրուքներէ վեր գտնուող եւ անծայրածիր ու վեհ ճախրանքներու սովոր իր մտածելակերպով կրնար գրաւել մեր պետականութեան ամենապատասխանատու պաշտօններէն մին։ Մէկ տարբերութեամբ որ ան միայն ճշմարտութիւնը պիտի ջատագովեր ու պիտի չհանդուրժեր որ սուտն ու կեղծիքը, փառասիրութիւններն ու արծաթասիրութիւնը ըլլային հոն տիրող գործելաոճը։ Ան մեծ գործ պիտի կատարեր Հայրենիքին համար եթէ նման պաշտօններ վարելու հնարաւորութիւն տրուէր սփիւռքահայերուն։



Անմիջապէս ըսեմ որ գրութիւններուն մէջ երեւցող՝ կեանքէն առնուած պատմութիւնները հաճոյքով կը կարդացուին եւ թեթեւութիւն կը բերեն այն միւս յօդուածներուն, որոնք այնքան լուրջ են, շատ յաճախ՝ ցաւոտ։ Ուրիշ յատկանիշեր են նաեւ գիտական մտքի ներկայութիւնն ու զգացական եւ բուխ զգացումներու արտայայտութիւնները։ Կը զգաս որ խորապէս մարդկային զգացումներով ապրող եւ շնչող հեղինակը պատրաստ է զոհաբերելու ամէն ինչ՝ հասնելու իր ժողովուրդի մտաւոր ու հոգեւոր կարիքներու բաւարարման։ Իր կենսագրութիւնը կը վկայէ այն գերագոյն զոհողութիւններուն մասին որոնց յանձնառու եղած է Մարգպետ Մարկոսեան։ Յատկապէս մեր ժողովուրդի

ցեղասպանութեան եւ բռնի գաղթականութեան ահաւոր փորձառութեան դիմաց կը ճենճերի իր հոգին։

Գիտեմ որ կան ուրիշ ղեկավարներ որոնք մեծ ցաւով կ'արտայայտուին մեր ողբերգութեան մասին, սակայն Մարգպետին ցաւը ուրիշ է, աւելի խոր է ու անսահման։ Գիրքին մէջ մեծ է թիւը այդ թեմաներով եւ խոր ցատումով գրուած յօդուածներուն։ Մարգպետ չ'ընդունիր




թուրք մտաւորականներու եւ թուրք պետութեան կողմէ ցեղասպանութեան պարզ ճանաչումը, այլ պարտադիր կը նկատէ բռնագրաւուած կալուածներու, ինչքի եւ ունեցուածքի հատուցումը: Այն աստէն, կը գրէ ան, հայուն զայրոյթը ձեռով մը թեթեւցած կ'ըլլայ եւ հաշտութիւնը՝ որոշ չափով կարելի: Սերժ Սարգսեանի օրերուն զուգադիպող “փրոթոքովներու” ստորագրութիւնն ու պատմաբաններու յանձնաժողովի մը կազմութիւնը (սերտելու համար թէ արդեօք ցեղասպանութիւն տեղի ունեցա՞ծ է կամ ոչ) զայն կը մղեն դիմելու փաստագրումներու՝ ջրելու համար անոնց ներկայացուցած դրոյթները:

Հայոց լեզուի բացարձակ գերակայութիւնը հայապահպանման յոյժ կարեւոր գործին մէջ՝ Մարկոսեան կը նկատէ անառարկելի: Ան խոր համոզում ունի որ կարելի չէ հայ մնալ լեզուն կորսնցնելով: Հայկական վարժարաններու հայեցի կրթութեան հիմնաքարը կը նկատէ հայերէնի իմացութիւնը: Արեւմտահայերէնի հետզհետէ անհետացումի վտանգին առկայութեամբ, ան սփիւռքահայերուն նոյնիսկ կ'առաջարկէ արեւելահայերէնը որդեգրել որպէս պետականութիւն ունեցող ժողովուրդի գլխաւոր լեզու: Հայաստան պիտի պահէ արեւելահայերէնը, սակայն ոչ արեւեանական, այլ մեսրոպեան ուղղագրութեամբ: Կը՝ հաւատայ որ մանկապարտեզէն սկսելով թէ՛ Հայաստան եւ թէ՛ սփիւռք կրնան յաջողիլ՝ առաջինը սորվեցնելով մեսրոպեան ուղղագրութիւնը, իսկ սփիւռքի մէջ՝ արեւելահայերէնը: Ան կը պահանջէ հայագիտական կարեւոր նիւթերու – ինչպէս լեզուն, պատմութիւնն ու գրականութիւնը – դասաւանդումը վստահիլ կարող եւ ազգանուէր ուսուցիչներու, որոնք հետզհետէ կը նօսրանան մեր իրականութեան մէջ: Մարգպետ կը հաւատայ, որ այս ուսուցիչները փոխարինողները կրնան ըլլալ հայաստանցի ուսուցիչները:

Ընթերցողը յաճախ կը մոռնայ որ Մարգպետ Մարկոսեան կենսաբանութեան դոկտոր է եւ գիտաշխատող, երբ ան կը գրէ Եղիշէ Զարենցի, Վահան Թեքէեանի, Պարոյր Սեւակի, Զարեհ Մելքոնեանի ու Ստեփան Ալաճաճեանի մասին: Մարգպետ գրականագիտական խոր հմտութեամբ կը վերլուծէ անոնց գրականութիւնը եւ զանոնք կը տեղաւորէ իրենց ուրոյն գրական դասակարգման մէջ:

Մարգպետին հայերէնը օժտուած է յատուկ շքեղութեամբ, հարուստ բառամթերքով, փայլուն լեզուամտածողութեամբ եւ գրագետի վարպետութեամբ:



Սուրբ Աստուածածին եկեղեցին եւ հոն որպէս դպրաց դասի անդամ-պատանի սորված շարականները Մարգպետ Մարկոսեանին հետ ապրած են բովանդակ կեանքին ընթացքին: Դարերու ընդմէջէն այսօրուայ հայ մարդուն հասած ազգային ոգին զինք դարձուցած են խորունկ հաւատացեալ՝ կառչած հայ ոգեղինութեան ամրակոշտ ամրոցին: Առանց շարականներուն տուած հզօր ուժին, ինք պիտի չկազմաւորուէր որպէս հոգեւոր ներաշխարհով հարստացած հայ մարդ:

Մարգպետին ձեռք ձգած բազմակողմանի հմտութիւնները զայն դարձուցած են այն զարգացած մտաւորականը որ ինք է: Այդ առաւելութիւնը հարստացուցած է իր գրչի վաստակը: Քրիստոֆըր տը Պլէյկի “Ըմբոստ Երկիր” հատորին իր ծանօթութիւնը պատճառ



կ'ըլլայ որ ան առաջարկէ ցեղասպանութիւնը ուրացող թուրք պետական ղեկավարներուն այցելել Անատոլիոյ Վարդիկ գիւղը եւ “Մեալա Աշըք” շրջանը ուր կրնան տեսնել թուրք դահիճներու կողմէ խողխողուած հայերու ոսկորներն ու անոնցմէ կազմուած մոխրագոյն փոշին:

Մարգպետ ծանօթ է ցեղասպանութեան հետ առնչուած միջազգային արձագանգներուն ու իր յօդուածներուն մէջ կ'ընէ մէջբերումներ՝ տեղեակ պահելով հայ ընթերցողը անոնց դրական կամ ժխտական անդրադարձներուն:

Մարկոսեան ոչ միայն բազմակողմանիօրէն զարգացած մտաւորական է, այլեւ խիզախ կեցուածքներ ունեցող հասարակական գործիչ: Իր արտայայտած տեսակէտներուն համար ոչ ոքի առջեւ պատասխանատու կը զգայ: Բաղխում կ'ունենայ հեղինակաւոր մտաւորական Վահէ Օշականի հետ որ կը պաշտպանէր այն տեսակէտը, թէ Դաշնակցութիւնը եւ այլ կուսակցութիւններ անելիք չունին Հայրենիքի մէջ քանի որ ունինք անկախ Հայաստան: Մարգպետ կը հակադրուէր այս թեզին, որու պատճառաւ անոնք բուռն վէճեր ունեցան: Մարգպետ նաեւ կը քննադատէր Դաշնակցութիւնը որ մաս կազմելով հանդերձ օրուան իշխանութիւններուն, թոյլ կու տար փտածութեան ախտի արմատացումը եւ չէր ձգտէր անոր վերացման: Կրթական մարզի մէջ կը պայքարէր հոգաբարձական մարմիններու յետամնաց տեսակէտներուն դէմ՝ միեւնոյն ատեն յաջողութեամբ օժտելով իր լուսաւոր գաղափարներու իրականացումը իր իսկ ղեկավարած կրթական հաստատութեան մէջ: Մարգպետ գրողներն ու մտաւորականները կ'ընդունէր սրտբաց, իրենց արժանիքներով, կը վերլուծէր անոնց գիրքերը ու կը մասնակցէր անոնց մեծարման հանդիսութիւններուն: Անխտրական ոգի կը դրսեւորէր բոլորին հանդէպ, եւ այդ կը հանդիսանար իր բարձր հոգեկան արժանիքը:

500 էջերէ կազմուած այս հատորը կարելի չէ ընթերցել միակտուր: Հարկաւոր է խմբել էջերը նոյնանման նիւթերու շուրջ եւ ուսումնասիրել զանոնք մանրամասնօրէն, տեսնել թէ ինչ են Մարգպետ Մարկոսեանի բերած նորութիւնները տարբեր նիւթերու ներկայացման մէջ, քանի որ շատ իւրայատուկ են հեղինակին նորարարական մօտեցումները եւ հարկաւոր է սերտել զանոնք ուշի ուշով: Կարելի է երբեմն չընդունիլ իր տեսակէտները, բայց կարելի չէ չյարգել զանոնք: Դիւրին ընթերցանութիւն չի պարգեւեր Մարգպետ. ընթերցողը պարտի լրջութեամբ հետեւիլ անոր մտքի առկայծումներուն եւ որոշ ընդմիջումէ վերջ կրկին ձեռք առնել հատորը եւ խորանալ անոր մէջ:

Բարի ընթերցում բոլորիս:

* * * * *

Այլ գրութիւններ Մարգպետ Մարկոսեանի վերաբերեալ
[Վաղեմի եւ մօտիկ բարեկամ՝ Մարգպետ Մարկոսեանի «Քաղաքներու կախարդանքը»](#)
[Երկու տեսլապաշտ հայեր](#)
[Time for Diaspora to Blow Away the Cobwebs](#)



Աղբիւր՝ ԳԵՂԱՐԴ

ԵՐԱԶԻ ԵՒ ԼՈՅՍԻ ՓՆՏՈՏՈՒՔ

Գեորգ Պետիկեան

Նորութիւն մը չէ: Սփիւռքեան մեր գրականութիւնը սկսած է ամայանալ, կամ կամաց-կամաց կ'ամայանայ: Մեր մօտ գրական երեսակայութեամբ զբաղողներն ալ կարծես լուռ են եւ նոյնիսկ շատեր կը հեռանան: Միւս կողմէ արդու կը գացած հարցեր մեզ արդէն կլանած են: Մեր ժամերը կը իլեն: Մեզ կը «խաղցնեն»: Կը զբաղեցնեն: Մեզ ուժասպառ կը դարձնեն: Մէյ մը ձեր շուրջը նայեցէ՛ք:



Այս բոլորին իբրեւ հարագատ արդիւնք, մենք մեր մէջ կը սրողդիւնք ու մենք մեր մէջ ալ կը յուսահատիւնք: Լուծում կը փնտռենք: Լուծում չկայ, կըսենք: Կը կրկնենք: Որովհետեւ՝ սփիւռքեան մեր շուրջը, լուծում ապահովող զարկերակ չկայ: Չունինք: Չենք տեսներ: Նաեւ գրեթէ գրական մթնոլորտ ալ չկայ: Գրական տեսիլքը կայ եւ չկայ: Երբեմն գրական փորձի մը ստուերը կը նշմարուի:

Հաւաքական կամքի պակասն ալ զգալի է, կենսունակութեան կողքին:

Այս ընթացքով, կը կարծեմ որ օր մը Սփիւռքներու տարածքին, անձայն եւ անաղմուկ, սուսիկ-փուսիկ պիտի թաղենք մեր լեզուն եւ անոր հետ մեր մշակոյթը եւ ապա՝ ազգը:

Ինչո՞ւ սակայն այս տողերը, եւ ինձի հարց կու տամ անկեղծօրէն: Ինչո՞ւ այսքան յոռետեսութիւն, երբ տակաւին հոս-հոն մեր գրականութեան եւ պատմութեան սայլը առաջ քշողներ կան: Բացառիկներ: Կերեւին: Տակաւին հորիզոնին վրայ, հայ մտքի դրօշարաշարը յամառօրէն շարունակողներ կը տեսնուին, կը նշմարուին: Հազար պատիւ:

Հաւանաբար, կը պատճառաբանէ միտքս, այս բոլորը բաւարար չեն, իբրեւ մեր մշակոյթի գոյութիւնը ապահովող էական ազդակ: Գիտենք եւ լաւատեղեակ ենք, որ հայ գրականութեամբ ապրիլը կամ մեռնիլը հայ գրագէտէն կախում ունի: Տեսանելի է, թէ ինչպէ՞ս տակաւ կը նուազի հայախօսներու թիւը, հայերէն կարդացողներու եւ գրողներու թիւին հետ միատեղ: Նաեւ քաջատեղեակ ենք ու ամէն անգամ ալ կրկնած ենք, որ լեզու մը ողջ է. կը մնայ, կ'ապրի, եթէ զայն խօսողներ կան: Ուստի, կը կարծեմ ամէն բանի պէտք ունինք, բացի անտարբերութենէն: Նման խօսքերուս հետ նաեւ ձայնս ալ խառնուած է, իր հանդարտ անկեղծութեամբ:

Դիւրին բան չէ հայ ըլլալը, միշտ կրկնած եմ, որովհետեւ կեանքը իբրեւ հաւատք եւ հաւաքական ապրում հայուն համար ազգային է: Այս օրերուն կարծես չափանիշներն ալ խախտած են եւ սկզբունքները՝ արժէքազրկուած: Ուստի մտահոգութիւն է օրուան «արեւուն» պակասը:



Բայց պէտք է ըսեմ, որ անդին կայ մետալին միւս կողմն ալ:

Այսպէս... Ժամանակի մեր վազքը, մեզ գրեթէ կը գրկէ մեր շուրջը տիրող զանազան երեւոյթներէն, մեր շրջապատէն ներս տեղի ունեցող անգոյն եւ գունաւոր անցուղարձերէն, որոնց իբրեւ արդիւնք եւ հետեւանք, այսպէս կոչուած, արժանաւոր մարդոց ու նոյնիսկ մեր մտերիմներուն յաճախ հեռուէն կը խօսինք, հեռուէն կը ծանօթանանք եւ կը բաժնենք մեր ուրախութիւնն ու տխրութիւնը եւ մեր վիշտն ու յաջողութիւնը:

Մէկ խօսքով, մեր կեանքի շատ մը իրադարձութիւններուն կամ հանդիպած հետաքրքիր անձնաւորութիւններուն, ակամայ վերարժեւորում կը կատարենք տարիներու հեռաւորութիւններէն:

Ի՞նչ կրնանք ընել, սփիւռք կ'ապրինք: Այս այսպէս է ըսելով, մենք մեզ կը համոզենք, որովհետեւ ցարդ չկայ, գոյութիւն չունի նման մարդոց ո՛չ միայն կապուելու հնարաւորութիւնները, այլ նաեւ ստեղծողն ու մթնոլորտը: Հաւանաբար այսպէս է ժառանգը: Հաւանաբար չգրուած օրէնք: Իրարմէ հեռու եւ անջատ «կը շնչենք»: Կարծես իւրաքանչիւր մտածող միտք իր շրջապատէն ներս փակուած, խարսխուած մնացած է, եւ կամ կը սիրէ այդպէս մնալ: Յաճախ ալ անտարբեր: Մարդ չուզեր շարժիլ:

Ուստի ի՞նչ պէտք է ընել: Ինչպէ՞ս կապել գրողները իրարու հետ եւ աւելին՝ մտաւորականը իր մշակութասէր հասարակութեան հետ: Ո՞վ պիտի առնէ առաջինն քայլը: Ո՞վ պիտի յաղթահարէ փոխադարձ խորթութեան այս շերտը: Ո՞վ պիտի ստեղծէ կլիման: Կը կարծեմ, որ այս բոլորը մեզմէ կախեալ է: Մեր բոլորէն: Մենք կը խուսափինք պատմութեան մէջ դեր ստանձնելու մեր պարտականութիւններէն: Ահա մտահոգութիւն մը, օրուան արեւուն պակասին նման: Նաեւ կը կարծեմ, որ առաւելաբար կը տառապինք մթնոլորտի պակասէն եւ մթնոլորտ ստեղծելու ընդունակ տարրերու սակաւութենէն, ներքին հաւատքէն, նման աշխատանքներու իրագործման եւ յաջողութեան ծառայելու տենդէն, պատկանելիութեան հուրէն: Որովհետեւ... Իբրեւ հայ գրող, մտաւորական եւ կամ պարզ անհատ, չունինք որոշ եւ յստակ ռազմավարութիւն մը, որ ծնունդ առած ըլլայ մեր ներկայ կեանքի նոր պայմաններու աշխատանքի եղանակէն: Ըսի չունինք եւ թերեւս ալ ունինք, բայց տեղեակ չենք: Չենք գիտեր որո՞ւ մօտ է կամ ո՞ւր թագնուած է այս «անիծեալը»:

Բայց եւ այնպէս, ժամանակն է, որ ունենանք ապագայակերտ կեցուածք մը, անկախ մեր ազգային եւ քաղաքական գոյներէն: Ստիպուած ենք: Պայման է օրուան յատուկ պահանջներով ծրագրել եւ գործել:

Հարուստ մշակոյթ ժառանգած ժողովուրդ ենք: Գիտենք: Կը պոռանք: Կը հպարտանանք: Մակայն զայն արժաւորել պէտք է գիտնանք: Իսկ եթէ հայ միտքն ու ջիղը լծուած մնան ստեղծումի եւ կերտումի, այնքան աւելի ապահովուած կ'ըլլանք մեր մշակոյթի գոյատեւումն ու բարգաւաճումը: Իւրաքանչիւրս, մեր կեանքի իր բեռը շալկած, քալելով կամ վազելով, ցաւի աշխարհ կ'երթանք, առանց մեր կամքին, հետեւելով մեր ճակատագրին: Այս բոլորը տեսանելի են ու նոյնքան ալ՝ խղճալի եւ թունաւոր: Մակայն եւ այնպէս... կայ եւ կը մնայ մխիթարիչ պարագան ու այդ ալ՝ երազի, գեղեցկութեան եւ յոյսի փնտռութիւնը:

bedig43@aol.com

ԸՆԹԵՐՑՈՂԻ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ. ԼԵՒՈՆ ՇԱՌՈՅԵԱՆԻ «ՀԵՐԿ ԵՒ ԲԵՐՔ», ՀԱԼԷՊ 2024

16/1/2024

ՆԱՐԵՎ ԱՐՔ. ԱԼԵԷՄԷՁԵԱՆ

Նոր տարուան առթիւ լաւ նուէր մը ստացայ «Հերկ եւ բերք» գիրքի հեղինակէն, որուն հետ երկար տարիներու մտերմութիւն ունիմ: Գիրքը միշտ ալ լաւ եւ հաւատարիմ ընկեր մը նկատած եմ: Հալէպի եւ Անթիլիասի մէջ Լեւոնին հետ յաճախ կը զրուցենք այն բոլոր հարցերուն մասին, որոնք մեր հաւաքական մտահոգութիւններուն մաս կը կազմեն եւ առհասարակ այս հատորին մէջ տեղ գտած են:



Երբ Շառոյեան «Հերկ եւ բերք»-ը մակագրեց եւ ինծի՝ իր բնորոշումով «գիրի եւ գրականութեան ուղեւորին» տուաւ, հակառակ ակնարումներուն աչքերս խնայողութեամբ գործածելու թելադրութեան՝ անմիջապէս սկսայ նախասիրած գրութիւններս կարդալ եւ մայրավանքի սեղանատան մէջ իրեն ըսի, որ գիրքը ձեռքէս չեմ յաջողիր ձգել եւ աչքերս ցաւցնելու գնով կը կարդամ զայն: «Այս ի՛նչ փորձանք փաթեցիր գլխուս», եզրակացուցի, որուն պատասխանեց իրեն յատուկ ժպիտով:

Հեղինակին «Երկու խօսք»-էն ետք, Պետրոս Հաճեան «Պարզատոմար մը՝ այս հատորը» վերնագիրով դիպուկ յառաջաբան մը ունի, որ համապարփակ գրախօսական մըն է: Ես հոս պարզապէս ընթերցողի տպաւորութիւններս թուղթին պիտի յանձնեմ՝ առանց սպառիչ ըլլալու յաւակնութիւնը ունենալու:

Գիրքին նիւթերուն բազմազանութիւնը ցոյց կու տայ հեղինակին պրպտումներուն լայն հորիզոնը: Հայ եկեղեցի, պատմութիւն, բանասիրութիւն, գրականութիւն, մամուլ, սուրիահայութիւն, անհետացած դէմքեր, յուշեր՝ թելադրական ենթախորագիրներու եւ վերնագիրներու տակ կը տողանցեն գիրքին 505 էջերուն մէջ:

Շառոյեանի լեզուն հանրամատչելի ու հեզասահ է եւ ոճը՝ պարզ ու դիւրահաղորդ: Միտողական ընթերցողը չի չարչարուիր զինք հասկնալու համար: Շառոյեան բոլորին համար կը գրէ եւ ոչ թէ իր լաւ հայերէն գիտնալը ցուցադրութեան կը հանէ: Ամէն մարդ ի՛ր հետաքրքրութիւնը գոհացնող նիւթը հաճոյքով կ'ըմբռնին այս գիրկը կարդալով:



Իւրաքանչիւր գրութիւն իւրայատկութիւն մը ունի եւ նորութիւն կը բերէ: Նոր տեղեկութիւններ կը ստանանք, անձանօթ անձերու կը հանդիպինք, մեր մոռցած դէպքերն ու դէմքերը կը վերյիշենք, եւ մեր միտքին ու հոգիին մէջ մի՛ շտ անջնջելի հետք մը կը մնայ այս բոլորէն:

Հատորին գրութիւններուն ուղեծիրով՝ կը մղուինք մեզի փոխանցուածներուն մասին (անձնանուն, տեղանուն, թուական, գիրքի անուն, թերթի անուն եւ այլն) աւելի՛ն գիտնալու, երբ մանաւանդ հեղինակը կ'օգնէ մեզի էջատակի ծանօթութիւններով եւ այլապէս՝ մեր անվիաստ պեղումը շարունակելու: Մակայն եթէ ժամանակ չունինք աւելի՛ն գիտնալու, սեղմ էջերով մեզի տրուածը կրնայ բաւարարել մեզ՝ գոնէ անհրաժեշտ տեղեկութիւնը քաղելու տուեալ նիւթին մասին:

«Հերկ եւ բերք»-ը Շառոյեանին ցանքն ու քաղը չէ միայն, այլ 1990-ականներէն մինչեւ այսօր մեր հաւաքական կեանքին ցոլացումն է՝ իր բազմերես իրագործումներով, ձախողութիւններով, տագնապներով, ձգտումներով եւ մասամբք նոցին. ան ժամանակակից հայոց պատմութեան քանի մը երեսակները կը հրամցնէ մեզի: Հոս միայն գրականութիւն չկայ, այլ կայ առատ եւ վաւերական տեղեկագրութիւն՝ պատմութեան համար եւս:

Իւրաքանչիւր գրութիւն յազեցած է լաւատեսական մօտեցումով եւ դրական շունչով: Հեղինակը իր նշմարները չէ գրած նետ արձակելու, ձաղկելու, հարթելու եւ «ես աւելին եւ աւելի լաւը գիտեմ»-ի հոգեբանութեամբ, այլ ազնիւ մատնանշումներով, շեշտակի քաղաքավարութեամբ ու տոկուն տուեալներով կը սրբագրէ վրէպները՝ ի շահ հայ մշակոյթին, եւ միշտ ալ գնահատական խօսքեր կ'արձանագրէ՝ աշխատատուն ու աշխատանքը ընդգծելով:

Շառոյեան մանաւանդ մեր նոր սերունդին կը թելադրէ, որ ինքնաշխատութեամբ մարդ կրնայ ինքզինք կերտել: «Հերկ եւ բերք»-ի էջ 509-ը մեզի կը բերէ հեղինակին կենսագրականը, ուր կը կարդանք. «Դեռ Ճեմարանի գրասեղաններուն վրայ՝ թղթակցութիւններով սկսած է աշխատակցիլ Պուէնոս Այրէսի «Արմենիա», Փարիզի «Յառաջ» եւ Պոլսոյ «Մարմարա» օրաթերթերուն», եւ բարեբախտաբար ահաւասիկ հայ մամուլին մէջ ցրուած գրութիւններ այս հատորով գիրքի կը վերածուին ու մեզի կը մատուցուին՝ իւրաքանչիւր գրութեան տակ նշելով լոյս տեսած տարեթիւր եւ յաճախ նաեւ՝ ամիսը: Երանի նաեւ արձանագրուէր տուեալ թերթին անունը:



Վերջապէս, հասնելով մինչեւ հատորին լոյս ընծայումի տարին՝ 2024 եւ մանաւանդ Սուրիոյ ընկերա-քաղաքական կայուն վիճակը ծանօթէն խախտած պատերազմն ու կեանքի տարրական միջոցներու հայթայթումն իսկ դժուարացնող

յամեցող տագնապը, ուրախութեամբ կը տեսնենք, որ Շառոյեանի բաբախուն հայ կեանքին հետ հաղորդակից մնալու եւ իր քննական հայեացքը անոր վրայ սեւեռելու ճիգը կը մնայ առաձիգ: Այսօր, երբ Հալէպը ելեկտրականութեան, ջեռուցումի եւ այլ կենսամթերքներու ամէնօրեայ գրեթէ չգոյութիւնը կ'ապրի, մեր եղբայրներն ու քոյրերը հոգեւոր ու իմացական հացով կը սնանին, հայերէն գիրքեր, ի շարս անոնց՝ «Հերկ եւ բերք», աշխարհ կու գան՝ Շառոյեանին եւ մատի վրայ համրուող իր նմաններուն պատնէշի վրայ մնալու քաջարի կեցուածքին շնորհիւ:

Այս բոլորը հաստատելու համար երկու գրութիւն աւելի մօտէն ներկայացնելը եւ անոնցմէ մէջբերումներ կատարելը աւելորդ չեմ համարեր:

Կարդացած առաջին գրութիւնս «Պետրոս (նախկին վարդապետ) Պերպերեան մը կար...»-ն էր, որովհետեւ յիսուն տարի ետ երթալով՝ վերջիջեցի, թէ հայր Պետրոս դպրեվանեցիներու հետ վոլիպոլ կը խաղար, եւ առաւօտ մըն ալ, երբ ժամերգութեան պիտի մտնէինք, Անթիլիասի մայրավանքի դարպասին մօտ, զինք, փոխան պարեգօտի, եկեղեցականի օձիքէ շապիկով եւ աշխարհականի բաճկոնով տեսանք. ինքնաշարժ մտաւ եւ գնաց: Ըսին, որ վեհափառը զինք Ամերիկա դրկեց հովուական ծառայութեան համար: Աւելի ուշ իմացանք, որ՝ «Պետրոս (նախկին վարդապետ) Պերպերեան մը կար...»: Սակայն երկու էջի վրայ տարածուած այս գրութիւնը հայր Պետրոսէն շատ աւելի անդին կ'երթայ, երբ ճեզիրէ եւ Գամիշլի, Մոնթեպելլօ եւ Լոս Անճելըս, Հալէպ եւ Նոր Գիւղ, Լանդըր Եախուպ, Բարթըլի Միսաք եւ Թավիլ Եուսուֆ, Ազգ. Զուարեան վարժարան, Քարէն Եփփէ ճեմարան եւ Անթիլիասի դպրեվանք անուններուն կը հանդիպինք, եւ, հեղինակին իսկ բնորոշումով, մեր դիմաց կ'ուրուագծուի կարգաթող վարդապետը անդրանցող «Կար ու չկար»-ի հարազատ պատմութիւն մը...» (էջ 366):

Կ'անցնիմ «Կեանքի կեռմաններով» եւ... գրականութեան անունով» (Թ. Թորանեանի «Պատմութիւններ»-ու նորատիպ ժողովածուին առթիւ, Հալէպ, 1999) գրութեան, ուր կը յայտնուի անաչառ գրաքննադատ Շառոյեանը: Ան նախ, որպէս շրջագիծ, կը գրէ. «Կեանքի կեռմաններով»-ը ... մամուլի տակէն դուրս եկած է տրորուած վիճակով, յուսախաբ ընելու համար ընթերցողը՝ էջերու ամբողջ երկայնքին...» (էջ 309): Ապա կը հարցադրէ. «Իսկ ի՞նչ է



ներկայացուածը «Կեանքի կեռմաններով» ժողովածուին մէջ» (էջ 310), եւ իր քաղած օրինակներով, «ի բերանոյ քումմէ դատեցայց»-ի սկզբունքին հաւատարմութեամբ, կը լուսաբանէ, թէ գիրքին վաստակեալ հեղինակը ո՛ր յաջողած է եւ ո՛ր ձախողած: Վերջապէս, չորս կէտով ուղղակի ընդգծումներ կը կատարէ ըսելէ ետք. «Կեանքի կեռմաններով»-ին գրանկարները ունին խորքի եւ ձեւի քանի մը ընդհանուր գիծեր եւս, որոնց հարկ է անդրադառնալ առանձին» (էջ 312): Կ'եզրակացնէ, որ «Կեանքի կեռմաններով»-ին մասին գրած է, որովհետեւ հարկ զգացած է «արտայայտուիլ սրտբացօրէն» (էջ 314):

«Հերկ եւ բերք»-ը լրիւ ըմբռնելու գրգիռ մը համարեցէք տպաւորութիւններու այս փունջը: Ճշմարիտ վայելքը «Հերկ եւ բերք»-ը կարդալն է հեղինակին հետ հայ մշակոյթի ներաշխարհը թափանցելու եւ հայ գրականութեան անդաստանի ածուները այցելելու համար:

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Անկեղծութիւնը ինքնին բարոյական հզօր ոյժ ունի, ան մթնոլորտ կը ստեղծէ: Անկեղծ մարդուն անկեղծ խօսքին ու վարուելակերպին դիմաց, կեղծիքն ու սուտը կարծէք կը նահանջեն, կը պարտուին ժամ առ ժամ, դիմակները վար կ'առնուին, մարդը կը դառնայ թափանցիկ՝ իր խոհերով եւ ապրումներով, քանզի անկեղծութիւնը իր վարակիչ ոյժով կը փոխանցուի մարդէ-մարդ, սիրտէ-սիրտ: Իսկ կա՛յ աւելի թանկ բան, քան երբ համայնքին, ազգին ու երկրին հոգեբարոյական մթնոլորտը կը շնչէ անկեղծութեամբ, մաքրութեամբ, սուտի, կեղծիքի աղտերէն ու ախտերէն ձերբազատ:

.....

Քաւութեան նոխազ փնտռելը շատ է տարածուած հայ կեանքին մէջ: Ամէն անգամ որ ձախողութեան մը դէմ յանդիման գանք, անոր պատճառը հագուադէպ է որ փնտռենք մեր գործած ի՛նչ-ի՛նչ սխալներուն կամ թերացումներուն մէջ...Պատճառը շուտով կը գտնենք այսինչին կամ այնինչին մէջ, անոր թոյլ տուած մէկ ոչ-ճիշդ արարքին կամ վարքագիծին մէջ եւ կը սկսի շարքը մեղադրականներու կամ ամբաստանութեանց...: Ուրիշը քաւութեան



նոխագ դարձնելը՝ սեփական պատասխանատուութենէ խուսափիլ կը նշանակէ էապէս, ինչ որ միայն ինքնախաբէութեան կրնայ առաջնորդել մեզ...

.....

ՄԷՐԸ ինքնաբուխ է, սրտաբուխ, ան չի ճանչնար պատուէր ու հաշիւ: Մէրը անսակարկ է, ինքնամատոյց, կարելի չէ զայն գնել կամ վաճառել, կարելի չէ զայն պարտադրել, կարելի չէ զայն մարել: Մէրը աստուածային է, սէրը կեանքի գերագոյն հրաշքն է, անոր բուն բովանդակութիւնը:

.....

Ոչ մէկ պատիւ ու պաշտօն աւելի բարձր կրնայ ըլլալ, քան ճշմարտութիւնը խօսելու եւ գրելու նպատակը սրբազան: Ոչ մէկ նիւթական թէ այլ վարձատրութիւն կրնայ համեմատուիլ՝ ազատ մտքին ու ազատ խօսքին հետ: Ոչ մէկ պարգև, դիրք կամ այրոտ կրնայ ըլլալ համարժէք՝ արթուն խիղճին եւ արդարութեան ձայնին հետ...Առաջինները խաբուսիկ են եւ գնայուն, երկրորդները՝ մնայուն եւ յաւերժական արժէքներ, որոնք կը սահմանեն կեանքի ճշմարիտ որակը:

.....

ՀՈԳԻՆ հանդերձանք, զարդարանք չի սիրեր, ան ԼՈՅՄԻ նման պարզ է, թափանցիկ, գեղեցիկ ինքն իր մէջ եւ ազատ, անսահմանափակ, անպարագիծ...: Մարդը, սակայն, յաճախ կ'ուզէ զայն շնչահեղձ ընել ցուցամոլական եւ փառամոլիկ պճնագարդերով, կ'ուզէ անոր ազատութիւնը կաշկանդել՝ պաշտօնի, դիրքի, ընչաքաղցութեան ճիրաններուն մէջ...: Թող ՀՈԳԻՆ սաւառնի ազատ երկինքն ի վեր, ճախրէ տիեզերքի անհունութեան մէջ եւ ցոլայ իր լուսափայլ պարզութեամբ, ինքնեկ շողարձակումով: ՀՈԳԻՆ ՄԱՐԴ ԷԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԼՈՅՄՆ Է:

.....

Մարդկային հոգին կը փնտռէ ճշմարտութեան Լոյսը ի սկզբանէ...Սա է իր բուն առաքելութիւնը: Մարդ էակը հաւատարիմ կը մնայ այդ առաքելութեան, եթէ չեղծանուի անոր հոգին, եթէ չմոլորուի ան՝ նիւթապաշտութեան, շահամոլութեան, փառամոլութեան, գոռոզամտութեան մութ բաւիղներուն մէջ, եթէ մնայ ան իր նախաստեղծ մաքրութեամբ, անարատութեամբ...Ճշմարտութեան լոյսը անսայթաք փնտռելով է որ տակաւ կ'ազնուանայ, կը բարձրանայ, կը վեհանայ եւ կ'ազատագրուի մարդ էակը եւ քայլ առ քայլ կ'իրագործէ իր բուն առաքելութիւնը, յաղթահարելով ամեն փորձութիւն, ամեն խոչընդոտ, ամեն դժուարութիւն:

.....

Եթէ բարին չկրես քու հոգւոյդ մէջ, ինչպէ՞ս կրնաս զայն գնահատել այլոց մէջ...Եթէ գեղեցիկը չկրես քու հոգւոյդ մէջ, ինչպէ՞ս կրնաս զայն գնահատել այլոց մէջ..., քանզի միշտ ալ քու գնահատած լուսաւորը ցոլքն է այն լոյսին գոր կը կրես քու հոգւոյդ մէջ:

.....



ԱՐԺԱՆԱՊԱՏՈՒԹԻՒՆԸ էական է անհատի թէ ժողովուրդի համար...Եթէ գուրկ ըլլաս այս կարեւորագոյն որակէն, յայնժամ կ'ոտնակոխուիս որպէս անձ եւ հաւաքականութիւն, կը ստրկանաս այլոց կամքին, կը դառնաս կրաւորական գործիք եւ ոչ՝ արժանավայել ու գործօն դերակատար, սեփական ճակատագրիդ կերտումին մէջ....: Կրաւորական վարքագիծը մեծապէս կը սատարէ որ արտաքին ազդակներ ձեւաւորեն մտածողութիւնդ, կամքդ, արարքդ...: Կրաւորականութենէ դուրս գալու առաջին քայլը անկախ մտածել սորվիլն է:

.....

Ես-ի գոռոզութիւնը սխալ հասկցուած արժանապատուութիւն է...Առաջինը շատ անգամ քաղքենիացած փուճ բարքերով կը սնանի, կը բքի, կը հպարտանայ ի ցոյց իր նեղ ես-ին, մինչ երկրորդը մարդ էակի բուն արժանաւորութիւնը կը հաստատէ՝ հաւատարիմ մնալով զայն բնութագրող բարոյական, հոգեմտաւոր արժէքներուն եւ կը գերադասէ իր նեղ ես-ի ցանկութիւնները զոհաբերել յանուն իր մարդկային բարձր արժանաւորութեան, ճշմարիտ արժանապատուութեան:

.....

Ինքնաճանաչման ընթացքը համակ կեանքի մը ուղին է, որ վերջ չունի, քանզի ամէն օր բան մը կը յայտնաբերենք մեր մարդկային եւ ազգային էութենէն: Գիտակցութեան նոր կայծ մը, զգացումի նոր թրթիռ մը, հոգիի նոր թոխչք մը եւ այսպէս վերստին ու վերստին կը ճանչնանք մենք զմեզ, կը վերանորոգուինք եւ կը հասուննանք ալ ներքնապէս:

Անձիւր ու անպարագիծ է ինքնաճանաչման ընթացքը, որուն համար անչափ էական է բաց պահել մտքի, հոգիի եւ սրտի դռները:

.....

ԻՐԱԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ...Յատուկ ճիգ կը պահանջէ յաղթահարելու համար դուն քեզ, եւ անազնութեան դիմաց շարունակել ազնիւ ըլլալ, անարդարութեան դէմ՝ արդար ու իրաւ, ստորնութեան դէմ՝ վեհոգի ու վեհսիրտ, հայիոյախօսութեանց չպատասխանել, միշտ քաղաքակիրթ լեզուով ու բառապաշարով բանավիճիլ, երբեք չպղծել մեր ՄԵԾԱՍՔԱՆՉԸ, գուրգուրալ անոր մէն մի բառին վրայ...Այդ կը պահանջէ սակայն արժանապատուութիւնդ, ներքին բարոյական ազատութիւնդ: Մա չէ՞ վերջապէս բուն ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ, երբ վերջինը չի պայմանաւորուիր այլոց վերաբերմունքով, վարուելակերպով ու վարուեցողութեամբ...Կրնա՞յ մարդ էակը ազատ ըլլալ, եթէ անիրաւութեան պատասխանէ անիրաւութեամբ, անկրթութեան՝ անկրթութեամբ, վատութեան՝ վատութեամբ...Ինքզինք ըլլալ անպայմանականօրէն...Մա է, ըստ իս, իրաւ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ:

.....

Մամուլին շատ մեծ դեր է վերապահուած, ի մասնաւորի այս ճգնաժամային օրերուն, երբ այնքա՛ն շատ են մոլորեցնող կարծիքները, որոնք վստահաբար ՊԱՏՈՒԻՐԱՏՈՒ ունին, իսկ անոնց հեղինակները՝ ՎԱՐՉՔ: Կ'արժէ՞, սակայ՛ն, հոգին վաճառել երեսուն խեղճ արծաթի, երբ անդին ՀԱՅՐԵՆԻՔԻ գոյութիւնը կրնայ վտանգուիլ քու մէկ արտասանած խօսքով, տողով, բառով...Նման պարագաներուն է, որ այնքա՛ն դիպուկ կը հնչէ Գեորգ Էմինի խօսքը՝



«Գրիչդ զգոյշ գործածիր, երբ խառն է դարը, Նոյն արճիճից են ձուլւում գնդակն ու տառը»...ԻՄԿ ԴԱՐԸ, ՏԱՐԻՆ, ԺԱՄԱՆԱԿԸ ԱԻԵԼԻ ՔԱՆ ԽԱՌՆ ԵՆ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Աշխատանքն է ինքնամոռաց
Երջանկութեան հրաշք բանալին,
Զոր կը փնտռենք սին վայելքին
Եւ կը մնանք պատրանաթափ...

.....

Երջանկութիւնդ կառուցէ
Կամքի՞ դ վրայ եւ ոգիի՞ դ,
Անոնց կրնաս վերահսկել
Ու տէ՛ր դառնալ ճակատագրիդ...

.....

Խիղճդ մի՛ ծախեր՝ ի՛նչ գին ալ որ տան,
Ան քեզ ուղեցոյց մըն է հոգեթանկ,
Աստուծոյ ձայնը որ միշտ պիտ' հնչէ
Ու քեզ ետ բերէ սայթաքումներէդ

.....

Մանրութներէն վեր բարձրացիր
Որ կարենաս ազատ շնչել,
Հայեացքդ վառ հորիզոնին
Արշալոյսին վարդահեղեղ...

.....



Կեանքս ըրի լուսարձակ ճշմարտութեան խուզարկու
Եւ ընթացքին այրեցայ կրքակներովն անոր լոյս,
Եթէ կրցայ գէթ նշոյլ մը ճառագայթ տարածել,
Գոհ կը մեկնիմ աշխարհէն, հոգիս խաղաղ ու թեթեւ:

.....

Պիտի կառչիս երագիդ, վարդահեղէ՛ղ, սիրահե՛ղ,
Մթութեան մէջ ու լոյսի, բոցին անոր հրակէ՛զ,
Անկէ լոյսեր պիտ'քաղես, կամք աննկո՛ւն ու ոզի՛
Եւ թեւերդ պիտ'պարզես ջահին անոր լուսակիր...

.....

Շատ եմ տեսեր հոգուով աղքատ
Գերհարուստներ՝ նիւթով հարբած,
Ինչպէս նաեւ՝ ինչքով աղքատ,
Բայց հոգիով հարուստ անբաւ:

.....

Հակառակ բիր-բիր դաւերուն,
Դեռ հաւատամ մարդ էակին,
Գուցէ շատ եմ ես միամիտ,
Անուղղելի սիրտով մաքուր...

.....

Այս դարուն մէջ լա՛ւր մտնով պիտի փնտռես,
Ու երբ գտնես, պիտ' փայփայես որ չկորի.
Անապատին ծաղիկին պէս պիտ' խընամես,
Որ մէկն դառնայ տասը, հազար, բիրապատիկ...

.....

Դրամն է չաստուածը նոր դարի,
Չափանիշը լաւի, վատի,
Տընօրինէ վարքն ու բարքը,
Կենսակերպն ու արժէքները:

.....

Մի՛ տարուիր դուն սին գովեստով,
Խօսքով շռայլ, ականջ շոյող,
Երբ պահը գայ ճշմարտութեան,
Ի յայտ կու գայ իրաւը պարզ...

.....

Շահ ու հաշիւ չփնտռեցի,
Շիտակին լոկ գլուխ ծռեցի,
Շահերս բիր տանուլ տուի
Ճշմարիտին փայլով արբշիռ:



.....

Թէ պիտ' ապրիս, պիտի ճախրես,
Հոգւոյդ թելեր պիտ' հագցընես,
Համը երկնին պիտ' ճաշակես,
Որ բարձրանաս եւ բարձրացնես:

.....

Աշխատանքն է ինքնամոռաց
Երջանկութեան հրաշք բանալին,
Զոր կը փնտռենք սին վայելքին
Եւ կը մնանք պատրանաթափ...

.....

Ամբողջ կեանք մը մենք կը փնտռենք
Ճշմարտութեան հատիկն լուսէ,
Որ կայ մեր մէջ, բնութեան մէջ,
Բայց չենք տեսներ, քանզի կոյր ենք:

.....

Կեանքի լեղին պիտ' ճաշակես
Որ դաս քաղես իմաստութեան,
Դաւ, խարդաւանք պիտի տեսնես
Որ գնահատես սիրտը արդար...

.....

Թէ կարենաս արհաբար
Ճշմարտութիւնը ընդունիլ,
Թէկուզ՝ ըլլայ ան քեզ ի վնաս,
Յայնժամ Մարդ ես, լաւ իմացիր:

.....

Միրոյ քաղցէն են թշնամանքները,
Միրոյ քաղցէն են պատերազմները,
Եւ ամէն չարիք իր արմատն ունի
Միրոյ պակասին մէջ ու ծարաին...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ